

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՆԱԻՐԱ ՊՈԴՈՍՅԱՆ
ՍՈՆԱ ԿԱՐԱՊՈԴՈՍՅԱՆ

ԹՈՒՐՔԻԱՅԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԹՈՒՐՔԱԿԱՆ
ՍՓՅՈՒՌՔԻ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԱԿԱՀԱՅԿԱԿԱՆ
ՈՒՂՂՎԱԾՈՒԹՅՈՒՆԸ

ԵՐԵՎԱՆ
ԵՊՀ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
2016

ՀՏԴ 93/94:323
ԳՄԴ 63.3+66.3
Պ 797

*Հրատարակության է երաշխավորվել
ԵՊՀ արևելագիտության ֆակուլտետի
գիտական խորհրդի կողմից*

*Խմբագիր՝ Բ.Գ.Թ., դոցենտ Ռուբեն Մելքոնյան
Գիրքը հրատարակվում է
ՀՀ Սփյուռքի նախարարության դրամաշնորհով*

ՊՈՂՈՍՅԱՆ ՆԱԻՐԱ

Պ 797 ԹՈՒՐԲԻԱՅԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԹՈՒՐԲԱԿԱՆ
ՍՓՅՈՒՌԻ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԱԿԱՀԱՅԿԱԿԱՆ
ՈՒՂՂՎԱԾՈՒԹՅՈՒՆԸ/ Ն. ՊՈՂՈՍՅԱՆ, Ս.
ԿԱՐԱՊՈՂՈՍՅԱՆ.- ԵՐ.: ԵՊՀ ՀՐԱՏ., 2016.- 146 էջ:

Գրքում ներկայացված է Արևմտյան Եվրոպայում թուրքական համայնքների ձևավորման պատմությունն ու ժամանակակից դրությունը: Անդրադարձ է կատարված Եվրոպայում թուրքական համայնքների նկատմամբ վերջին տարիներին Թուրքիայի Հանրապետության քաղաքականությանը և այդ համատեքստում կառավարությանը կից գործող Արտասահմանում բնակվող թուրքերի և բարեկամ հասարակությունների վարչության գործունեությանը՝ հատկապես կարևորելով դրա հակահայ ուղղվածությունը:

ՀՏԴ 93/94:323
ԳՄԴ 63.3+66.3

ISBN 978-5-8084-2068-7

© ԵՊՀ հրատ., 2016

© Ն. Պողոսյան, Ս. Կարապողոսյան, 2016

ԹՈՒՐԲԱԿԱՆ ՍՓՅՈՒՌՔԻ ՁԵՎԱՎՈՐՈՒՄԸ. ՀԱՄԱՌՈՏ ԱԿՆԱՐԿ

Ինտենսիվ միգրացիաներով և վերաբնակեցման մշակութային-տեղեկատվական շփումների ակտիվացմամբ բնորոշվող գլոբալիզացիայի դարում, ավելի ու ավելի հստակ ենք գիտակցում, որ «ազգայնությունները» տարօրինակություն են, անաքրոնիզմ, որ մշակույթների կայունության գաղափարը պատրանք է, իսկ մշակութային հոմոգեն հասարակությունների ձևավորումը՝ գրեթե անիրագործելի խնդիր, ավելին, դժվար թե այն ընդհանրապես իմաստ ունի:¹

Միգրացիան որպես երևույթ նույնքան հին է, որքան հին է մարդկությունը: Պատերազմները, պետությունների փոփոխվող սահմաններն ու պարզապես ավելի լավ կյանք գտնելու երազանքը միշտ էլ ստիպել են մարդկանց ինքնակամ, իսկ երբեմն նաև հարկադրաբար տեղից տեղ գնալ, կեցության նոր վայրեր փնտրել: Պատահական չէ, որ ազատ տեղաշարժվելու և բնակության վայր ընտրելու ազատությունը համարվում է մարդու հիմնարար իրավունքներից մեկը: Բնականաբար դարերի ընթացքում միգրացիայի ճանապարհները, եղանակներն ու ծավալները զգալի փոփոխություններ են կրել: Մեր ժամանակներում չնայած պետությունների միջև գոյություն ունեցող սահմաններին, գործող վիզային ռեժիմներին ու մշտական ընդհարումների մեջ

¹ Дятлов В., Мелконян Э., Армянская диаспора: очерки социокультурной типологии, Ереван, 2009, стр. 11.

գտնվող վարչակարգերի պայքարին՝ տեխնիկական ու տեխնոլոգիական ձեռքբերումները, գլոբալիզացիոն գործընթացները բավական հեշտացրել են մարդկանց տեղաշարժը աշխարհով մեկ և հնարավորություն տվել նույնիսկ հայրենիքից հեռու բնակվելու պարագայում հարազատների, հետևաբար նաև սեփական մշակույթի հետ ամենօրյա ակտիվ կապ պահպանել: Ներկայումս դժվար թե հնարավոր լինի գտնել մի երկիր, ուր չկա այլազգիների գոնե մեկ համայնք, առավել ևս չկան պետություններ, որոնց բնակիչների մի մասը չի բնակվում այլ երկրներում. 1960 թ. Աշխարհում 75,5 միլիոն մարդ էր հայրենիքից դուրս ապրում, իսկ 2009 թ. տվյալներով արդեն 213.9 միլիոն: Այսինքն՝ աշխարհի մասշտաբով 35 մարդուց մեկը միգրանտ է, իսկ զարգացած երկրներում միգրանտ է յուրաքանչյուր տասներորդը: Համաշխարհային միգրացիայի հիմնական կենտրոններն են ԱՄՆ-ն և Եվրոպական Միության զարգացած երկրները, ուր մարդիկ ամբողջ աշխարհից գալիս են աշխատանք ու բարեկեցիկ կյանք գտնելու համար: Մի կողմից ստեղծված լայն հնարավորությունները, մյուս կողմից էլ արևսյան հասարակարգում արդեն հաճախ աբսուրդային արտահայտումներ ստացող մարդու հիմնարար իրավունքների ու ազատությունների աներկբա իրականացումը թույլ է տալիս աշխարհի ամենատարբեր երկրներում բնակվող օտարերկրացիներին առանց խոչընդոտների պահպանել իրենց մշակույթը, լեզուն, սովորույթները, դառնալ հայրենիքը ֆինանսապես սնուցող հզոր աղբյուր, իրականացնել իրենց պետությունների շահերի լոբբինգ, իսկ ընդունող երկրում լինել հասարակական-քաղաքական կյանքի ակտիվ մասնակից²: Ավելին,

² Այս մասին առավել մանրամասն տե՛ս **Shain Y., Barth A.**, *Diasporas and International relations theory*, International Organization, Vol. 57, No. 3,

վերջին շրջանում մի շարք հետազոտողներ «սփյուռքը»³ սկսել են դիտարկել նույնիսկ որպես համաշխարհային գլոբալ քաղաքականության ինքնուրույն սուբյեկտ:

Համաշխարհային տնտեսական ու քաղաքական համակարգերում միգրանտների դերի կարևորումը անհրաժեշտ և արդիական է դարձնում ընդունող հասարակություն-միգրանտներ, միգրանտներ-հայրենիք կապերի, միգրանտական համայնքների խնդիրների ուսումնասիրությունը: Պատահական չէ, որ արդեն կես դար է այս հարցերի տարբեր ասպեկտներ գտնվում են հասարակական գիտությունների՝ սոցիոլոգիայի, տնտեսագիտության, քաղաքագիտության ու շաղկերչության կենտրոնում: Ավելին, 1980-ականներից միգրանտների խնդրի նկատմամբ եղած անախադեպ հետաքրքրության համատեքստում առաջ եկավ և սկսեց որպես ինքնուրույն գիտություն զարգանալ սփյուռքագիտությունը: Փորձելով տալ ընդհանրական պատկեր՝ նշենք, որ հունարեն «դիասպորա» տերմինը (հայերեն՝ սփյուռք) առաջացել է diaspeirein - «տարածել» բայից: «Դիասպորա» գոյականը «հեթանոսների մեջ հրեաների տարածում» իմաստով առաջին անգամ հանդիպում ենք Սեպտուգինտում, հետագայում նույն երևույթը նկարագրելու համար «դիասպորա» բառն են օգտագործել նաև Պլուտարքոսը, Ֆիլոն Ալեքսանդրիացին⁴: Երկար ժամանակ գիտական բառարաններում և հանրագիտարաններում այս տերմինը միայն այդ իմաստով է կիրառվել: Ներկայումս սակայն

2003, pp. 449-479, ինչպես նաև **Ketkar S., Ratha D.**, Diaspora bonds: Tapping the diaspora during difficult times, Journal of International Commerce, Economics and Policy Vol. 1, N. 2, 2010, pp. 251-263.

³ Սփյուռք հասկացության սահմանումների մասին մանրամասն տե՛ս **Джангозян С.**, Об определении понятия «Дiaspora», Вестник ЕГУ, Ереван, 2012, стр. 64-73.

⁴ **Дятлов В., Мелконян Э.**, указ. соч., стр. 8.

«սփյուռք» բառը սկսել է կիրառվել շատ ավելի լայն իմաստով: Ամերիկացի սոցիոլոգ, Կալիֆորնիայի համալսարանի պրոֆեսոր Ռ. Բրուքսթերը նշում է, որ «դիասպորա» տերմինը որպես բանալի բառ 1970–ականների գիտական աշխատանքներում օգտագործվել է մեկ–երկու անգամ, 1980–ականներին՝ 13 անգամ, իսկ միայն 2001 թ. 130 անգամ⁵ և հավելում. «Վերջին տարիներին (նկատի ունի XX դարի երկրորդ կեսը) «դիասպորա» տերմինը փայլուն կարիերա է արել սոցիոլոգիայում և այլ հումանիտար գիտություններում»⁶:

Այնուամենայնիվ, ընթացող ակտիվ ուսումնասիրություններին հակառակ դեռևս չկան «սփյուռք» երևույթի հստակ ընդունված դասակարգումներ ու բնորոշումներ: Տարբեր հեղինակներ առաջարկում են խիստ տարբեր և հաճախ իրարամերժ տարբերակներ⁷: Փորձելով ընդհանրացնել՝ կարող ենք ասել, որ սփյուռքն ընդհանուր ծագում ունեցող մարդկանց խումբ է, որ ապրում է գոյություն ունեցող կամ վերացական, սիմվոլիկ էթնիկ-կրոնական բնօրրանից դուրս, պահպանում և սերնդեսերունդ է փոխանցում հայրենիքի մասին հիշողությունը, մշակութային ժառանգությունը, փայփայում է մի օր հայրենիք վերադառնալու երազանքը, չի ուժանում և իրեն չի համարում ընդունող հասարակության լիարժեք մաս, ավելին պատրաստակամորեն մասնակցում է հայրենիքի ծաղկման միասնական պայքարին⁸:

⁵ Akçay E., Alimukhamedov F., «Reevaluating contemporary “diaspora policy” of Turkey», Suleyman Demirel University, The Journal of Faculty of Economics and Administrative Sciences, vol. 18, n. 1, 2013, pp. 103-115, p. 106.

⁶ Дятлов В., Мелконян Э., указ. соч., стр. 9.

⁷ Джангозян С., указ. соч., стр. 65.

⁸ Այս մասին առավել մանրամասն տե՛ս Дятлов В., Мелконян Э., указ. соч., стр. 16-17, ինչպես նաև Bilgiç T. Ü., Bilgiç B.S., Kosova Türkleri: «Sıradışı» Bir Türk Diasporası, Bilig, N 62, 2012, s.41-62.

Սփյուռքերի դասակարգումը ևս բարդ խնդիր է. Ամենատարբեր չափանիշների վրա հիմնվելով՝ գիտնականները առաջարկում են սփյուռքերի յուրօրինակ դասակարգումներ⁹, որոնց ուսումնասիրությունը առանձին աշխատության նյութ պետք է հանդիսանա: Նշենք միայն, որ գոյության երկար պատմություն և ավանդաբար ուժեղ համայնքային կառույցներ ունեցող հայկական, հրեական սփյուռքերին զուգահեռ իրենց գործունեությամբ սկսում են աչքի ընկնել համեմատաբար ավելի ուշ ձևավորված չինական, հնդկական, մեքսիկական սփյուռքերը: Վերջին քսան տարում եվրոպական երկրների հասարակական-քաղաքական կյանքում ակտիվորեն ներգրավվել են նաև դեռևս 1960-ականներին ձևավորված թուրքական համայնքները:

Թուրքական սփյուռքի ձևավորումը կապված է եվրոպական որոշ պետությունների՝ XX դարի երկրորդ կեսի «տնտեսական հրաշքի» արդյունքում առաջացած աշխատուժի պակասը համեմատաբար աղքատ երկրներից միջպետական պայմանագրերի հիման վրա հյուր-աշխատողների (գերմ. *Gastarbeiter*) ներգաղթով լրացնելու քաղաքականության հետ¹⁰: Նման պայմանագրերի կնքումը երկուստեք ձեռնառու էր՝ ընդունող երկիրը ստանում էր համեմատաբար էժան աշխատուժ, տրամադրող երկրների բնա-

⁹ Кондратьева Т., Диаспоры в современном мире: эволюция явления и понятия, http://www.perspektivy.info/book/diaspory_v_sovremennom_mire_evolyucija_ja_vlenija_i_ponatija_2010-02-27.html

¹⁰ XIX դ. երկրորդ կեսին Եվրոպան համակած «ամերիկյան երազանքը» չըջանցեց նաև տնտեսական ու քաղաքական ծանր վիճակում գտնվող Օսմանյան կայսրությանը: Երկրի ամենատարբեր անկյուններից ԱՄՆ տեղափոխվեց մոտ 1 միլիոն 200 հազար մարդ, որոնց 20% թուրք էր: Փոքրաթիվ թուրքական համայնքներ ձևավորվեցին նաև Կանադայում, եվրոպական որոշ երկրներում:

կիչներն էլ՝ իրենց ընտանիքների բարեկեցության մակարդակը շոշափելիորեն բարձրացնելու հնարավորություն: 1950-ականների վերջում բնակչության արագ աճի, ահռելի չափերի հասնող գործազրկության, աղքատության տարածման, գյուղաբնակների հողազրկության, ռազմական ծախսերի մեծացման, տնտեսական և քաղաքական մի շարք խնդիրների պատճառով¹¹ ծանր վիճակում գտնվող Թուրքիայի կառավարող շրջանակներին նման պայմանագրերը հնարավորություն տվեցին մի կողմից նվազեցնել գործազուրկների թիվը և էականորեն թուլացնել առկա սոցիալական լարվածությունը, մյուս կողմից՝ հարստացնել երկիրը արտերկրում աշխատող հայրենակիցների ուղարկած գումարներով, իսկ նրանց վերադարձից հետո Եվրոպայի առաջատար երկրում ձեռք բերված փորձը կիրառել սեփական տնտեսության մեջ¹²: Պատահական չէ, որ 1961 թ. սահմանադրությամբ առաջին հնգամյա զարգացման պլանը (1962–1967 թթ.) նախատեսում էր «ավելորդ աշխատուժի արտահանում»¹³: Արտագաղթի սկզբից տասնամյակներ անց՝ 2008 թ. տված մի հարցազրույցում Թուրքիայի նախկին վարչապետ և նախագահ Սուլեյման Դեմիրելն ասել է. «Թուրքիայից Եվրոպա՝ Գերմանիա, աշխատուժ ուղարկելը շատ կարևոր էր Թուրքիայի զարգացման համար: Մենք Գերմանիան դիտարկում էինք որպես դպրոց: Մեր նպա-

¹¹ Այս մասին առավել մանրամասն տես՝ **Розалиев Ю.**, Особенности развития капитализма в Турции (1923-1960 гг.), Москва, 1972, стр. 297-300, ինչպես նաև **Старченков Р.**, Трудовые ресурсы Турции. Демографический, экономический и социальные аспекты, Москва, 1981, стр. 101-109.

¹² Batı Avrupa Türkleri F. Almanya'da 30. yıl, Ankara, Avrupa Türk İslam Birliği, 1992, s. 47.

¹³ **Fassmann H., İçduygu A.**, Turks in Europe: Migration Flows, Migrant Stocks and Demographic Structure, European Review, Volume 21, Issue 03, 2013, p. 350.

տակն էր, որ մեկնողները իրենց գործում հմտացած ետ վերադառնան»¹⁴:

1960-ականների սկզբին Թուրքիան աշխատանքային պայմանագրեր կնքեց Գերմանիայի Դաշնային Հանրապետության, Բելգիայի, Հոլանդիայի, Ավստրիայի, Ֆրանսիայի, Շվեդիայի, Մերձավոր Արևելքի նավթային պետությունների և անգամ Ավստրալիայի հետ: Ըստ պայմանագրի ժամանակավոր (մեկերկու տարով) փող աշխատելու մեկնած մարդկանց մեծ մասը հայրենիք չվերադարձավ: Պատճառն այն էր, որ չնայած թուրք հյուր-աշխատողների բնակության և աշխատանքի պայմանները բարվոք չէին, նրանք ստիպված էին ապրել համակենտրոնացման ճամբարներ հիշեցնող շենքերում, աշխատել առանց հանգստյան օրերի ու արձակուրդի, կատարել ամենածանր, վտանգավոր գործերը՝ վարձատրվելով տեղացիներից երկուերեք անգամ քիչ և հաճախ ենթարկվել անհարգալից վերաբերմունքի¹⁵, սակայն նույնիսկ ամենացածր աշխատավարձը, անգամ գործազրկության նպաստը, մի քանի անգամ գերազանցում էր նրանց պոտենցիալ եկամուտը Թուրքիայում:

Թուրքական պետությանն էլ իր հերթին չէր անհանգստացնում միգրանտների շուտափույթ վերադարձի հարցը, քանի որ տարեցտարի աճող դրամական փոխանցումները մեծապես նպաստում էին տնտեսական մի շարք խնդիրների կարգավոր-

¹⁴ **Mortan K., Sarfati M.**, Vatan olan Gurbet. Almanya’ya İşçi Göçünün 50. Yılı, İstanbul, 2011, s. 11.

¹⁵ Օրինակ, այդ տարիներին մի գերմանական թերթում տպագրված հայտարարության մեջ ասվում էր. «Վաճառվում է ֆերմերական տուն լավ վիճակում: Հարմար է ձիերի և ժամանակավոր աշխատողների տեղավորման համար», տե՛ս, **Прокопович А.**, Социально-экономические проблемы миграции турецких рабочих в страны Западной Европы, Турция: История, экономика, политика, Москва, 1984, стр. 237.

մանը: Ավելին, երկրի իշխանությունները սահմանել էին հատուկ տոկոսադրույք արտարժույթով փոխանցումների, թուրքական բանկերում արտարժույթային հաշիվների համար: Գերմանիայում թուրքերի կուտակած միջոցները Թուրքիա բերելու համար անգամ հատուկ պայմաններով ստեղծվեցին միգրանտների բաժնետիրական ընկերություններ¹⁶: Կարևոր ենք համարում շեշտել, որ զուտ տնտեսական պատճառներից բացի Թուրքիայից արտագաղթի ակտիվացմանը նպաստում էին այլախոհների՝ ձախակողմյան հայացքներ ունեցողների, քրդերի նկատմամբ մշտական հալածանքներն ու ահաբեկչությունը, տասնամյակը մեկ տեղի ունեցող ռազմական հեղաշրջումները:

Կես դարից քիչ ավելի պատմություն ունեցող թուրքական սփյուռքը ներկայումս հատել է 6 միլիոնի սահմանը: Թուրքական համայնքներ կան աշխարհի շատ երկրներում՝ Ավստրալիայից մինչև ԱՄՆ¹⁷, սակայն թուրք միգրանտների մեծ մասը բնակվում է Արևմտյան Եվրոպայում՝ մասնավորապես Գերմանիայում, Ֆրանսիայում, Հոլանդիայում, Բելգիայում: Ուշադրության է արժանի նաև այն փաստը, որ դեռևս 1995 թ. Թուրքիայից եկած միգրանտների լեզվական պատկանելության վերաբերյալ անցկացրած ուսումնասիրության ժամանակ պարզվել է, որ մասնակիցների 9%-ը տիրապետում է քրդերենին, եղել են նաև ադրբեջաներեն, հայերեն, հունարեն խմացողներ¹⁸: Սա նշանակում է, որ թեև Թուրքիայից եկած բոլոր մարդիկ թուրք են հա-

¹⁶ **Розалиев Ю.**, Экономическая история Турецкой Республики, Москва, 1980, стр. 277.

¹⁷ **Aydın Y.**, The New Turkish Diaspora Policy, Its Aims, Their Limits and the Challenges for Associations of People of Turkish Origin and Decision-makers in Germany, German Institute for International and Security Affairs, Berlin, 2014, p. 10.

¹⁸ **Manço A.**, «Belçika'da Türklerin 40 yili (1964-2004): Sorunlar, gelişmeler, değişmeler», <http://www.cie.ugent.be/IRFAM/amanco8.htm>.

մարվում, սակայն նրանց թվում քիչ չեն նաև այլ ժողովուրդների ներկայացուցիչներ, որոնք Եվրոպա են եկել Թուրքիայում տիրող խտրական, այլատյաց մթնոլորտի հետևանքով: Այս առումով պետք է հատուկ շեշտենք, որ Թուրքիայից Եվրոպա և մասնավորապես Բելգիա են տեղափոխվել նաև ծպտյալ հայերի ընտանիքներ: Մշտական վախի մթնոլորտում ապրելու սովոր այս մարդիկ միայն Եվրոպայում հաստատվելուց տասնամյակներ անց են համարձակվել խոսել իրենց ծագման մասին, իսկ մի մասը նույնիսկ մկրտվել է հայկական առաքելական եկեղեցում, վերցրել հայկական անուններ¹⁹:

Մինչև 1980-ականների կեսերը թուրքերի կամ թուրքական ձևավորվող համայնքների գոյությունը գրեթե անտեսված էր: Թուրքերը չէին ձգտում ընդունել իրենց համար խորթ նոր մշակույթի նորմերը, տեղացիներն էլ որևէ լուրջ քայլեր չէին ձեռնարկում նրանց ինտեգրելու համար՝ հուսալով, որ թուրքերն «ինչպես եկել են, այնպես էլ կգնան»: Արդյունքում մեծ քաղաքներում սկսեցին ձևավորվել առանձին թուրքական գետտո-թաղամասներ, ուր խանութների ցուցանակները թուրքերենով են, սրճարաններում թուրքական ուտեստներ են մատուցվում ու թուրքական երաժշտության ներքո թուրքերենով քննարկվում են օրվա նորությունները: Թեև վերջին տարիներին եվրոպական երկրների իշխանությունները ահռելի միջոցներ ու ջանքեր են գործադրում թուրքերին հասարակությանը ինտեգրելու համար, սակայն նրանց շրջանում ավանդաբար շարունակում է ցածր մնալ կրթության մակարդակը, ինչը լեզվի չիմացության հետ մեկտեղ հանգեցնում է գործազրկության բարձր մակարդակին և որպես

¹⁹ Այս մասին մանրամասն տե՛ս **Մելքոնյան Ռ.**, Կրոնափոխ հայերի սերունդները Եվրոպայում, http://noravank.am/arm/articles/detail.php?ELEMENT_ID=4778&spphrase_id=25730.

հետևանք հանցագործների, թմրամոլների, մաքամավաճառների քանակի աճին: Այս բոլոր խնդիրներով հանդերձ՝ անցած 50 տարիների ընթացքում թուրքերն, այնուամենայնիվ, դարձել են եվրոպական հասարակությունների մաս, իսկ նրանց ազդեցությունը այդ երկրների հասարակական, քաղաքական, մշակութային կյանքում անհերքելի է: Չնայած եվրոպացիների մի նշանակալի մաս մուսուլմաններին և, մասնավորապես, թուրքերին է համարում առկա սոցիալական, ֆինանսական խնդիրների գլխավոր մեղավորներ, սակայն նրանց հոծ բնակության վայրերում տեղացիները կարծես թե հարմարվել են թուրքերի ներկայության հետ. օրինակ, թուրքական արագ սնունդը դարձել է եվրոպական առօրյայի անբաժանելի մասը: Տարեցտարի աճում է նաև թուրքերի ներգրավվածությունը ընդունող երկրների տնտեսական կյանքում: Եվրոպական երկրներում գործող 140.000 թուրքական ձեռնարկությունները ունեն տարեկան մոտ 32.5 միլիարդ եվրո շրջանառություն և 640.000 աշխատատեղ: Վերջին երկու տասնամյակներում ակտիվացել են քաղաքական դաշտում ներկայացված թուրքերը, թուրք պատգամավորներ կան գրեթե բոլոր եվրոպական երկրների խորհրդարաններում: Որոշ քանակով թուրքեր ներկայացված են նաև գործադիր իշխանության համակարգում: Ավելորդ չէ նշել, որ կինոյի, երգարվեստի, սպորտի ներկայացուցիչներն էլ, ինչպես օրինակ, ռեժիսոր Ֆաթիհ Աքինը, գրող և դերասանուհի Էմինե Սևգի Օզդամարը, ֆուտբոլիստներ Մետուօ Օզիլը, Իլքայ Գյունդողանը վաղուց արդեն իրենց տեղն ունեն եվրոպական հասարակության մեջ:

**ԹՈՒՐԹԻԱՅԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆ
«ԴԻԱՄՊՈՐԱՅԻ» ՆԿԱՏՄԱՄԲ. ՆՈՐ
ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈՐՈՆՈՒՄՆԵՐ**

Արդարություն և Ձարգացում կուսակցությունը 2002 թ. Իշխանության գալով թե՛ ներքին, թե՛ արտաքին քաղաքական դիսկուրսում մի շարք լուրջ փոփոխություններ արեց՝ հրաժարվելով հանրապետության հիմնադիր Մուսթաֆա Քեմալ Աթաթուրքի ձևակերպած սկզբունքների մի մասից²⁰ և փորձելով զարգացման նոր ուղիներ գտնել: Բանակի դերի թուլացումից, Քրդական հարցի շուրջ բանակցություններից ու քրիստոնեական մի քանի կալվածքների վերադարձից մինչև «զրո խնդիրներ հարևանների հետ» գաղափարի առաջաշումը, նեոսամանիզմի դոկտրինի²¹

²⁰ **Aydın Y.**, նշվ. աշխ., էջ 12:

²¹ Ըստ նեոսամանիզմի գաղափարախոսության, Թուրքիան որպես Օսմանյան կայսրության ժառանգորդ պետք է աջակցի իր նախկին տարածքներում կայունությանն ու բարգավաճմանը: Այս նկրտումների լավագույն արտացոլումն է 2011 թ. խորհրդարանական ընտրություններից հետո Էրդողանի արած հայտարարությունը, որում իր կուսակցության հաղթանակը համարելով իսլամի հաղթանակ, նա շնորհավորել է նախկին Օսմանյան կայսրության տարածքում բնակվող մարդկանց և ասել «Այսօր հաղթեցին Ստամբուլն ու Սարանոն, Անկարան ու Դամասկոսը, Դիարբեքիրն ու Ռամալլահը, նաև Նաբլուսը, Ժենինը, Հորդանանի ձախ ափը, Երուսաղեմն ու Գազի սկետորը»: Այս քաղաքականության արտացոլումն է նաև ավստրիաբնակ թուրք լրագրողի Սկոպյե

ձևակերպումը, Եվրոինտեգրման քաղաքականության աննախադեպ թուլացումը այնքան նոր էին, որ նույնիսկ ստացան «քաղաքական երկրաշարժ» անվանումը: Այս համատեքստում է պետք դիտարկել նաև թուրքական միգրանտական համայնքների նկատմամբ իշխանությունների վերաբերմունքը:

Առհասարակ թուրքական իրականության մեջ «դիասպորա» հասկացությունն ունի հակասական բնույթ: Մինչև 1980-ական թթ. տերմինն օգտագործվել է հայկական, հրեական, իսկ ավելի ուշ նաև հունական սփյուռքը բնորոշելու համար, սակայն այդ բառն առավելապես ունեցել է բացասական իմաստ:

Այժմ թուրքիայում «դիասպորա»-ն կրում է քաղաքական իմաստ, իսկ տերմինի կիրառումը լայն տարածում է ստացել: Ըստ էության, սա կապված էր թուրքիայի կառավարության՝ դիասպորայի վերաբերյալ մոտեցման և քաղաքականության փոփոխության հետ: Մինչ այդ, արևմուտք և առավելապես Եվրոպա մեկնած աշխատավորներին բնորոշելու համար օգտագործվում էր *gurbetçi* (թարգմանաբար՝ պանդուխտ, տարագիր, «խոպանչի») բառը, իսկ ավելի ուշ նաև Եվրո-թուրքեր հասկացությունը²²: Միայն վերջին շրջանում է, որ «դիասպորա» տերմինը կիրառվում է եվրոպաբնակ թուրքերին բնորոշելու համար²³: Ընդ որում թուրքական իշխանություններն այս հարցում ևս փորձում են կեղծել պատմությունը և թուրքական սփյուռքի պատմություն-

կատարած այցից հետո արված հետևյալ գրառումը. «Մակեդոնիայի թուրքերը կարոտով են հիշում օսմանյան ժամանակաշրջանը: Չեն մոռանում մի թուրք երիտասարդի խոսքերը, որ հարցրեց ինձ. այս հողերը ե՞րբ են նորից մերը լինելու», **Aydın Y.**, նույն տեղում:

²² Aydın Y., նույն տեղում p. 9.

²³ Ünver O., «Changing diaspora politics of Turkey and public diplomacy», *Turkish Policy Quarterly*, v. 12, n. 1, Istanbul, 2013, p. 183.

նը սկսում են թվագրել ոչ թե XX դարի երկրորդ կեսով, այլ XIX դարի կեսերով, երբեմն էլ սփյուռքի հիմնադիրներ համարում XV դարում օսմանյան կայսրության եվրոպական արշավանքներից հետո Եվրոպայում մնացած թուրքերին: Ավելին, թուրքական սփյուռք հասկացության բաղկացուցիչն են համարվում Օսմանյան կայսրության, իսկ հետո նաև հանրապետական Թուրքիայի տարածքից գաղթած բոլոր ազգերի ներկայացուցիչները, այդ թվում Հայոց ցեղասպանությունից փրկված հայերը: Դիասպորայի այս նոր ըմբռնումը 2011 թ. դեկտեմբերի 23-ին Թուրքիայի ԱԳՆ-ում կազմակերպված գիտաժողովի ընթացքում ներկայացրեց ներկայիս վարչապետ, իսկ այն ժամանակ արտաքին գործերի նախարար Ահմեդ Դավութօղլուն: Իր ելույթում Դավութօղլուն, ով նշեց, որ ցանկացած անհատ, ով արմատներով «Անատոլիայից» է, անկախ էթնիկ կամ կրոնական պատկանելությունից, համարվում է թուրքական դիասպորայի անդամ: Սա վերաբերում է հայերին, հույներին: «Մենք պետք է խոսենք ամեն հայի, առաքելական եկեղեցու յուրաքանչյուր ներկայացուցչի հետ, որը գաղթել է Թուրքիայից: Մենք պետք է խոսենք մեր ընդհանուր փառահեղ անցյալից»²⁴:

Ավելին, երկրի քաղաքական որոշակի շրջանակներ էլ այս հասկացության մեջ ներառում են Կենտրոնական Ասիայում, Բալկաններում, ՌԴ-ում ապրող թուրքական ժողովուրդներին: Այնուամենայնիվ, վերջիններիս բնորոշելու համար ներկայումս Թուրքիայում օգտագործվում է *akraba toplulukları* բառակապակ-

²⁴ **Aydın Y.**, «The New Turkish Diaspora Policy: Its Aims, Their Limits and the Challenges for Associations of People of Turkish Origin and Decision-makers in Germany», SWP Research Paper, October 2014, Berlin, p. 14.

ցությունը, որը կարելի է թարգմանել որպես բարեկամ հասարակություններ:

Թուրքիայի Հանրապետության իշխանությունների կառավարության արտասահմանում բնակվող թուրքերի խնդիրներով հետաքրքրվածությունը համեմատաբար նոր երևույթ է: Աշխատանքային գաղթի առաջին տարիներին թուրքական իշխանությունները աշխատավորների արտագաղթը դիտարկում էին որպես ժամանակավոր երևույթ, որը նպաստելու էր Թուրքիայում առկա մի շարք տնտեսական խնդիրների լուծմանը: Այս շրջանում թուրքական իշխանությունները եվրոպաբնակ թուրք միգրանտների հարցում համակարգված, հստակ քաղաքականություն չունեին: Վերջիններիս սոցիալական, մշակութային, առապտացիոն խնդիրները լուծու ուղղությամբ կատարած սակավաթիվ քայլերն էլ, ինչպես օրինակ, 1971 թ. Կրոնական գործերի նախարարության (Diyanet) կողմից իմամներ և ուսուցիչների գործուղումները եվրոպական երկրներ, խիստ անհետևողական բնույթ ունեին և որպես կանոն հաջող արդյունք չէին տալիս::

Դիասպորայի նկատմամբ նոր մոտեցում դրսևորվեց փոխվարչապետ, վարչապետ և այնուհետ նախագահ Թուրգութ Օզալի կառավարման շրջանում, երբ իշխանությունները սկսեցին հատուկ ուշադրություն դարձնել թուրքական համայնքների քաղաքականացմանը: 1981 թ. ընդունվեց օրենք երկքաղաքացիության մասին, հռչակվեց Աշխատավորների համակարգման գերագույն խորհուրդը, որն ուներ հասարակական և տնտեսական գործերի կոմիտեներ, իսկ գլխավոր նպատակն էր քաղաքացիներին Թուրքիային մոտ պահելը:

Այս ամենն իր արտահայտումը գտավ նաև 1982 թ. հռչակված սահմանադրության մեջ, որտեղ առաջին անգամ անդրա-

դարձ կատարվեց արտասահմանում բնակվող թուրքերին: 62-րդ հոդվածով ամրագրվում էր. «Պետությունը պետք է անհրաժեշտ քայլեր կատարի՝ ապահովելու ընտանիքի միասնությունը, երեխաների կրթությունը, մշակութային պահանջները, արտասահմանի թուրք աշխատավորների սոցիալական անվտանգությունը, միջոցներ ձեռնարկի, որպեսզի վերջիններս պահպանեն կապերը հայրենիքի հետ, օգնի նրանց վերադառնալ հայրենիք»²⁵:

Միգրանտների նկատմամբ հետաքրքրության աճն ունի մի շարք օբյեկտիվ պատճառներ: Թուրքական համայնքներից եկող տրանսֆերները, ինչպես նշվեց, լուրջ դերակատարում են ունեցել Թուրքիայի տնտեսության մեջ: Բավական է փաստել, որ 1960-ականներից ի վեր Թուրքիան տարեկան միջինում ստացել է համարյա 1,9 միլիարդ դոլար տրանսֆերներ: Ինչպես նշել է Թուրքիայի պալատների և բորսաների միության (Türkiye Odalar ve Borsalar Birliği, այսուհետ՝ TOBB) նախագահ Ռեֆաթ Հիսարը ըբօղլուն. «...աշխարհի 10 ամենամեծ տնտեսություններից մեկը դառնալու մեր նպատակը իրականացնելու հարցում մեր ունեցած ամենակարևոր արժեքներից է թուրքական սփյուռքը»: Չնայած միգրանտների երրորդ-չորրորդ սերնդի պարագայում այդ տրանսֆերները օրինաչափ կերպով նվազում են, սակայն TOBB-ի վերահսկողության ներքո 1986 թ. թիվ 5174 օրենքով «թուրքական հատուկ արտաքին տնտեսական հարաբերություններ իրականացնելու» նպատակով²⁶ ստեղծված Արտաքին տնտե-

²⁵ Bilgili Ö., Siegel M., «Understanding the changing role of the Turkish diaspora», Maastricht Economic and social Re-search Institute on Innovation and Technology, UNU- MERIT, September 2010, Maastricht, p. 7.

²⁶ Çalicioğlu B., «Dünyada Diaspora Stratejileri: Türk Diasporası İçin Öneriler», Türk Diasporası ve Türk Dünyası Viz-yon 2023, İstanbul, 2014, s. 79.

սական հարաբերությունների խորհուրդը (Dış Ekonomik İlişkiler Kurulu, այսուհետ՝ DEİK) ներկայումս ակտիվ գործունեություն է ծավալում սփյուռքի հետ տնտեսական կապերի խորացման ուղղությամբ: Այսպիսով, DEİK-ը զարգացնում է արտաքին տնտեսական հարաբերությունները, աջակցում է ներմուծման և արտահանման լայն ցանցի ստեղծմանը, թուրքական ապրանքանիշի՝ արտասահմանում տարածմանը և այլն: 2011 թ. նոյեմբերի տվյալներով DEİK-ը ներառում է 800 անդամ կազմակերպություն, 34 գործադիր խորհուրդ, 103 աշխատանքային խորհուրդ, 108 գրասենյակային ներկայացուցչություն և 3 արտասահմանյան ներկայացուցչություն²⁷: TOBB-ի և DEİK-ի համատեղ որոշմամբ 2008 թ. ստեղծվել է Աշխարհի թուրքերի աշխատանքային խորհուրդ (Dünya Türk İş Konseyini, այսուհետ՝ DTİK):

DEİK-ի անմիջական հովանավորությամբ 2009 թվականից պարբերաբար անց են կացվում թուրք գործարարների հանդիպում-ֆորումներ: Ավելորդ չէ նաև անդրադառնալ 2011 թ. DEİK-ի ներկայացրած տնտեսական ծրագրին, որն առաջարկում է զարգացնել Թուրքիա-դիասպորա հարաբերությունները չինական, հնդկական և իսրայելական սփյուռքերի մոդելով: Թուրքական սփյուռքի գործունեությունը համակարգելու միտված ռամգավարական ծրագրում առաջարկվում էր արտասահմանում թուրքական հասարակական կազմակերպությունների ավելի լայն ցանց ստեղծել, սփյուռքից եկող ներդրումները խրախուսելու համար ազատել դրանք հարկերից, հեշտացնել թղթաբանական քաշքշուկները, խրախուսել երիտասարդ ձեռնարկատերերին, ամեն տարի կազմակերպել «Սփյուռքի հաջողակներ» մրցանա-

²⁷ «Dünyada Diaspora Stratejileri: Türk Diasporası için Öneriler», Dış Ekonomik İlişkiler Kurulu (DEİK) Kasım 2011, pdf, s. 1.

կաբաշխություն, որտեղ կլինեն՝ դիասպորայի լավագույն ձեռնարկատեր, դիասպորայի լավագույն կին ձեռնարկատեր, դիասպորայի լավագույն երիտասարդ ձեռնարկատեր, դիասպորայի կյանքի նվաճումներ և այլ անվանակարգեր²⁸: Նաև առաջարկվում է Թուրքիա բերել մի շարք թուրք երիտասարդների՝ կրթություն ստանալու, ապա նրանց գումարային աջակցություն ցուցաբերել, որպեսզի վերջիններս վերադառնան իրենց երկրները, կազմակերպություններ բացեն և թուրքաՆպաստ քարոզչություն իրականացնեն: Ծրագրում հատուկ կետ է նվիրված նաև արտասահմանում թուրքական ռեստորանների վարկանիշի բարձրացմանը:

Այս կերպ թուրքական իշխանությունները նպատակ ունեն մինչև 2023 թ. սեփական սփյուռքում դրամաշրջանառությունը հասցնել 100 միլիարդ դոլարի, ինչպես նաև նպաստել «Կոկա-կոլայի» գլխավոր տնօրեն Մուհթար Քենթի նման հաջողակ թուրքերի քանակի աճին: Ռ. Հիսարջըքօղլուի խոսքերով 6-միլիոնանոց թուրքական սփյուռքը Թուրքիայի գլխավոր հարստություններից է և իշխանությունների նպատակն է, որ 2023 թ. հանրապետության հիմնադրման հարյուրամյակին այն չինական և հրեական սփյուռքերի հետ միասին լինի աշխարհի երեք հզորագույն սփյուռքներից մեկը՝ ոչ ամենամեծաթիվը, բայց ամենաազդեցիկը: Ըստ Ռովանիի համալսարանի պրոֆեսոր Իլհան Ըշըքի «թուրքական սփյուռքի ուժեղացումը Թուրքիայի համար անհավատալի հնարավորություններ է առաջ բերելու»²⁹:

²⁸ **Çalicioğlu B.**, «Dünyada Diaspora Stratejileri: Türk Diasporası İçin Öneriler», Türk Diasporası ve Türk Dünyası Vizyon 2023, İstanbul, Tasam Yayınları, 2014, s. 84.

²⁹ http://www.zaman.com.tr/yorum_yorum-prof-ihsan-isik-yukselen-turkiyenin-diasporaya-ihtiyaci-var_931286.html

Հնարավոր տնտեսական համագործակցության ու աջակցության հեռանկարներից ոչ պակաս, իսկ գուցե և առավել կարևոր են եվրոպաբնակ թուրքերից Թուրքիայի իշխանությունների ունեցած քաղաքական ակնկալիքները: ԱԶԿ-ն փորձում է եվրոպական համայնքների պաշտպան ու հովանավոր հանդես գալով՝ իր կողմ գրավել եվրոթուրքերի բավական լուրջ ընտրագանգվածը: Թուրքիայի նախկին նախագահ Ադուլլահ Գյուլը, ներկայիս նախագահ Ռեջեփ Թայիփ Էրդոդանը եվրոպական իշխանությունների հետ հանդիպելիս մշտապես անդրադառնում են թուրքական սփյուռքին վերաբերող հարցերին: Օրինակ, Թուրքիայի նախկին նախագահ Աբդուլլահ Գյուլը հարցազրույցներից մեկում պնդել է, որ Գերմանիան սխալ քաղաքականություն է վարում ներգաղթյալների նկատմամբ, ոտնահարում է նրանց իրավունքները և նշել. «Գերմանիայի նախագահը պետք է հիշի, որ նաև իր երկրում ապրող միլիոնավոր թուրքերի նախագահն է: Ես Թուրքիայում ապրող բոլոր փոքրամասնությունների՝ գերմանացիների, քրիստոնյաների, հրեաների ու հայերի նախագահն եմ, նշում եմ նրանց տոները, այցելում եմ նրանց սրբավայրերը»³⁰: Իսկ Գերմանիայում թուրքական համայնքի հիստունամյակի կապակցությամբ 2011 թ. Բեռլինում ելույթ ունենալով՝ այն ժամանակ դեռ վարչապետ, ներկայիս նախագահ Ռ. Թ. Էրդոդանն հայտարարել էր, որ ուժացումը հակասեմիտիզմի պես համամարդկային մեղք է³¹: Միևնույն ժամանակ նա թուրքերին կոչ էր արել ինտեգրվել, բայց չձուլվել, նախ սովորել թուրքերեն, հետո գերմաներեն, քանի

³⁰ Cumhurbaşkanı Gül'ün Türk ve Alman Gazetelerine Ortak Demeci Açıklaması, <http://www.sondakika.com/haber-cumhurbaskani-gul-un-turk-ve-alman-gazetelerine-2991833/>

³¹ Sey C., Almanya'da asimilasyon, Agos, 4, 10, 2011.

որ բազմազանությունները հասարակության հարստությունն են³²: Իր մեկ այլ հայտարարության մեջ Էրդողանն ասել է. «Արտասահմանում բնակվող եղբայրներ, իմացե՛ք, դուք այլևս միայնակ չեք: Թուրքիայի Հանրա-պետությունը ձեզ հետ է: TİKA–ի միջոցով մեր ձեռքերը հասնում են աշխարհի բոլոր ծայրերը: YTB–ի միջոցով տարածում ենք Թուրքիայի ջերմությունը և ուժը, իսկ Յունուս Էմրե ինստիտուտների միջոցով մենք աշխարհին թուրքերեն ենք սովորեցնում»³³: Արտասահմանի թուրքերի և բարեկամ հասարակությունների վարչության նախկին պետ Քեմալ Յուրթնաչը պատրաստակամություն է հայտնել աջակցել եվրոպաբնակ թուրքերին ցանկացած խնդրի դեպքում³⁴:

Նմանատիպ հայտարարություններով հանդես են եկել նաև այլ բարձրաստիճան թուրք պաշտոնյաներ: Այս հայտարարությունները խիստ հետաքրքրական են, քանի որ ի ցույց են դնում թուրքական կառավարող շրջանակների վարած երկակի ստանդարտների քաղաքականությունը. արտերկրում բնակվող թուրքերի ինքնության պահպանման ու իրավունքների պաշտպանության խնդիրները բարձրաձայնելուն զուգահեռ սեփական երկրում նրանք շարունակում են ոտնահարել փոքրամասնությունների իրավունքներն ու ամեն կերպ նպաստում նրանց ուժացմանը:

³² Başbakan Erdoğan'dan 'Mavi Kart' sürprizi,
<http://www.Turkpress.De/Siyaset/Basbakan-Erdogandan-mavi-kart-surprizi>.

³³ **İçduygu A., Aksel B.**, «Turkish Migration Policies: A Critical Historical Retrospective», Center for Strategic Research, Perceptions, v. XVIII, n. 3, Autumn 2013, Ankara, p. 185.

³⁴ Fransalı Türkler 'Oturum Kartı' ücretlerini geri isteyecek!,
<http://www.zamanfransa.com/article/fransali-turkler-oturum-karti-ucutlerini-geri-isteyecek-15343.html>

Վերադառնալով ընտրական խնդիրներին՝ նշենք, որ դեռևս 1986 թվականից միգրանտներն իրավունք ունեն մասնակցել ընտրություններին մաքսային կետերում: ԱԶԿ-ի օրոք այս մեխանիզմը ավելի կատարելագործվեց: 2012 թ. Շրջանառության մեջ դրվեցին «կապույտ քարտերը» («կապույտ քարտերը» եկան փոխարինելու 1995 թվականից գործող վարդագույն քարտերին: Կապույտ քարտի հետ մեկտեղ քարտատիրոջը տրամադրվում է անձնական համար), որոնք թույլ են տալիս թուրքական անձագիր չունեցող թուրքերին օգտվել Թուրքիայի քաղաքացիներին շնորհված գրեթե բոլոր իրավունքներից, այդ թվում աշխատել ՀԿ-ներում, այլ աշխատավայրերում ժամանակավոր և պայմանագրային հիմունքների վրա: Ավելին, օրենսդրական որոշ փոփոխություններից հետո Թուրքիայում ծնված անձանց հետ մեկտեղ կապույտ քարտ ունենալու իրավունք ստացան նաև նրանց սերունդները³⁵: Կապույտ քարտ տրամադրում է տվյալ երկրում գործող Թուրքիայի դեսպանատունը կամ հյուպատոսարանը՝ Թուրքիայի Հանրապետության արտաքին գործերի նախարարության թույլտվությունը ստանալուց հետո³⁶: 2012 թ. մայիսի 9-ին Թուրքիայի Ազգային մեծ ժողովը հաստատեց երկրից դուրս ապրող թուրքերի՝ ընտրություններին մասնակցելու իրավունքը³⁷: Օրենսդրական այս փոփոխության արդյունքում մոտ 2,5 միլիոն մարդ ընտրելու իրավունք ստացավ:

³⁵ Mavi Kart Tarihçesi, <http://www.ytb.gov.tr/tr/mavi-kart/757-mavi-kart-tarihcesi>

³⁶ Yurt Dışında Bulunanların İşlemleri, http://pasaport.iem.gov.tr/?page_id=794http://pasaport.iem.gov.tr/?page_id=794

³⁷ Yurtdışında Oy Kullanma, <http://www.ytb.gov.tr/tr/yurtdisinda-oy-kullanma/760-yurtdisinda-oy-kullanma>

2014 թ. օգոստոսին արտասահմանի թուրքերը առաջին անգամ նոր ձևաչափով մասնակցեցին նախագահական ընտրություններին³⁸: Չնայած թե՛ մաքսային կետերում, թե՛ ներկայացչություններում, հավաքելով ձայների համարյա 62%-ը, հաղթեց Ռեջեփ Թայիփ Էրդողանը³⁹, այնումենայնիվ, ԱԶԿ իշխանությունների հաշվարկները չարդարացան: Ընտրացուցակներում ներառված ընտրողներից միայն 500.000 մարդ մասնակցեց ընտրությանը⁴⁰: 2015 թ. խորհրդարանական ընտրություններին ևս մասնակցությունը մեծ չէր: Վերլուծաբաններն այս փաստը բացատրում են մի շարք օբյեկտիվ պատճառներով՝ այն է ընտրատեղամասերի անհարմար տեղաբաշխվածություն, ընտրական օրերի սահմանափակում, միևնույն ժամանակ նշելով, որ բոլոր քարոզչական աշխատանքներին հակառակ Թուրքիայի խնդիրներով հետաքրքրվածությունը միգրանտների մոտ շատ ցածր է:

Քաղաքական երկրորդ վեկտորը, որում միգրանտները պետք է ակտիվ դերակատարում ունենան թուրքական շահերի լոբբինգն է առնվազն հետևյալ հարցերում՝ Թուրքիայի ԵՄ անդամակցություն, Կիպրոսի խնդիր, Հայկական հարց (Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման դեմ պայքար): Ինչպես 2011 թ. նոյեմբերին նշել է ԵՄ հարցերով նախարար Էգեմեն Բաղըշը. «Երկրի շահերը պաշտպանելու համար պետք է ակտիվացնել թուրքական սփյուռքի պոտենցիալը»: Ուշագրավ է, որ թուրքական իշխանությունները նաև սեփական շահերը պաշտպանելու համատեքստում ակտիվորեն քարոզում են միգրանտ-

³⁸ Նույն տեղում:

³⁹ 2014 Cumhurbaşkanlığı Seçimi Tamamlandı, <http://www.ytb.gov.tr/tr/manset-haber/1575-2014-cumhurbaskanligi-secimi-tamamlandi>

⁴⁰ Aydın Y., նշվ. աշխ., էջ 8:

ների ինտեգրում, ընդունող երկրի քաղաքացիության ընդունում՝ հնարավորության դեպքում Թուրքիայի քաղաքացիության պահպանման պայմանով: Օրինակ, Արտասահմանի թուրքերի և բարեկամ հասարակությունների վարչության նախկին պետ Քեմալ Յուրթնաչը, շեշտելով Ֆրանսիայում բնակվող թուրքերի համար երկքաղաքացիության անհրաժեշտությունը, ասել է, որ իրենք հորդորում են ֆրանսաթուրքերին երկքաղաքացիություն ընտրել, ոչ թե որպեսզի նրանց փորձեն ղեկավարել Անկարայից, այլ որ վերջիններս կարողանան օգտվել իրենց իրավունքներից⁴¹: Նախագահ Էրդողանը ևս անդրադարձել է այս հարցին Ֆրանսիայի թուրքական համայնքի հետ իր հանդիպումներից մեկի ժամանակ: Հիշեցնելով, որ Ֆրանսիան ճանաչում է երկքաղաքացիության օրենքը, վերջինս կշտամբել է բոլոր նրանց, ովքեր չեն դիմում քաղաքացիություն ստանալու համար: «Դիմեք, եղբայրներ, դիմեք: Օգտագործեք ընտրելու, ընտրվելու ձեր իրավունքը, որն ընձեռում է Ֆրանսիան: Սա մեծ հնարավորություն է»⁴²:

Սփյուռքի հետ շփումներում թուրքական ղեկավար շրջանակները հատուկ տեղ են հատկացնում մշակույթին, կրոնի պահպանությանը որպես ազգային միասնության երաշխիքի: Մշակույթի պահպանության ուղղությամբ լուրջ աշխատանքների սկիզբ պետք է համարել միջնադարյան հայտնի թուրք բանաստեղծ Յունուս Էմրեի անվան մշակութային կենտրոնների հիմնադրումը: «Յունուս Էմրե» հիմնադրամի (Yunus Emre Vakfi,

⁴¹ Başkan Kemal Yurtnaç, Fransa'da vatandaşlarımızla buluştu, <http://www.ytb.gov.tr/tr/m/439-baskan-kemal-yurtnac-fransada-vatandaslarimizla-bulustu>

⁴² Erdoğan urges Turks in France to integrate, not assimilate, http://www.todayszaman.com/diplomacy_erdogan-urges-turks-in-france-to-integrate-not-assimilate_206884.html

այսուհետ՝ YEV) կողմից ֆինանսավորվող այս կենտրոններում, որոնց թիվն արտասահմանում հասնում է 25-ի, քարոզվում են թուրքական մշակութային արժեքներ, անց են կացվում թուրքերենի դասընթացներ և այլն: Ակնհայտ է, որ այս կենտրոնների միջոցով թուրքական իշխանությունները նպաստում են արտասահմանում Թուրքիայի վարկանիշի բարձրացմանը, փորձում են ուժեղացնել իրենց մշակութային ազդեցությունը Բալկաններում, Կովկասում, Կենտրոնական Ասիայում, Մերձավոր Արևելքում: Կոստվոյի մայրաքաղաք Սարանյում «Յունուս Էմրե» կենտրոնի բացման ժամանակ՝ 2009 թ. հոկտեմբերի 16-ին, Ա. Դավութօղլուն նշեց. «Սա առաջին կենտրոնն է, որ բացում ենք, և պատահական չէ, որ այն բացվում է Սարանյում: Մենք սրա շուրջ շատ երկար ենք մտածել: Եթե որևէ մեկը հարցնի, թե ո՞ր քաղաքն է լավագույն կերպով արտահայտում թուրքական մշակույթը, պատասխանը կլինի՝ Սարանոն: Եթե Ստամբուլը թուրքական մշակույթն արտացոլող հիմնական քաղաքն է, ապա Սարանոն արտացոլում է մեր ընդհանուր մշակույթը»⁴³: Նույն տարվա դեկտեմբերին Ալբանիայի մայրաքաղաք Տիրանայում նմանատիպ կենտրոնի բացման իր ելույթում այն ժամանակ նախագահ Ա. Գյուլը «Յունուս Էմրե» հիմնադրամը անվանեց «Թուրքիայի անտեսանելի զենք»: «Յունուս Էմրե» կենտրոնների տեղաբաշխման աշխարհագրությունը ցույց է տալիս, որ թուրքերը, հետևելով նեոսամանիզմի գաղափարներին, ձգտում են սեփական մշակույթի և դրա միջոցով նաև տնտեսական և քաղաքական էքսպանսիան տարածել Օսմանյան կայսրության մաս կազմած, ինչպես նաև թուրքական ժողովուրդներով բնակեցված բոլոր երկրներում:

⁴³ Նույն տեղում, էջ 18:

Այս համատեքստում նշենք, որ թուրքական քաղաքական և գիտական շրջանակներ փորձում են «թուրքական սփյուռք» հասկացության մեջ ներառել նաև Կենտրոնական Ասիայում, Բալկաններում, ՌԴ-ում ապրող թուրքական ժողովուրդներին: ԽՍՀՄ փլուզումից հետո առաջ եկած հակառուսական տրամադրություններից օգտվելով՝ թուրքերը փորձեցին ուժեղացնել իրենց ներկայությունը և ազդեցությունը նորաստեղծ թուրքական հանրապետություններում, ինչպես նաև ՌԴ թուրքաբնակ տարածաշրջաններում: Թուրքախոս ժողովուրդների և պետությունների հետ հարաբերությունները համակարգելու համար ձեռնարկվեցին մի շարք քայլեր: Թուրքիայի կառավարության որոշմամբ 1991 թ. ստեղծվեց Թուրքական համագործակցության և համակարգման գործակալությունը (Türk İşbirliği ve Koordinasyon Ajansı, այսուհետ՝ TIKA): Կազմակերպության պաշտոնական կայքում տեղադրված հայտարարության համաձայն դրա նպատակն է ԽՍՀՄ փլուզման արդյունքում անկախություն ձեռք բերած Կենտրոնական Ասիայի պետությունների և Կովկասի ժողովուրդների հետ տնտեսական, հասարակական, մշակութային, կրթական կապերի սերտացումն ու ակտիվ համագործակցությունը⁴⁴: 1990-ական թվականներին մասնակցում էին Ադրբեյջանը, Ղազախստանը, Ղրղզստանը, Ուզբեկստանը և Թուրքմենստանը⁴⁵: 1993 թ. Անկարայում ստեղծվեց թուրքական

⁴⁴ <http://www.tika.gov.tr/tr/sayfa/hakkimizda-14649>

⁴⁵ Կառույցի մասին առավել մանրամասն տե՛ս գործակալության պաշտոնական կայքում՝ <http://www.tika.gov.tr/tr/sayfa/hakkimizda-14649>: Հետաքրքիր է, որ Խորհրդային Միության փլուզումից հետո, ամերիկյան ամենահայտնի թինքթանքերից մեկի՝ RAND Corporation-ի վերլուծաբաններից երկուսը՝ Փոլ Հենզը և Գրեհեմ Ֆուլլերը ծրագիր էին մշակել, որի համաձայն Կենտրոնական Ասիայի երկրները պետք է զարգանան

մշակույթի կազմակերպությունը՝ ԹՅՈՒՐԿՍՈՅԸ, որի նպատակն էր դառնալ թյուրքական աշխարհի ՅՈՒՆԵՍԿՕ-ն: Սակայն նկատենք, որ Թուրքիայի այս նախաձեռնություններից և ոչ մեկը լուրջ հաջողություն չունեցավ: Ավելին, նույնիսկ նախկին խորհրդային տարածքներում բացված թուրքական դպրոցները, որոնք սկզբնական շրջանում բավական հաջող էին գործում, որոշ ժամանակ անց մեծ մասամբ փակվեցին:

Այսպիսով՝ տեսնում ենք, որ 1990-ականներից Թուրքիան բավական ակտիվ քաղականություն էր վարում թե՛ Եվրոպայի թուրքական համայնքների, թե՛ թյուրքական հասարակությունների հետ համագործակցելու, սեփական տնտեսական, քաղաքական նպատակները իրագործելու համար սփյուռքը մոբիլիզացնելուն միտված քաղաքականության մշակման և ձևավորման ուղղությամբ: Սակայն այս ամբողջ գործունեությունը որևէ կերպ համակարգված չէր, գտնվում էր հաճախ իրար հետ ոչ մի կապ չունեցող հաստատությունների իրավասության ներքո, ինչը նվազեցնում էր իրականացվող ծրագրերի արդյունավետությունը: Խնդրի լուծման առաջին փորձն էր 1998 թ. վարչապետի վերահսկողության ներքո Արտասահմանի թուրք քաղաքացիների խորհրդատվական կառույցի (Yurtdışında Yaşayan Vatandaşlar Danışma Kurulu) և Արտասահմանի թուրքերի գերագույն կոմիտեի (Yurtdışında Yaşayan Vatandaşlar Üst Kurulu) ստեղծումը: Այս կառույցները զբաղվելու էին միգրանտների խնդիր-

թուրքական մոդելով, ինչը նրանց թույլ չէր տա ընկնել ծայրահեղ իսլամական ազդեցության տակ: Այս ծրագրում Թուրքիային հատկացվում էր հատուկ դեր. վերջինս պետք է հովանավորեր այդ երկրներին, նրանց համար օրինակ ծառայեր, կրթեր, կամուրջ հանդիսանար Կենտրոնական Ասիայի և Արևմուտքի միջև: Ըստ էության, հենց այս ծրագրի շարունակությունն էլ հանդիսացավ TİKA-ի ստեղծումը:

ների ուսումնասիրությամբ, վերլուծությամբ, փորձելու էին դրանց լուծումներ տալ: Շուտով իր լիազորությունների շրջանակները լայնացրեց նաև Արտաքին հարաբերությունների և արտասահմանի աշխատավորների ծառայությունների գլխավոր տնօրինությունը (Dış İlişkiler ve Yurtdışı İşçi Hizmetleri Genel Müdürlüğü), ստեղծվեց Հայրենիք-խորհրդատվական բյուրոն (Yurt-Danış Bürosu): Այս ճանապարհին վերջին ինստիտուցիոնալ քայլը դարձավ Արտասահմանի թուրքերի և բարեկամ հասարակությունների վարչության (Yurtdışı Türkler ve Akraba Topluluklar Bakanlığı, այսուհետ՝ YTB) հռչակումը 2010 թ.⁴⁶:

⁴⁶ **Aksel B.**, «Kins, Distant Workers, Diasporas: Constructing Turkey's Transnational Members Abroad», ASN World Convention, Columbia University, April 2013, p. 11,

http://www.migrationpolicycentre.eu/docs/SummerSchool2013/readings/Icduygu_Reading%203.pdf

**ԱՐՏԱՍԱՀՄԱՆՈՒՄ ԲՆԱԿՎՈՂ ԹՈՒՐԹԵՐԻ ԵՎ ԱԶԳԱԿՑ
ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ
ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ**

2010 թ. մարտի 24-ին ԹԱՄԺ-ի որոշումով հիմնադրվեց Արտասահմանում բնակվող թուրքերի և բարեկամ հասարակությունների վարչությունը (Yurtdışı Türkler ve Akraba Topluluklar Başkanlığı)⁴⁷, որի նպատակը, նախկին ղեկավար Քեմալ Յուրթնաչի խոսքերով, արտասահմանում բնակվող թուրքերին անկազմակերպ ամբոխից սփյուռքի վերածելն է:

Վարչությունը գտնվում է Թուրքիայի փոխվարչապետի անմիջական վերահսկողության տակ⁴⁸: Ի սկզբանե վարչության գործունեության համար պատասխանատու էր աշխատանքի և սոցիալական պաշտպանության նախարար Ֆարուք Չելիքը, որին փոխարինեց Քեմալ Յուրթնաչը: 2014 թ. փետրվարից վարչության պետն է Քուլրեթ Բյուլքյուլը: 2013 թ. Արտասահմանում բնակվող թուրքերի համայնքների վարչության բյուջեն կազմեց մոտ 167

⁴⁷ Aksel B., «Kins, Distant Workers, Diasporas: Constructing Turkey's Transnational Members Abroad», ASN World Convention, Columbia University, 2013, p. 11,

http://www.migrationpolicycentre.eu/docs/SummerSchool2013/readings/Icd_uysu_Reading%203.pdf

⁴⁸ Teşkilat Şeması, <http://www.ytb.gov.tr/tr/kurumsal-kategori/187-teskilat-semasi>

միլիոն, 2014 թ.՝ 194 միլիոն 504 հազար լիրա⁴⁹: Վարչությունը աշխատանքներ է տանում 4 հիմնական ուղղություններով.

ա) **Արտասահմանում բնակվող թուրք քաղաքացիներ.** տարբեր պատճառներով երկրից հեռացած Թուրքիայի քաղաքացիների հետ կապված աշխատանքներ,

բ) **Ազգակից և բարեկամ համայնքներ.** աշխարհի տարբեր հատվածներում բնակվող բարեկամ համայնքների հետ կապերի ամրապնդում՝ մի շարք կազմակերպությունների միջոցով,

գ) **Միջազգային ուսանողներ.** զբաղվում է արտերկրից եկած ուսանողներին կրթաթոշակների տրամադրմամբ, IMECE հասարակական ֆինանսավորման ծրագրով գումարներ տրամադրում շահույթ չհետապնդող իրավաբանական անձանց և ՀԿ-ներին վարչության համար առաջնային կարևորություն ունեցող ուղղություններով հետազոտություններ կատարելու համար: Պաշտոնական տվյալներով ներկայումս 73 երկրում իրականացվում է 35 միլիոն թուրքական լիրա ընդհանուր բյուջեով 379 ծրագիր⁵⁰,

դ) **Հասարակական կազմակերպություններ.** վարչության հովանու ներքո Թուրքիայի տարածքից դուրս գործում են մի շարք հասարակական կազմակերպություններ:

Արտասահմանում բնակվող թուրք քաղաքացիների և բարեկամ հասարակությունների վարչությունը կազմված է 9 բաժիններից՝ Արտասահմանի քաղաքացիների բաժին, Մշակութային և հասարակական հարաբերությունների բաժին, Հասարակայնության հետ կապերի և տեղեկատվության բաժին, Արտա-

⁴⁹ Yurtdışı Türkler ve Akraba Topluluklar Başkanlığı 2014 yılı bütçesi TBMM Plan ve Bütçe Komisyonu'nda kabul edildi, <http://www.ytb.gov.tr/tr/duyurular/320-yurtdisi-turkler-ve-akraba-topluluklar-baskanligi-2014-yili-butcesi-tbmm-plan-ve-butce-komisyonunda-kabul-edildi>

⁵⁰ Mali Destekler, <http://www.ytb.gov.tr/tr/mali-destekler/847-mali-destekler>

սահմանցի ուսանողների բաժին, Ռազմավարական բաժին, Իրավաբանական խորհրդատվության բաժին, Մարդկային ռեսուրսների և կրթության բաժին, Օժանդակ ծառայությունների բաժին, Տեղեկատվության մշակման բաժին⁵¹: Այս բաժիններին կից գործում են նաև Արտասահմանի թուրք քաղաքացիների խորհրդատվության խորհուրդը (Yurtdışı Vatandaşlar Danışma Kurulu` YVDK), Մշակութային և հասարակական հարաբերությունների համակարգման խորհուրդը (Kültürel ve Sosyal İlişkiler Eş-güdüm Değerlendirme Kurulu) և Արտասահմանցի ուսանողների գնահատման խորհուրդը (Uluslararası Öğrenciler Değerlendirme Kurulu` UÖDK)⁵²: Առանձնահատուկ ուշադրության է արժանի Արտասահմանի քաղաքացիների խորհրդատվության խորհուրդը, որի ութսուն անդամների մեծ մասը կազմում են Թուրքիայի Հանրապետության նախարարներն ու նրանց տեղակալները: Խորհրդի կազմում ընդգրկված են նաև մասնագետներ 19 երկրներից այդ թվում ԱՄՆ-ից, Բելգիայից, Ֆրանսիայից, Գերմանիայից, Ֆինլանդիայից, Անգլիայից, Շվեյցարիայից⁵³: Այս կառույցի հիմնական նպատակն է խրախուսել ընդունող երկրների հասարակական, քաղաքական, տնտեսական, մշակութային կյանքում թուրք միգրանտների մասնակցությունը, քննարկումներ կազմակերպել վերջիններիս խնդիրների շուրջ, պայքարել ռասայական խտրականության, իսլամաֆոբիայի դեմ:

⁵¹ Yurtdışı Türkler Ve Akraba Topluluklar Başkanlığı Teşkilat Ve Görevleri Hakkında Kanun, s. 10547, <http://www.mevzuat.gov.tr/MevzuatMetin/1.5.5978.pdf>

⁵² Նույն տեղում:

⁵³ YVDK'da Kimler Yer Almaktadır?, <http://www.yvdk.gov.tr/mobil/yvdk-2-yvdk-da-kimler-yer-almaktadir-.html>

Մշակութային և հասարակական հարաբերությունների համակարգման խորհուրդը համագործակցում է համալսարանների, հասարակական կազմակերպությունների, միությունների հետ, որոնք զբաղվում են այսպես կոչված ազգակից հասարակությունների հետ մշակութային, կրթական հարաբերությունների ամրապնդմամբ:

Միջազգային ուսանողներների բաժնին կից գործող միջազգային ուսանողների գնահատման բյուրոն հիմնականում զբաղվում է կրթաթոշակների տրամադրմամբ, արտերկրից եկած ուսանողներին ծանոթացնում երկրի պատմական ու տեսարժան վայրերին, ինչպես նաև կրթությունը բարձր առաջադիմությամբ ավարտած ուսանողներին աջակցում աշխատանք գտնելու հարցում: Կառույցի շրջանակներում գործում է երկու կրթաթոշակային ծրագիր՝ «Արտասահմանի քաղաքացիների կրթաթոշակներ» և «Թուրքիայի կրթաթոշակներ»:

Արտասահմանում բնակվող թուրքերի վարչության անմիջական նախաձեռնությամբ են ամբողջ աշխարհում կազմակերպվում թուրքական արժեքները ցուցադրող և քարոզող ցուցահանդեսներ, սեմինարներ ու գիտաժողովներ: Նշենք նաև, որ վարչության անմիջական ֆինանսավորմամբ տպագրվում են հիմնականում թուրքական, օսմանյան մշակույթին, ինչպես նաև միգրանտական համայնքների ստեղծման պատմությանն ու արդի վիճակին նվիրված զեկույցներ ու գրքեր: Տարեկան չորս անգամ հրատարակվում է «Artı 90» ամսագիրը, որի էլեկտրոնային տարբերակը հնարավոր է կարդալ վարչության կայքում: Գրեթե բոլոր համարներում ներկայացվում են պատմություններ միգրանտների կյանքից, ֆոտոշարքեր նրանց անձնական արխիվներից: Բոլոր համարներում մի հատված նվիրված է թուրքական

պետություններին: Մովորաբար ամսագրում տեղ են գտնում նաև սփյուռքի հայկական կազմակերպությունների գործունեությունը քննադատող հակահայկական նյութեր⁵⁴:

Ուշագրավ է, որ չնայած Արտասահմանում բնակվող թուրքերի վարչության ստեղծումը միանշանակ որպես դրական քայլ է ընկալվում Թուրքիայում, սակայն տարբեր կուսակցություններ և քաղաքական գործիչներ երբեմն հանդես են գալիս այդ կառույցի քննադատությամբ, մատնանշում դրա գործունեության մեջ առկա թերությունները: Օրինակ՝ Ազգայնական շարժում կուսակցության պատգամավոր Ռեշատ Դոդրուն կշտամբել է YTB-ի ղեկավարությանը, որը չի համագործակցում Եվրոպայում Թուրքական ֆեդերացիաների հետ (ծայրահեղ աջ ուղղվածությամբ այս ֆեդերացիաները իրականում «Գորշ գայլեր» ահաբեկչական կազմակերպության ներկայացուցչություններն են)⁵⁵: Նշենք, որ Դոդրունի մեղադրանքներն հիմնավորված չեն, քանի որ YTB-ի նախագահը պարբերաբար հանդիպումներ է ունենում և քննարկումներ կազմակերպում Թուրքական ֆեդերացիաների անդամների հետ⁵⁶:

Այսպիսով, Արտասահմանում բնակվող թուրքերի և բարեկամ հասարակությունների վարչության ստեղծումով սկսվեց Թուրքիայի հանրապետություն-թուրքական սփյուռք հարաբերությունների նոր փուլ, որը բնորոշվում է թուրքական համայնքների կյանքում առավել մեծ ներգրավվածություն ունենալու

⁵⁴ **Öktem K.**, նշվ. աշխ., էջ 14-15:

⁵⁵ Uygur Türklerine her geçen gün baskı artmaktadır, <http://www.ulkucuhaber.com/haber/mhp/uygur-turklerine-her-gecen-gun-baski-artmaktadır/4493.html>

⁵⁶ Başbakan Yardımcısı Bekir Bozdağ'dan Ülkücülere anlamlı ziyaret, <http://yenihaber.be/basbakan-yardimcisi-bekir-bozdagdan-ulkuculere-anlamli-ziyaret/14845/>

Թուրքիայի իշխանությունների ձգտումով, թուրքական ինքնությունը պահպանելու ուղղությամբ տարվող լուրջ աշխատանքներով: Կառույցը կոչված է նաև համակարգել թուրքական լոբբիստական ուժերին, որոնց գլխավոր գործառույթը հայկական լոբբիստական ուժերի դեմ պայքարն է: Ավելորդ չէ նկատել նաև, որ Արտասահմանում բնակվող թուրքերի և բարեկամ հասարակությունների վարչությունը ստեղծվել է ՀՀ սփյուռքի նախարարության ստեղծումից երկու տարի հետո որպես դրան հակազդող, հավասարակշռող ուժ:

ԳԵՐՄԱՆԻԱՅԻ ԹՈՒՐԳԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԸ

*“İnsanın vatanı doğduğu yer değil,
doyduğu yerdir”⁵⁷*

Երկրորդ համաշխարհային պատերազմի արդյունքում մասնատված, ավերված ու հսկայական մարդկային կորուստներ կրած Գերմանիան արդեն 1950 թ. կարողացավ վերականգնել արդյունաբերության նախապատերազմյան մակարդակը, իսկ 1956 թ. ավելացնել այն կրկնակի անգամ: Աշխարհը խոսեց «գերմանական տնտեսական հրաշքի» մասին: Տնտեսության զարգացմանը զուգընթաց, սակայն, ավելի ու ավելի ակնառու էր դառնում աշխատող ձեռքերի պակասը: Բավական խոստուն է միայն այն փաստը, որ 1961 թ. գործազուրկների թիվը երկրում 94856 էր, իսկ թափուր աշխատատեղերի քանակը՝ 572758⁵⁸: Աշխատանքի ներքին շուկայում առաջացած բացը գերմանական իշխանությունները որոշեցին լրացնել ավելի թույլ զարգացած երկրների հետ հյուր-աշխատողներ (գերմաներեն՝ Gastarbeiter) հրավիրելու

⁵⁷ Թուրքական ասացվածք՝ *Մարդու հայրենիքը այն տեղը չէ, որտեղ ծնվել է, այլ այն տեղն է, որը նրան կշտացնում է:*

⁵⁸ **Turan K.**, *Almanya’da Türk olmak*, İstanbul, 1992, s. 14.

վերաբերյալ միջպետական պայմանագրեր կնքելու միջոցով⁵⁹: Գաաթարբայթերական առաջին պայմանագիրը Գերմանիան կնքեց 1955 թ. Իտալիայի հետ⁶⁰, այնուհետև 1962 թ. Իսպանիայի, 1963 թ. Հունաստանի, 1964 թ. Պորտուգալիայի, 1965 թ. Թունիսի և 1968 թ. Հարավսլավիայի հետ⁶¹:

Օրըստօրե հզորացող գերմանական տնտեսության համար աշխատուժի մատակարար դարձավ նաև Թուրքիայի Հանրապետությունը: Աշխատուժի փոխանակման պայմանագիր ստորագրելու առաջարկով Գերմանիայի Դաշնային Հանրապետության նախագահ Թեոդոր Հոյսը հանդես եկավ 1957 թ. Թուրքիա կատարած պաշտոնական այցի ընթացքում⁶²: Նույն տարվա ապրիլին

⁵⁹ Նշենք, որ գերմանացիներն արդեն իսկ ունեին ժամանակավոր միգրանտների աշխատուժն օգտագործելու փորձ: 1880-1910 թթ. Տնտեսության ծաղկման ժամանակաշրջանում գյուղատնտեսության, շինարարության, ածխի և երկաթի արդյունահանման ոլորտներում աշխատում էր 1000000-ից ավելի միգրանտ (աշխատողների մոտ 4.1%)՝ հիմնականում Լեհաստանից, Ռումինիայից, Հունգարիայից և Իտալիայից: Մանրամասն տես՝ **Türkdoğan O.**, İkinci Neslin Dramı Avrupa'daki İşçilerimiz ve Çocukları, İstanbul, 1984, s. 25, **Gitzmez A. S.**, Yurtdışına işçi göçü ve geri dönüşler "beklentiler...gerçekleşenler", İstanbul, 1983, s. 46, **Uğurlu A. R.**, Almancı yabancılar, İstanbul, 1997, s. 8.

⁶⁰ **Hoff H.**, Fifty Years after the invite, Turks Are Still Outsiders in Germany, <http://www.time.com/time/world/article/0,8599,2026645,00.html>

⁶¹ **Keskin H.**, Göçün 50 yılında Türklerin Gölgesinde Almanya. Geleceğe yönelik uyum politikası için görüşler, İstanbul, 2011, s. 37.

⁶² Թուրքիան և Գերմանիան արդեն իսկ ունեին փոխադարձ աշխատանքային միգրացիայի փորձ: Հոյսի հրավերից 100 տարի առաջ՝ 1857 թ. Օսմանյան սուլթանի հրավերով Գերմանիայից արհեստավորներ և հողագործներ են ներգաղթել կայսրության տարածք, իսկ 1933 թ. Թուրքիայի Հանրապետության նախագահ Մուսթաֆա Քեմալ Աթաթուրքի հրավերով 100 գերմանացի գիտնական փորձի փոխանակման նպատակով գնացին Թուրքիա և մոտ 15 տարի աշխատեցին երկրի տարբեր գիտական հաստատություններում: Բացի այդ, XIX դարի

Հոյսի անմիջական հովանավորությամբ միգրանտների առաջին փոքրիկ խումբը՝ 12 երիտասարդ թուրք ինժեներներ իրենց ընտանիքներով, աշխատանքի անցան Համբուրգում⁶³:

Աշխատուժի փոխանակման գերմանա-թուրքական պայմանագիրը կնքվեց 1961 թ. հոկտեմբերի 30-ին Անկարայում⁶⁴: Ի սկզբանե թուրքական իշխանությունները հայտարարել էին, որ մինչ 1967 թ. 220000 մարդ կմեկնի Գերմանիա աշխատելու, սակայն, ըստ պաշտոնական տվյալների, 1965 թ. այս թիվը գերազանցվել էր, և դեռ 300000 մարդ էլ սպասում էր Գերմանիա մեկնելու իր հերթին⁶⁵: Արդեն 1972 թ. մամուլում տպագրվեց Գերմանիա մեկնած 500000-րդ թուրք հյուր-աշխատողի՝ Նեջաթի Գյուվենի նկարը⁶⁶: Ավելին, Ն. Գյուվենի մեկնումը վերածվեց իսկական տոնախմբության⁶⁷: Նույն տարվա տվյալներով դեռևս

վերջին - XX դարի սկզբին Գերմանիա սովորելու կամ վերապատրաստվելու մեկնած թուրք ուսանողների ու զինվորականների մի մասը հաստատվեց այդ երկրում: Որոշ աղբյուրների վկայությամբ XX դարի սկզբին օսմանյան և գերմանական իշխանությունների միջև աշխատուժի տրամադրման վերաբերյալ համաձայնություն է եղել և Բեռլինի «Փերա Սիգարա» ընկերության աշխատողների թվում կային նաև թուրքեր: Այս մասին մանրամասն տես՝ **Mortan K., Sarfati M.**, Vatan olan Gurbet: Almanya'ya İşçi göçünün 50. Yılı, İstanbul, 2011, s. 2-14, **Uğurlu A. R.**, Almancı yabancılar, İstanbul, 1997, s. 8-9, **Türkdoğan O.**, İkinci Neslin Dramı Avrupa'daki İşçilerimiz ve Çocukları, İstanbul, 1984, s. 26.

⁶³ Batı Avrupa Türkleri F. Almanya'da 30. yıl, Ankara, 1992, s. 7.

⁶⁴ **Göksu T.**, Türkiye'nin Dış Göç politikası. 21. yüzyılında Türk Dış politikası. editor İ. Bal, İstanbul, 2004, s. 127.

⁶⁵ **Розалиев Ю.**, Классы и классовая борьба в Турции, Москва, 1967, стр. 113.

⁶⁶ The Cambridge History of Turkey, vol. 4: Turkey in the Modern World, Edited by R. Kasaba, London, 2008, p. 199.

⁶⁷ **Gitmez A. S.**, նշվ. աշխ., էջ 109:

1051138 մարդ սպասում էր Գերմանիա մեկնելու իր հերթին⁶⁸՝ հույս ունենալով «արևմտյան դրախտում» գտնել աղքատություն-նից ու թշվառությունից ազատվելու միջոցներ:

Գերմանիա տեղափոխված թուրք հյուր-աշխատողների բնակության և աշխատանքի պայմանները, սակայն, բարվոք չէին. մեծամասամբ խուլ գյուղերից, որևէ մասնագիտություն չունեցող և երբեմն անգամ գրել-կարդալ չիմացող այդ մարդիկ, հայտնվելով Բեռլինի, Մյունխենի, Ֆրանկֆուրտի պես մեծ քաղաքներում, ստիպված էին ապրել համակենտրոնացման ճամբարներ հիշեցնող տներում, որտեղ 4-5 մարդ նույն սենյակում էին քնում, 15 հոգի մի զուգարանից օգտվում⁶⁹: Ստամբուլում գործող Դաշնային աշխատանքային բյուրոյի նախագահ Հանս Հառոսովսկին 1971 թ. հրապարակված իր հարցազրույցում նշել է. «Պետք է Անատոլիան տեսնել: Դրանից հետո կհասկանաք, թե ինչու՞ Գերմանիայում գտնվող թուրքերը նույնիսկ բարակներում իրենց լավ են զգում»⁷⁰: 1964 թ. սկսած ընտանիքների վերամիավորման ծրագրի շրջանակներում միգրանտները սկսեցին Գերմանիա տեղափոխել ծնողներին, կանանց ու երեխաներին, ինչը, անխուսափելիորեն, թուլացնում էր կապը հայրենիքի հետ և կրկնապատկում Գերմանիայում մնալու հավանականությունը: Նույնիսկ 1966-1967 թթ. տնտեսական ճգնաժամը չստիպեց թուրքերին հայրենիք վերադառնալ: Ավելին, 1968 թ. Թուրքիայում սկսված ուսանողա-

⁶⁸ Մանրամասն տե՛ս **Gür M.**, Sütü küstürmek: Almanya’da Anadolu kadınları, İstanbul, 2004, s. 157.

⁶⁹ **Uğurlu A. R.**, նշվ. աշխ., էջ 17.

⁷⁰ **Gitmez A. S.**, նշվ. աշխ., էջ 109.

կան շարժման դաժան ճնշումներն ու հետապնդումները ստիպեցին, որ բազմաթիվ «68-ականներ» մեկնեն Գերմանիա⁷¹:

Գերմանացիներին ևս ձեռնտու էր ցածր աշխատավարձով ծանր աշխատանք կատարելու պատրաստ թուրքերի ներկայությունը: Ավելին, 1960-ականների վերջին մի շարք վերլուծաբաններ թուրք միգրանտների հետ էին կապում ակտիվ զարգացող եվրոպական տնտեսությունների ապագան: Օրինակ, 1970 թ. ֆրանսիական «Soir» պարբերականում լույս տեսած մի վերլուծական հոդվածում ասվում էր. «Թուրքիան՝ աշխատուժ փնտրող եվրոպական արդյունաբերողների համար ամենամեծ աղբյուրներից մեկն է: Եվրոպացի արդյունաբերողները գիտեն, որ աշխատուժի մյուս աղբյուրները շուտով սպառվելու են: Իտալիան սկսում է ինքն օգտագործել իր ռեսուրսները: Իսպանիայում նոր աշխատատեղեր են հայտնվում: Պորտուգալիան էլ, անշուշտ, ի վիճակի չէ անընդմեջ աշխատողներ մատակարարել: Իսկ Աֆրիկան շատ հեռու է և շատ օտար: Թուրքիան վաղվա աշխատուժի հանքն է: Թուրքիայի բնակչությունը 2000 թ. գուցե 100 միլիոն լինի: Ներկայումս 3 միլիոն գործազուրկ և կիսագործազուրկ ունեցող Թուրքիան անսպառ աղբյուր է: Թուրքերն այժմ Եվրոպայում մոդայիկ են: Իրենց ֆիզիկական հասկանիշներով և բնավորության առանձնահատկություններով թուրքերն արդեն գրավել են գերմանացիներին: Մեկ տարվա ընթացքում Ֆրանսիան էլ կգրավեն»⁷²:

Այսպիսով, 1960-ականների վերջում միգրացիայի երկարաձգումը ձեռնտու էր թե՛ թուրքերին, թե՛ գերմանացիներին: Սակայն

⁷¹ 68-ականների շարժման մասին մանրամասն տես՝ **Şenocak Z.**, Turkey: The lost generation, p. 175, http://www.ghidc.org/files/publications/bu_supp/supp006/bus6_175.pdf.

⁷² **Gitmez A. S.**, նշվ. աշխ., էջ 107.

1973 թ. համաշխարհային նավթային ճգնաժամի պատճառով առաջ եկած տնտեսական խնդիրները ստիպեցին գերմանական իշխանություններին կասեցնել ներգաղթյալների հոսքը: Պաշտոնական ներգաղթի կասեցման արդյունքում, սակայն, աննախադեպ չափերի հասած ապօրինի ներգաղթի (մարդիկ որպես զբոսաշրջիկներ կամ հյուրախաղերի մեկնող սպորտային, պարային խմբերի անդամներ հատում էին սահմանն ու այլևս չէին վերադառնում) և ընտանիքների վերամիավորման գործընթացի շարունակման պատճառով գերմանաբնակ թուրքերի թիվը շարունակեց ավելանալ: Զարմանալի չէ, որ 1973 թ. «Der Spiegel» հանրահայտ ամսագրում տպագրված մի հոդված վերտառված էր. «Թուրքերը գալիս են: Փրկեք ինքներդ ձեզ»⁷³:

Որոշ ժամանակ անց ճգնաժամը հաղթահարվեց, սակայն 1960-ականների 100% զբաղվածությունն ապահովել այլևս չհաջողվեց: Գործազրկության առաջնային թիրախ դարձան միգրանտները, քանի որ գործատուների մեծ մասը նախընտրում էր աշխատանքի վերցնել տեղացիներին, իսկ արագ տեմպերով ավտոմատացող տնտեսությունում որակավորում չունեցող աշխատուժի կարիքը գնալով պակասում էր: Գործազուրկների սոցիալական ապահովման հոգսն ընկնում էր պետության ուսերին, ինչը մտահոգության առիթ էր դառնում և ստիպում փնտրել միգրանտների խնդիրը լուծելու ճանապարհներ: Բայց քանի որ 1970-ականների կեսերին Գերմանիան չէր ընկալվում որպես միգրանտական երկիր, ուստի իշխանությունների ջանքերն ավելի շատ ուղղված էին ոչ թե ինտեգրմանն, այլ միգրանտների ներհոսքի կանխմանն ու արտահոսքի խթանմանը: 1975 թ. պաշտոնապես հայտարարվեց, որ Գերմանիան հատել է օտարերկ-

⁷³ **Mortan K.**, նշվ. աշխ., էջ 249.

րացիներին ընդունելու սահմանը, և որոշում ընդունվեց մեկ վարչական շրջանում միգրանտների քանակը սահմանափակել բնակչության 6%-ով: Միաժամանակ օրենքի ուժով արգելվեց ոչ օրինական ներգաղթյալներին աշխատանք տալ, օրենքը խախտողներին սպառնում էր հինգ տարվա ազատազրկում և 5000 մարկ տուգանք: Սրան զուգահեռ քայլեր ձեռնարկվեցին ընտանիքների վերամիավորման ծավալները նվազեցնելու ուղղությամբ⁷⁴: 1980 թ. հոկտեմբերի 5-ին Գերմանիան վիզային ռեժիմ սահմանեց⁷⁵: Այս բոլոր միջոցառումներին հակառակ 1980 թ. սեպտեմբերի 12-ին Թուրքիայում տեղի ունեցած հեղաշրջումից հետո քաղաքական փախստականները հեղեղեցին Գերմանիան, իսկ գերմանաբնակ գասթարբայթերների մեծամասնությունը կարծես թե վերջնականապես հրաժարվեց հայրենիք վերադառնալու մտքից: Զարմանալի չէ, որ երբ 1983 թ. միգրանտներին առաջարկվեց որոշակի գումար հայրենիք վերադառնալու համար⁷⁶, միայն 150000 թուրք հայրենադարձվելու ցանկություն հայտնեց: Այսպիսով, 1980-ականների կեսերից միգրանտական խնդիրը մտավ գերմանական ներքին քաղաքականության օրակարգ: Միգրանտների խնդիրը հասկանալու և լուծումներ փնտրելու պատրաստականության մասին են վկայում այդ շրջանում կազմակերպվող կլոր-սեղան քննարկումները, գիտաժողովները, միջազգային միգրացիայի և զարգացման կենտրոնի բացումը:

⁷⁴ **Ünver C. O.**, Otuzbeş yıllık göç ve bürokrasi tanıklıklarım, Ankara, 2008, s. 81.

⁷⁵ Batı Avrupa Türkleri F. Almanya'da 30. yıl, s. 27.

⁷⁶ Այս մասին ավելի մանրամասն տես՝ Նահապետյան Հ., Թուրք-ադրբեջանական կառույցների հակահայկական գործունեությունը, Երևան, 2010, էջ 72: Տե՛ս նաև Batı Avrupa Türkleri F. Almanya'da 30. yıl, s. 21.

Այդ փուլում, սակայն, միգրանտների ինտեգրացիան գրեթե նույնականացվում էր ուժացման հետ, այսինքն մեծ մասամբ քննարկվում էր միգրանտներին արագորեն գերմանաֆիկացնելու հարցը:

Մինչ պետական պաշտոնյաները քննարկում և ուսումնասիրում էին թուրք միգրանտների ինտեգրման հնարավորությունները, հասարակության մի հատված՝ ծայրահեղ աջակողմյան հայացքներով տոգորված հակամիգրանտական արշավ սկսեց: 1981 թ. 15 գերմանացի համալսարանական պրոֆեսորներ հրապարակեցին այսպես կոչված «Հեյդելբերգյան մանիֆեստը», որում կոչ էին անում ազատվել թուրքերից և նախագրուշացնում, որ հակառակ դեպքում մի քանի տարի անց գերմանցիներն իրենց թաղամասերում օտար կդառնան⁷⁷: Գերմանական մամուլը հեղեղվեց հակաթուրքական հոդվածներով: Թուրքերի նկատմամբ թշնամանքն այնքան խորացավ, որ մի շարք գերմանական սրճարաններում և զվարճանքի վայրերում արգելվեց թուրքերի մուտքը, հիվանդանոցներում թուրք հիվանդներ չէին ընդունում, վարձով տուն չէին տալիս⁷⁸: Ավելին, 1985-1995 թթ. ընթացքում մոտ 100 թուրք «սքինհեդական» հարձակումների զոհ դարձավ⁷⁹: Հավելենք, որ մեր օրերում ևս «սքինհեդական» հարձակումներ տեղի են ունենում:

1989 թ. Բեռլինի պատի փլուզումը և դրան հաջորդած Գերմանիայի Դաշնային և Դեմոկրատական Հանրապետությունների միավորումը որակապես նոր իրավիճակ ստեղծեցին նաև թուրքերի համար: Աշխատաշուկան հեղեղվեց տնտեսապես թույլ զարգացած ԳԴՀ տարբեր տարածաշրջաններից, ինչպես նաև

⁷⁷ The Cambridge History of Turkey, p. 193.

⁷⁸ Նույն տեղում, էջ 19:

⁷⁹ Keskin H., նշվ. աշխ., էջ 21.

նախկին սոցիալիստական ճամբարի պետություններից եկող ներգաղթյալներով: Բավական բարձր կրթական, մասնագիտական մակարդակ ունեցող, լեզվին տիրապետող կամ դրա կրողը հանդիսացող այդ մարդիկ աշխատաշուկայում լուրջ մրցակցություն առաջացրին: Բացի այդ, տնտեսապես ավելի հետամնաց նախկին ԳԴՀ տարածքի բնակիչները գտնում էին, որ թուրքերից և այլ մուսուլմաններից ստացվող օգուտը մի քանի անգամ ավելի քիչ է, քան նրանց վճարվող սոցիալական նպաստների գումարը, որը ավելի լավ կլինեք ուղղել երկրի երկու մասերի միջև զարգացածության տարբերությունները վերացնելուն: Մի կողմից բնակչության դժգոհությունն ու գերմանական հասարակության մեջ տարածում գտած քսենոֆոբիայի և անհանդուրժողականության դրսևորումները, մյուս կողմից էլ հասարակական-քաղաքական առումով առաջին գասթարբայթերներից անհամեմատ ավելի ակտիվ թուրք միգրանտների երկրորդ սերնդի պայքարը առավել լայն իրավունքներ ունենալու, խտրական վերաբերմունքից պաշտպանված լինելու համար ստիպեցին նացիստական անցյալից ամեն կերպ ձերբագատվել ցանկացող գերմանական իշխանություններին քայլեր ձեռնարկել հասարակության հավասարակշռությունը պահպանելու համար: Առաջ քաշվեց բազմամշակութայնության գաղափարը: 1990 թ. որոշում կայացվեց փոփոխություն կատարել սահմանադրության մեջ և մի շարք պայմանների (այդ թվում ամբողջական զբաղվածություն, բավարար կենցաղային պայմաններ և գերմաներենի լավ իմացություն) բավարարելու դեպքում աշխատելու անժամկետ իրավունք շնորհել միգրանտներին: Իսկ 1991 թ. ընդունված Քաղաքացիության մասին նոր օրենքով քաղաքացիություն ստանալու արյան սկզբունքին գու-

գահեռ թույլատրվեց նաև հողի սկզբունքի կիրառումը⁸⁰: Նոր օրենքով Գերմանիայում ծնված երեխան 23 տարին լրանալուց հետո սեփական ցանկությամբ կարող է ընտրել Գերմանիայի քաղաքացիությունը: Ավելին, Գերմանիայում ծնված, բայց ինչ-որ պատճառներով մինչև 21 տարեկան երկրից հեռացած երիտասարդներին ևս թույլ տրվեց գերմանական քաղաքացիություն ստանալ: Այս դրական փոփոխությունների հետ մեկտեղ օրենքով էլ ավելի բարդացվեց նորեկ միգրանտների ապրելու և աշխատելու իրավունք ստանալու մեխանիզմը, և, որ ամենակարևորն է, արգելվեց երկքաղաքացիությունը⁸¹: Արդյունքում 2000 թ. օրենքի ուժի մեջ մտնելուց հետո քաղաքացիություն ստանալու համար դիմողների թիվը նվազեց: Պետական մակարդակով դրսևորվող խտրական քաղաքականությունը ստիպում է միգրանտներին հեռանալ Գերմանիայից երրորդ երկրներ կամ վերադառնալ հայրենիք: Ոչ պաշտոնական տվյալներով 2000 թ.-ից հետո Գերմանիայից մոտ 40 հազար թուրք վերադարձել է Թուրքիա⁸²: Նրանց թվում են այնպիսի հայտնի մարդիկ, ինչպես, օրինակ, ֆուտբոլիստներ Իլիան Մանսուրը, Ումիթ Քարանը, Ումիթ Դավալան, երգիչներ Թարքանը, Ռաֆեթ Էլ Ռոմանը, Ազեր Բյուլբյուլը և նույնիսկ ԺՀԿ անդամ Ալի Ռեզա Գյուլչիչեքը⁸³: Հայրենադարձվել ցանկացողների խումբը սակայն մեծ թիվ չի կազմում, թուրքերի մեծ մասը,

⁸⁰ **Diehl C., Blohm** Source M., Rights or Identity? Naturalization Processes among "Labor Migrants" in Germany, International Migration Review, Vol. 37, No. 1 (Spring, 2003), The Center for Migration Studies, New York, p. 135.

⁸¹ Almanya'ya Emek Göçü - Bir bavul, umut ve hayalleriyle çıktılar yola, Editörler: Fındıkçıoğlu Ü. S., Güler E. Z., İstanbul, s. 20.

⁸² **Mortan K.**, նշվ. աշխ., էջ 4.

⁸³ Almanya'ya Emek Göçü - Bir Bavul, Umut Ve Hayalleriyle çıktılar Yola, s. 38.

հատկապես երկրորդ-երրորդ սերնդի ներկայացուցիչներն իրենց համարում են գերմանական հասարակության մի մասնիկ:

Հարկ է նշել, որ 1998 թ. պաշտոնապես միգրանտական երկիր ճանաչվելուց հետո⁸⁴ Գերմանիան սկսել է լրջորեն զբաղվել միգրանտների ինտեգրման հարցով: Ինտեգրացիոն միջոցառումների շարքում հատկապես արժանահիշատակ է 2006 թ.-ին կանցլեր Անգելա Մերկելի հովանավորությամբ «խոսել իրար հետ, այլ ոչ իրար մասին» կարգախոսով իրականացված առաջին ինտեգրացիոն ժողովն ու 2007 թ.-ի վերջնական վեհաժողովը, որոնց արդյունքում ընդունվեց «ինտեգրացիայի ազգային պլանը»: Մոտ 200 էջ ծավալով այս ծրագիրը բաղկացած էր տեղական և դաշնային 150 պետական և մասնավոր հաստատությունների մասնակցությունը նախատեսող մոտ 400 նախագծերից: Առաջին հայացքից բավական խոստումնալից թվացող այս ծրագիրը մասնագիտական քննադատությանը չի դիմանում: Նախ, այդ պլանով նախատեսված 750 միլիոն եվրո բյուջեն առանց այն էլ ծախսվում է ամեն տարի⁸⁵: Բացի այդ, «ազգային պլանում» շրջանցված են այնպիսի կարևորագույն թեմաներ, ինչպիսիք են քաղաքացիության ստացումը, երկքաղաքացիությունը, ռասիզմի դեմ պայքարը: Պատահական չէ, որ Գերմանիայի թուրքերի միությունը և Կրոնական կառույցների միությունը բոյկոտեցին այս վեհաժողովները⁸⁶: «Ազգային պլանում» նախատեսված ծրագրերը մնացին թղթի վրա: Ավելին, 2010 թ. Անգելա Մերկելը հայտարարեց, որ բազմամշակութայնության գաղափարն իրեն սպառել է և անհրաժեշտ է ինտեգրման նոր ճանապարհներ գտնել: Փաստո-

⁸⁴ Նույն տեղում, էջ 130:

⁸⁵ **Keskin H.**, նշվ. աշխ., էջ 31.

⁸⁶ Նույն տեղում, էջ 45:

րեն գերմանական իշխանություններն ամենաբարձր մակարդակով ընդունեցին, որ իրենց իրականացրած միջոցառումներից և ոչ մեկը շոշափելի արդյունք չի տվել:

Նշենք, որ համայնքի ձևավորումից անցած 50 տարիների ընթացքում թուրքերի դերը գերմանական հասարակությունում շատ է փոխվել: Թուրք ներգաղթյալների երկրորդ և երրորդ սերնդի ներկայացուցիչների մեծ մասը տիրապետում է գերմաներենին, թուրքերի 56%-ը ապրում է գերմանաբնակ թաղամասերում, 18-30 տարեկան թուրքերի մոտ 90%-ը շփվում է գերմանացիների հետ: Վերջին 10 տարում Գերմանիայում սեփականություն ունեցող թուրքերի քանակը 6%-ից հասել է 25%-ի: Թուրք գործարարներն էլ ավելի ու ավելի ակտիվ ներգրավվում են Գերմանիայի տնտեսության մեջ՝ մասնավորապես սննդի, շինարարության, տեքստիլ արդյունաբերության, տուրիզմի ոլորտներում: Միջին և փոքր բիզնեսով զբաղվող գործարարների կողքին քիչ չեն նաև «կահույքի արքա» Մեդետ Բողբուրթի, «բետոնի թագավոր» Վուրալ Օգերի, «Էգեթուրք» ընկերության հիմնադիր Բուրհան Օնգյորենի նման խոշոր ձեռնարկատերերը⁸⁷: Գնալով մեծանում է թուրքերի մասնակցությունը Գերմանիայի քաղաքական կյանքում: 2011 թ. տվյալներով երկրի խորհրդարանի երկու պալատներում, ինչպես նաև նահանգների խորհրդարանների կազմում ընդհանուր առմամբ 80 թուրք պատգամավոր կար, այդ թվում Բունդեսբադի պատգամավորներ Հաքքը Քեսքինը, Լալե Աքգյունը, Ահմեթ Իյդիրլին, Թաջիթ-դին Յաթքընը, Սոցիալ-դեմոկրատական կուսակցության փոխնա-

⁸⁷ Pürsün D., Nasıl Kazandılar–Almanya’da zirveye çıkan Türk İşadamları Anlatıyor, İstanbul, 1998, s. 75.

խագահ Այդան Օզքինը⁸⁸, ծագումով քուրդ պատգամավոր Գըյասեթթին Չալանեռլինը⁸⁹, Բեռլինի խորհրդարանի անդամներ Օզջան Մուրլուն, Էմինե Դեմիրբյուքեն և այլոք⁹⁰: Գործադիր իշխանության համակարգում ներկայացված թուրքերից են Ներքին Սաքսոնիայի սոցիալական ապահովության ու ինտեգրացիայի նախարար Այգյուլ Օզքանն, Բադեն Վյուրթեմբերգի ինտեգրացիայի նախարար Բիլքայ Օնեյր⁹¹, իսկ ամենահայտնի թուրք քաղաքական գործիչն է «գերմանական Օբամա» անունով հայտնի Կանաչների առաջնորդ Ջեմ Օզդեմիրը:

Հասարակությանը բարեհաջող ինտեգրման այս օրինակները, սակայն, ավելի շուտ բացատրություն են, քան օրինաչափություն: Իսկ գերմանական հասարակությանը զուգահեռ ապրող թուրքական ենթամշակույթի գոյությունն անհերքելի է: Գերմանական մեծ քաղաքների թուրքական թաղամասերում մարդիկ ապրում են այնպես, կարծես երբեք էլ Գերմանիա չեն եկել. խոսում են միայն թուրքերեն, օգտվում բացառապես թուրքական խանութներից ու սրճարաններից: Այս թաղամասերում սովորական երևույթ են «պատվի սպանություններն» ու «արյան վրեժ» լուծելու դեպքերը:

Բնականաբար, թուրքական համայնքը կրթության, բարեկեցության և այլ ընդհանուր ցուցանիշներով ավանդաբար հետ է մնում թե՛ գերմանացիներից, թե՛ եվրոպական այլ երկրներից, նախկին սոցիալիստական ճամբարի պետություններից և նույ-

⁸⁸ **Hastürk M.**, Almanya siyasetinde Türk rüzgâri esiyor, <http://www.sabah.com.tr/dunya/2011/12/06/almanya-siyasetinde-turk-ruzgri-esiyor>.

⁸⁹ **Mortan K.**, նշվ. աշխ., էջ 174.

⁹⁰ **Ünver C. O.**, նշվ. աշխ., էջ 268-269.

⁹¹ Alman siyasetinde Türk kökenliler, <http://www.dw.de/alman-siyasetinde-t%C3%BCrk-k%C3%B6kenliler/a-15481848>.

նիսկ Հնդկաստանից ու Չինաստանից եկած միգրանտներից: Ցածր եկամուտներ ունեցող, սոցիալական նպաստով ապրող թուրքերի մեծ մասը գետտոյացված է, կյանքը նրանց համար սահմանափակվում է աշխատանք-սրճարան-մզկիթ-տուն շրջանակով⁹², որտեղ գերմանացիների հետ շփումների համար տեղ չկա: Երեխաների մեծ մասը տանն է դաստիարակվում, մանկապարտեզ չի գնում⁹³: Արդյունքում գերմաներեն լեզվի ոչ բավարար իմացությունը դառնում է դպրոցում վատ առաջադիմության պատճառ: Նշենք նաև, որ աշակերտների թուրքերենի իմացությունն էլ բավարար չէ, քանի որ ծնողների մեծ մասը խառնաշփոթից խուսափելու համար երեխաներին թուրքերենի դասերի չեն ուղարկում⁹⁴: Արդյունքում երեկոները, տանը՝ «Թուրքիայում», իսկ առավոտները դպրոցում՝ «Գերմանիայում» ապրող աշակերտների մեծ մասը լեզուներից ոչ մեկին լիարժեք չի տիրապետում⁹⁵: Լեզվական պատնեշը խանգարում է ուսմանը: Թուրք երեխաների միայն 42%-ն է տարրական դպրոցի վկայական ստանում, միջնակարգ դպրոցն ավարտում է 30%-ը⁹⁶, ցածր գնահատականների պատճառով միայն 14%-ն է բուհ ընդունվելու թույլտվություն ստանում⁹⁷: Արդյունքում աշխատանքի ընդունվելու հնարավորությունները կտրուկ նվազում են, գործազրկության մակարդակն էլ՝ աճում: Կրթության և զբաղվածության պակասը

⁹² **Yalçın K.**, Almanya'da Türkçe anadil eğitimi ve anadile emek verenler, Bochum, 2003, s. 24.

⁹³ **Türkdoğan O.**, նշվ. աշխ., էջ 42.

⁹⁴ Գերմանիայում թուրքերեն կրթության մասին մանրամասն տե՛ս Yalçın K, նշվ. աշխ., էջ 13-17:

⁹⁵ Նույն տեղում, էջ 38:

⁹⁶ **Сарацци Т.**, Германия. Самоликвидация, Москва, 2012, стр. 58.

⁹⁷ Bozkurt A., Education the key for Germany's Turks, <http://www.todayssazaman.com/columnist-261884-education-the-key-for-germanys-turks.html>.

նպաստում է թուրքերի շրջանում մարմնավաճառության, խաղամոլության, թմրամոլության տարածմանը: Ջարմանալի չէ, որ թեև թուրքերի հոծ բնակության վայրերում տեղացիները կարծես թե հարմարվել են նրանց ներկայության հետ, սակայն գերմանացիների մի նշանակալի մաս երկրում բնակվող մուսուլմաններին և, մասնավորապես, թուրքերին է համարում առկա սոցիալական խնդիրների գլխավոր մեղավոր, զգուշավորությամբ և նույնիսկ տհաճությամբ առնչվում նրանց հետ: Հակառակ թուրքական համայնքի մի մասի ունեցած հաջողություններին «ոյոներ» (շաուրմա) պատրաստող, բանջարավաճառ, հավաքարար թուրքի դասական կերպարը շատերի համար անփոփոխ է մնում: Գերմանիայում հայտնի անեկդոտի համաձայն. «Ի՞նչ գործ կարող է թուրքն ունենալ համալսարանում» հարցի պատասխանը միանշանակ է. «Հավաքարարի գործ»: Այսինքն՝ Գերմանիայում 50 տարի բնակվելուց հետո էլ թուրքերը տեղի բնակչության կողմից մեծ մասամբ չեն ընկալվում որպես հասարակության լիիրավ անդամ: Գերմանացիների նման դիրքորոշումը բնական է չի կարող նպաստել ինտեգրացիայի խորացմանը: Փաստորեն, կարելի է եզրակացնել, որ մի կողմից թուրքերի մոտ ինտեգրվելու ցանկության բացակայությունը, մյուս կողմից էլ գերմանական հասարակության նրանց ընդունելու անպատրաստությունը հավասարապես խոչընդոտում են ինտեգրացիոն գործընթացի առաջխաղացմանը:

ԱՎՍՏՐԻԱՅԻ ԹՈՒՐՔԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԸ

Ավստրիա թուրքերի պաշտոնական ներգաղթը սկսվեց 1964 թ. մայիսի 15-ին կնքված թուրք-ավստրիական միջպետական պայմանագրի հիման վրա, իսկ երկու տարի անց՝ 1966 թ. հոկտեմբերի 12-ին ստորագրված «Թուրքիայի և Ավստրիայի Հանրապետությունների միջև սոցիալական ապահովվածության մասին» պայմանագրով մեկնարկած ընտանիքների վերամիավորման գործընթացը էլ ավելի ամրապնդեց այս երկրում հաստատվելու թուրքերի նպատակները:

2011 թ. տվյալներով Ավստրիայում բնակվում էր մոտ 220 հազար թուրք⁹⁸, ովքեր հիմնականում կենտրոնացված են Վիեննայում, Վորարլբերգում, Ջալցբուրգում: Ավստրիայում, ինչպես և գրեթե բոլոր եվրոպական երկներում, թուրքական համայնքն բախվում է մի շարք խնդիրների հետ, որոնց շարքում առաջնային կարևորություն ունի գործազրկության հարցը: Շեշտենք, որ չնայած Ավստրիայում անապահովության նպաստ ստանում են միայն երկրի քաղաքացիները, իսկ երկար ժամանակ առանց աշխատանքի մնացող միգրանտներին որպես կանոն երկրից արտաքսում են՝ թուրքերի շրջանում գործազրկության ցուցանիշն ավստրիացիներից անհամեմատ ավելի բարձր է և կարող է հասնել նույնիսկ 50 տոկոսի: 2009 թ. անցկացված հարցումների արդյունքում պարզվել է, որ թուրք գաղթականների միայն 54 %-

⁹⁸ **Demir N.**, «Türkiye-Avusturya Eğitim İlişkileri», Zeitschrift für die Welt der Türken, Journal of World of Turks, Vol. 3, No. 3, München, 2011, p. 23.

ն է աշխատում, իսկ կանանց դեպքում՝ 39 %-ը, միննույն ժամանակ թուրքերի գործազրկությունը 14 %-ով գերազանցում է ավստրիացիների գործազրկությանը⁹⁹: Հարկ է նշել, որ թուրքերը որպես կանոն զբաղվում են ցածր վարձատրվող, որակավորում չպահանջող աշխատանքներով: Նրանց գործունեության հիմնական ոլորտները արդյունաբերությունն ու սպասարկումն են (բանվորներ, մաքրուհիներ, սպասավորներ, մատուցողներ): Անհատ ձեռնարկատեր թուրքերի թիվը ընդամենը 1,4% է (ավստրիացիների և ոչ թուրք միգրանտների շրջանում՝ համապատասխանաբար 12,5% և 7,6%):

Գործազրկությունը հանգեցնում է թմրամոլության, ալկոհոլիզմի, հանցավորության բավականին բարձր մակարդակի¹⁰⁰: Թուրքերի շրջանում գործազրկության բարձր մակարդակը, իսկ աշխատողների շրջանում որակյալ կադրերի բացակայությունը բացատրվում է առաջին հերթին կրթական լուրջ բացով: Թուրք երեխաները հազվադեպ են հաճախում մանկապարտեզ: Թեև 6-15 տարեկան բոլոր անձանց համար կրթությունը պարտադիր է անկախ քաղաքացիությունից ու ազգությունից, թուրք երեխաների 3/4-ը մի կերպ է ավարտում տարրական դպրոցը, իսկ բարձրագույն ուսումնական հաստատություններում սովորող թուրքերի քանակը աննշան է: Զարմանալի չէ, որ թուրքերն ունեն Ավստրիայում բնակվող միգրանտների շարքում բարեկեցության ամենացածր ցուցանիշը: Փակ շղթայի սկզբունքով կրթության ցածր մակարդակի հիմնական պատճառներից է լեզվի չիմացու-

⁹⁹ Avusturya'da yaşayan Türkler: Göç, Entegrasyon, Katılım,
<http://www.bmeia.gv.at/tr/bueyuekelcilik/ankara/danisma/avusturyada-yasayan-tuerkler.html>

¹⁰⁰ Avusturya'daki Türkler Raporu (Sorunlar ve Öneriler), <http://www.alternatifhaber.at/haber/391/avusturyadaki-turkler-raporu-sorunlar-ve-oneriler.html>

թյունը, որն էլ իր հերթին թույլ չի տալիս կանոնավոր կրթություն ստանալ և լավ աշխատանք գտնել: Սրա հետ մեկտեղ երկրորդ-երրորդ սերնդի միգրանտները թուրքերենին էլ բավարար չափով չեն տիրապետում, քանի որ ավստրիական դպրոցներում թուրք երեխաների համար կազմակերպվող մայրենի լեզվի դասերը պարտադիր չեն և աշակերտի ընդհանուր առաջադիմության վրա չեն ազդում: Հիմնական դասերից հետո շաբաթական մեկ-երկու անգամ գործող այս խմբերը կազմվում են առանց հաշվի առնելու սովորողների մտավոր ու տարիքային տարբերությունները, ինչը զգալիորեն ազդում է դասընթացների որակի վրա:

Ավստրիայի թուրքերի խնդիրները ուսումնասիրել է և զեկույցի տեսքով ներկայացրել Թուրքիայի Ընտանիքի և սոցիալական ուսումնասիրությունների գլխավոր տնօրինությունը՝ դրանք ներկայացնելով մի քանի հիմնական կետով: Նախ «ներմուծվող» հարսնացուների և փեսացուների խնդիրը. վերջիններս հիմնականում դժվարացնում էին ինտեգրացիան, բացի դրանից, այս երիտասարդները մեծամասամբ բարեկամական կապեր են ունենում իրենց ամուսինների հետ, ինչը ազդում է նրանց երեխաների առողջության վրա: Միևնույն ժամանակ աճում է ամուսնալուծությունների հարաբերակցությունը երկրորդ և երրորդ սերնդի ներկայացուցիչների շրջանում: Ծնողների կրթության պակասը, ինչպես նաև գերմաներենին չտիրապետելը ևս բացասական ազդեցություն է ունենում երեխաների կրթության և ապագայի վրա: Նաև բավականին բարձր է թմրամոլության և ալկոհոլի օգտագործման մակարդակը¹⁰¹:

¹⁰¹ Avusturya'daki Türkler Raporu (Sorunlar ve Öneriler), <http://www.alternatifhaber.at/haber/391/avusturyadaki-turkler-raporu-sorunlar-ve-oneriler.html>

Անցնելով թուրքերենի ուսուցմանը՝ պետք է նշել, որ 1973-1991 թթ. Ավստրիայում ապրող թուրք երեխաներին թուրքերեն էին սովորեցնում Թուրքիայի Ազգային կրթության նախարարության կողմից ուղարկված ուսուցիչները: Դպրոցներում դասընթացներ կազմակերպելու համար հարկավոր էր, որ ամենաքիչը 12 երեխայի խնամակալները գրավոր դիմում ներկայացնեին դպրոցի վարչություն: Դասերը անցկացվելու էին շաբաթական մեկ-երկու անգամ, օրվա երկրորդ կեսին, այս դասընթացների գնահատականները որևէ ազդեցություն չէին ունենալու աշակերտների դպրոցական ընդհանուր գնահատականների վրա: Հետաքրքիր է, որ լեզվի խմբեր բացելիս որևէ ուշադրություն չէին դարձնում սովորողների մտավոր, ինչպես նաև տարիքային տարբերություններին, ինչը, բնականաբար, զգալի ազդեցություն է ունենում դասընթացների որակի վրա:

2015 թ. որոշակի փոփոխություններ են տեղի ունեցել իսլամական կրթության հետ կապված: Երկար բանավեճերից հետո Ավստրիական պառլամենտը որոշում է ընդունել, որի համաձայն իմամները, որոնք ուղարկվում էին արտասահմանից (տվյալ դեպքում՝ Թուրքիայից) պետք է գերազանցապես տիրապետեն գերմաներենին, Ղուրանի ընթերցում-ները անցկացնեն գերմաներենով, իսկ աշխատավարձը ստանան Ավստրիայի կառավարության կողմից: Վերջիններիս արգելվում է գումար ստանալ օտարերկրյա ցանկացած ֆոնդից: Այս քայլով Ավստրիացիների ցանկանում են պաշտպանել երկիրը ծայրահեղական գաղափարախոսությունների ներմուծումից¹⁰²:

¹⁰² Turkish President Denounces Austria's New Law on Islam,
<http://sputniknews.com/politics/20150228/1018900313.html>

Այս օրենքի ընդունումը դրական է գնահատել թուրք պատգամավոր Էֆդանի Դյոնմեզը, ով ասել է, որ սա շատ ճիշտ որոշում է և Ավստրիա ուղարկվող իմամները պետք է տարբերվեն Անատոլիայի հովիվներից: Վերջինս նաև խոսել է նաև ԱԶԿ-ին և Թայիփ Էրդողանին աջակցելու համար հավաքված հինգ հազար ավստրիոթուրքերի մասին, ասելով, որ ինքը մեծ հաճությամբ այս թուրքերին տոմսեր կտար և կուղարկեր հետ Թուրքիա: «Նրանց հետևից ոչ ոք չի լացի», - ասել է Դյոնմեզը¹⁰³:

Խոսելով քաղաքացիության մասին՝ պետք է շեշտել, որ Ավստրիայում քաղաքացիություն ստանալը բավականին խնդրահարույց գործ է: Երկրի ողջ պատմության ընթացքում ինտեգրացիան նույնացվել է ասիմիլացիայի հետ: 1998 թ. ընդունվեց նոր օրենք քաղաքացիություն ստանալու մասին, որը շարունակում էր հիմնված մնալ արյան սկզբունքի վրա, ինչպես նաև պահանջում էր 10 տարվա բնակություն Ավստրիայում: Դիմորդը, ով ցանկանում է դառնալ երկրի քաղաքացի, նախնառաջ պետք է ապացուցի, որ ինտեգրվել է հյուրընկալող հասարակության մեջ, տնտեսապես ապահովված է և չունի սոցիալական օգնության կարիք, ինչպես նաև գերազանցապես տիրապետում է գերմաներենին: Եթե դիմորդ կատարել է քրեական հանցագործություն, ապա նրան քաղաքացիություն չեն տալիս:

Չնայած քաղաքացիություն ստանալու բավական բարդ ու երկարատև գործընթացին Ավստրիայում բնակվող թուրքերի 53 %-ն ունի քաղաքացիություն¹⁰⁴: Ավելին, վերջերս Ավստրիայում տպագրված «Մենք գալիս ենք» գրքի հեղինակ երիտասարդ

¹⁰³ Avusturya genel seçimleri ve Türkler, <http://www.havadis.at/makale/avusturya-genel-secimleri-ve-turkler-m8.html>

¹⁰⁴ **Wets J.**, «The Turkish Community in Austria and Belgium: The Challenge of Integration», Turkish Studies, vol. 7, n. 1, London, 2010, p. 89.

ավստրոթուրք Ինան Թյուրքմենը, պնդելով, որ Եվրոպայի ապագան թուրքական է և կոչ անելով բոլոր թուրքերին միավորվել եվրոպական գոռոգամտության դեմ պայքարում, գրել է. «Անկախ նրանից, դուք [նկատի ունի եվրոպացիներին] սիրում եք մեզ [թուրքերին] թե ոչ, ինտեգրում եք, թե ոչ, ուզում եք մեզ տեսնել ԵՄ կազմում, թե ոչ, մեր ազդեցությունը Եվրոպայում մեծանում է: Մենք ավելի մեծաթիվ ենք, երիտասարդ, նպատակասլաց: Մեր տնտեսությունը ավելի արագ է զարգանում: Մենք ավելի ուժեղ ենք»¹⁰⁵:

Նման հայտարարություններն էլ ավելի են խորացնում երկրում առանց այդ էլ տիրող հակաթուրքական տրամադրությունները: Նշենք, որ ի տարբերություն մյուս եվրոպական երկրների, Ավստրիայում թուրքերի նկատմամբ ընդգծված բացասական վերաբերմունքը կապված է նաև պատմական անցյալի հետ: XIV-XIX դարերում Ավստրիայի և Օսմանյան կայսրության միջև բազմաթիվ ռազմական առճակատումներ են եղել, օսմանյան զորքերը 1529 թ. և 1683 թ. պաշարել են Վիեննան: Ուշագրավ է, որ ամեն առիթով ավստրիացիները շեշտում են, որ միմիայն իրենց խիզախության շնորհիվ Եվրոպան հիմա իսլամական տարածք չէ: Չնայած Առաջին Համաշխարհային պատերազմում Թուրքիան և Ավստրիան հանդես էին գալիս որպես դաշնակիցներ, հակաթուրքական տրամադրությունները երկրում այդպես էլ չվերացան: Ներկայումս էլ Ավստրիայի տարբեր քաղաքներում կան բազմաթիվ հուշարձաններ, որոնք հիշեցնում են թուրքական արշավանքների մասին: Օրինակ, Վիեննայի՝ 1683 թ. պաշարման ընթացքում թուրքերի կողմից Պերխթուդսդորֆի բնակչության կո-

¹⁰⁵ Angry Turk's Message for Europe: "We are Coming", <http://www.gatestoneinstitute.org/2947/angry-turks-europe>

տորածին նվիրված ցուցադրություններ կան տեղական թանգարաններում¹⁰⁶: Հետաքրքիր է, որ Վիեննայի պատերազմի մասին հարց կա անգամ Ավստրիայի քաղաքացիություն համար հանձնվող քննության մեջ¹⁰⁷:

Դարեր ի վեր եկող այս թշնամանքը մեր օրերում էլ չի պակասում: Նախընտրական պաստառների վրա հաճախ են նկատվում ռասայական խտրականության դրսևորումներ: Օրինակ, տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունների ժամանակ Ավստրիայի Ազատություն կուսակցության տարածած բրոշյուրները ներկայացնում էին 1683 թ. Վիեննայի պաշարումից մի դրվագ. օսմանյան փաշան ցանկանում է Վիեննայում գտնվող Ստեփանոս եկեղեցու կողքին հսկայական մինարեթ կանգնեցնել, իսկ ավստրիացի սպան, ում մարմնավորում է Ազատության կուսակցության նախագահ Հայնց Քրիստիան Շտրահեն, ասում է իր կողքին կանգնած փոքրիկ տղային. «Եթե Մուսթաֆային պարսատիկով խփես, քեզ երջիկ կտամ»: Երեխան հարվածում է և հաջողության հասնում¹⁰⁸: Իսկ նույն կուսակցության քարոզչական ցուցանակներից մեկին պատկերված էին Թուրքիայի և ԵՄ դրոշները, իսկ նրանց միջև կարմիր խաչ, որ մի կողմից խորհրդանշում էր քրիստոնեական սուրբ նշանը, մյուս կողմից էլ կոչ անում Թուրքիայի ԵՄ անդամակցության վերաբերյալ հնարավոր պլեբիսցիտում «դեմ» քվեարկել: Ավելին, վերջին տարիներին երկրի իշխանությունները փորձում են ամեն կերպ

¹⁰⁶ **Matzka C.**, Austria and Turkey: their burden of histories, University of Education in Vienna, p. 1

<http://www.herodot.net/conferences/Ayvalik/papers/geog-01.pdf>

¹⁰⁷ Նույն տեղում, էջ 2:

¹⁰⁸ Avusturya'da Türkler'e karşı ırkçı broşür, <http://haber.sol.org.tr/el-kapilari/avusturya-da-turkler-e-karsi-irkci-brosur-haberi-33782>

կասեցնել ներգաղթյալների հոսքը, հնարավորինս արագ ինտեգրել արդեն իսկ իրենց երկրում բնակություն հաստատած միգրանտներին:

1997 թ. ընդունվեց նոր օրենք, որը խստացնում էր մուտքը երկիր, ինչպես նաև բնակությունը: Այս բարեփոխումը ձեռնտու էր այն գաղթականներին, որոնք ութը տարուց ավել բնակվում էին Ավստրիայում, կամ ծնվել էին այնտեղ. վերջիններիս երկրից դուրս չէին կարող արտաքսել: Մնացածների դեպքում արտաքսումը դառնում էր ավելի հավանական: Արդեն 2000 թ. պառլամենտական ընտրություններից հետո, երբ Ավստրիայի Ազատություն կուսակցությունը (Freiheitliche Partei Österreichs, այսուհետ՝ FPÖ), որն հակազաղթական քարոզարշավ էր անցկացնում, և Ժողովրդական կուսակցությունը (Österreichische Volkspartei, այսուհետ՝ ÖVP) կռաժգրություն կազմեցին, տեղի ունեցան մի քանի փոփոխություններ Փախստականների և Օտարականների մասին ակտերում: Նախ խստացվեց աշխատանքային գաղթը, ապա պարտադիր դարձավ գաղթականների՝ ավստրիական լեզվի, մշակույթի, պատմության մասին դասերին հաճախելը: 2000 թ. խստացվեցին աշխատանքային միգրացիայի պայմանները, ավելի ուշ պարտադիր դարձավ միգրանտների՝ լեզվի, մշակույթի, պատմության մասին դասերին հաճախելը: 2015 թ. երկրում ծայրահեղ գաղափարախոսությունների տարածումից խուսափելու համար ավստրիական պառլամենտը որոշում ընդունեց արգելել իսլամական կազմակերպությունների ֆինանսավորումն արտերկրից և սահմանափակել արտերկրից եկող իմամների քանակը¹⁰⁹: Այս քայլերը դրական արձագանք

¹⁰⁹ Turkish President Denounces Austria's New Law on Islam, <http://sputniknews.com/politics/20150228/1018900313.html>

գտան ավստրիական հասարակության մեջ՝ բարձրացնելով իշխող կուսակցության վարկանիշը¹¹⁰: Ավստրիացիների կողմնակալ վերաբերմունքը սակայն առաջացնում է թուրքական կողմի դժգոհությունը: 2010 թ. Վիեննայում Թուրքիայի դեսպան Քադրի Էջվեդ Թեզզանը «Die Presse»-ին տված հարցազրույցում հայտարարեց, որ ավստրիացիները թուրքերին վերաբերում են ինչպես վիրուսի¹¹¹, ապա անդրադառնալով երկրի հիմնական կուսակցությունների մոտեցումներին՝ հավելեց, որ դրանք բոլորն էլ միգրանտների հանդեպ վարում են ծայրահեղ ազգայնամոլական, այլատյաց քաղաքականություն:

Հակաթուրքական տրամադրությունների սրմանը նպաստում են նաև ներկայիս թուրքական կառավարության և Ավստրիայի իշխանությունների լարված հարաբերությունները: Օրինակ, 2014 թ. ամռանը Էրդողանի՝ Վիեննա կատարած այցից առաջ Ազատության կուսակցության նախագահ Հայնց Քրիստիան Շտրահեն հայտարարել էր. «Էրդողանը լավ կանի տանը մնա»: Ավստրիայի արտաքին գործերի նախարար Սեբաստիան Քուրզն էլ իր հերթին զգուշացրել էր Էրդողանին չպառակտել ավստրիական հասարակությունը և ինտեգրացիային խանգարելու փոխարեն՝ աջակցել: Դրան հակառակ Էրդողանը իր ելույթում թուրքերին կոչ էր արել ինտեգրվել, բայց չասիմիլացվել՝ առաջացնելով ավստրիական կառավարության դժգոհությունը¹¹²:

¹¹⁰ **Matzka C.**, «Austria and Turkey: their burden of histories», University of Education in Vienna, p. 1,

<http://www.herodot.net/conferences/Ayvalik/papers/geog-01.pdf>

¹¹¹ Austria treats Turks 'like a virus', ambassador claims, <http://www.theguardian.com/world/2010/nov/11/austria-treats-turks-like-virus-ambassador-claims>

¹¹² Erdogan tells Turks not to assimilate into Austria,

Հարկ ենք համարում նշել, որ չնայած Ավստրիայում գործում են 120-ից ավել թուրքական կազմակերպություններ և մշակութային միություններ, սակայն համայնքը միավորված չէ, ավելին քաղաքական լուրջ ակտիվություն չի ցուցաբերում: 2013 թ. կայացած խորհրդարանական ընտրություններում երեք հիմնական՝ Սոցիալ-դեմոկրատական, Ժողովրդական և Կանաչների կուսակցությունների ընտրացուցակներում ընդհանուր առմամբ 25 ազգությամբ թուրք թեկնածու կար¹¹³, սակայն խորհրդարանի ստորին պալատ մտան նրանցից երեքը՝ Կանաչների կուսակցությունից Ալև Քորունը և Բերիվան Ասլանը, Սոցիալ-Դեմոկրատական կուսակցությունից Նուրթեն Յըլմազը¹¹⁴: Վերին պալատի անդամ է Կանաչների կուսակցության ներկայացուցիչ Էֆգանի Դյոնմեզը: Եվս մի քանի թուրք պատգամավորներ կան տեղական խորհրդարաններում, մասնավորապես Վիեննայում՝ Շենոլ Աքքըլըչը (Կանաչների կուսակցություն) և Շաֆաք Աքչայը (Սոցիալ-դեմոկրատական կուսակցություն), Վորարլբերգում՝ Վահիդե Այդընը (Կանաչների կուսակցություն) և Տիրոլում՝ Ահմեդ Դեմիրը (Կանաչների կուսակցություն)¹¹⁵:

Ավստրիայի պառլամենտի միակ թուրք պատգամավորը Ալև Քորունն է, ով հրավիրում է տեղացի թուրքերին քվեարկել

http://austriantimes.at/news/General_News/2014-06-20/51299/Erdogan_tells_Turks_not_to_assimilate_into_Austria

¹¹³ Avusturya genel seçimleri ve Türkler,

http://www.havadis.at/makale/avusturya-genel-secimleri-ve-turkler-_m8.html

¹¹⁴ http://www.zaman.com.tr/dunya_avusturyada-turk-kokenli-uc-milletvekili-yemin-etti_2158923.html

¹¹⁵ <http://www.mfa.gov.tr/turkiye-avusturya-siyasi-iliskileri-.tr.mfa>

Կանաչների օգտին¹¹⁶: Վերջինս հայտարարել է, որ մտադիր է պաշտպանել Ավստրիայում հաստատված փախստականների իրավունքները, ինչպես նաև սատարելու է Թուրքիայի ԵՄ անդամակցությանը: Ավստրիայի խորհրդարանի վերին պալատի անդամ է նաև Կանաչների ներկայացուցիչ Էֆդանի Դյոնմեզը:

¹¹⁶ Avusturya genel seçimleri ve Türkler,
http://www.havadis.at/makale/avusturya-genel-secimleri-ve-turkler-_m8.html

ՖԻՆԱՆՍԻԱՅԻ ԹՈՒՐքԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԸ

Տնտեսության վերելքով պայմանավորված աշխատուժի բացը լրացնելու համար օտարերկրացիների ներմուծումը Ֆրանսիայում սկսվեց դեռևս 1945 թ.¹¹⁷: Թուրքիայի հետ աշխատուժի տրամադրման պայմանագիրը կնքվեց 1966 թ.: Ընդ որում, Ֆրանսիա մեկնող առաջին թուրք աշխատավորները մինչ այդ դիմել էին «Թուրքական աշխատանքային գրասենյակ» Գերմանիա գնալու համար, բայց քանի որ գերմանական աշխատաշուկան արդեն ողողված էր թուրքական աշխատուժով, նրանց ուղարկեցին Ֆրանսիա¹¹⁸: Գաղթի այս փուլը հայտնի է որպես «անոնիմ գաղթ», իսկ մյուս փուլը կոչեցին «անվանական գաղթ», քանի որ աշխատավորներին վարձում էին ըստ կոնկրետ սեկտորների պահանջի¹¹⁹: Աշխատուժի պաշտոնական ներմուծումը շարունակվեց մինչև 1974 թ.: Սակայն միգրանտների հոսքը կանգ չառավ. այն շարունակվեց ընտանիքների վերամիավորման կամ նոր ամուսնությունների տեսքով: Ֆրանսիայի իշխանությունները ստիպված էին քայլեր ձեռնարկել միգրացիան կասեցնելու հա-

¹¹⁷ **Castles S.**, The Guest - Worker in Western Europe - An Obituary, International Migration Review, Vol. 20, No. 4, 1986 Winter, p. 763.

¹¹⁸ **Kaya A., Kentel F.**, Euro - Turks: A bridge or a breach between Turkey and the EU?, The Centre for European Policy Studies, Brussels, January 2005, p. 13.

¹¹⁹ **Kaya A., Kentel F.**, «Euro - Turks: A bridge or a breach between Turkey and the EU?», The Centre for European Policy Studies, Brussels, January 2005, p. 13:

մար. մասնավորապես՝ 1977 թ. ապրիլից 1981 թ. նոյեմբեր ընկած ժամանակահատվածում կառավարությունը հայրենիք վերադառնալու համար միգրանտներին առաջարկում էր 10.000 ֆրանկ¹²⁰: Այս ծրագիրը սակայն լուրջ արդյունքներ չտվեց: Գաղթականների վերջին հոծ ալիքը Ֆրանսիա ժամանեց 1986 թ., երբ Ֆրանսուա Միտերանն որոշում կայացրեց անօրինական գաղթականներին բնակության իրավունք տալ¹²¹:

Շուտով կառավարության ծրագրերում սկսեց տեղ գտնել ինտեգրացիոն քաղաքականությունը: Նախ առաջ եկավ քաղաքացիություն ստանալու հարցը: Դեռևս ֆրանսիական հեղափոխությունից սկսած՝ Ֆրանսիայի քաղաքացիություն էին տալիս բոլոր նրանց, ովքեր իրենց գործով ապացուցում էին կամ գրավոր ձևով երդվում հավատարիմ մնալ հեղափոխության դրույթներին: «Արյան իրավունքի» սկզբունքով քաղաքացիություն էր շնորհվում ֆրանսիացի ծնողներից ծնված երեխային, իսկ 1889 թ. նոր օրենսդրությամբ քաղաքացիություն սկսեցին շնորհել գաղթականների երկրորդ սերնդին: Այս օրենքը մի քանի փոփոխություններով գործում է մինչև այսօր: Այժմ քաղաքացիություն են ստանում գաղթականների երրորդ սերնդի ներկայացուցիչները, իսկ երկրորդ սերնդի ներկայացուցիչները 18 տարեկանում պետք է դիմում ներկայացնեն: Դրական պատասխան ստանալու համար վերջիններս պետք է վերջին հինգ տարիները անցկացրած լինել Ֆրանսիայում, ինչպես նաև քրեական պատասխանատվու-

¹²⁰ **Kirszbaum T., Brinbaum Y., Simon P., Gezer E.**, The children of immigrants in France: The emergence of a second generation», Innocenti Working Paper, no. 2009-13, Florence, UNICEF Innocenti Research Centre, October 2009, p. 21, http://www.unicef-irc.org/publications/pdf/iwp_2009_13.pdf

¹²¹ **Erbaş A.**, Fransa'da Yaşayan Türkler
<http://www.tarihtarih.com/?Syf=26&Syz=359009>

թյան ենթարկված չլինեն¹²²: Այնուամենայնիվ, այս օրենքն արժանացավ շատ խիստ քննադատության հատկապես աջակողմյան կուսակցությունների կողմից, որոնք գտնում են, որ քաղաքացիությունը շնորհվում է առանց համոզված լինելու, որ տվյալ անձը ինտեգրացվել է: Եվ իրոք, ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ թուրքական համայնքները ամենադժվարն են ինտեգրացվում, այսպիսով ստեղծելով զուգահեռ հասարակություններ: Սրա ապացույց կարող է հանդիսանալ Ֆրանսիայի արևելքում 1993 թ. օգոստոսին տեղի ունեցած 15-ամյա թրքուհու սպանությունը: Հետաքննությունը պարզել էր, որ աղջկան սպանել են հայրը և եղբայրը, քանի որ աղջիկը հրաժարվում էր գլխաշոր կրել, սպորտային կոշիկներ էր հագնում, հաճախում էր լողավազան, չէր ցանկանում ամուսնանալ հոր ընտրած թեկնածուի հետ: Դատավարության ժամանակ թուրքական մի շարք ընտանիքներ աջակցություն հայտնեցին մարդասպաններին, սակոչելով «սպանություն պատվի համար»: Իսկ ֆրանսիական մամուլը գրեց, որ ինտեգրացիայի ակնհայտ նշանները թուրքական ընտանիքում համարեցին անպատիվ արարք¹²³:

Ինչպես ամենուր Եվրոպայում, այնպես էլ Ֆրանսիայում ի սկզբանե միգրանտները դիտարկվում էին որպես ժամանակավոր աշխատուժ, ուստի զարմանալի չէ, որ նրանց ինտեգրելու փոխարեն ֆրանսիական կառավարությունը ջանքեր էր գործադրում միգրանտների ինքնությունը պահպանելու համար, որպեսզի նրանք, վերադառնալով հայրենիք, մայրենի լեզվի և մշա-

¹²² **Kaya A., Kentel F.**, «Euro - Turks: A bridge or a breach between Turkey and the EU?», The Centre for European Policy Studies, Brussels, January 2005, p. 14.

¹²³ **Նահապետյան Հ.**, «Թուրք-ադրբեջանական կառույցների հակահայ գործունեությունը», Երևան, 2010, էջ 83:

կույթի հետ խնդիրներ չունենան: 1978 թ. սեպտեմբերի 22-ից թուրքերի հոծ բնակության վայրերում դպրոցներում դասերից հետո սկսեցին թուրքերեն և թուրքական մշակույթ դասավանդել¹²⁴: Իսկ 1994 թ. սկսած լիցենզերում թուրքերենը դասավանդվում է որպես կամընտրական օտար լեզու: Այս նախաձեռնություններին հակառակ թուրքերի մեծ մասը հայրենիք վերադառնալու ցանկություն չունի: Ներկայումս ըստ թուրքական հյուպատոսարանի պաշտոնական տվյալների Ֆրանսիայում ապրում է 611.515 թուրք¹²⁵:

Ֆրանսիայի թուրքական համայնքը ունի մի շարք խնդիրներ: Անդրադառնալով համայնքի կրթվածության մակարդակին՝ մեջբերենք տվյալներ Ամստերդամի համալսարանի դասախոսների կողմից Հոլանդիայում, Ֆրանսիայում, Բելգիայում, Գերմանիայում, Ավստրիայում և Շվեդիայում թուրք միգրանտների երկրորդ սերնդի կրթական խնդիրների վերաբերյալ արված համեմատական ուսումնասիրությունից: Համեմատելով Ֆրանսիայի, Բելգիայի և Գերմանիայի երիտասարդներին՝ գիտնականները պարզել են, որ չնայած Ֆրանսիայում և Բելգիայում թուրքերի կրթվածության ցածր մակարդակին, բարձրագույն կրթություն ունեցողների թիվը զգալիորեն գերազանցում է Գերմանիայում արձանագրված տվյալներին: Ըստ էության սրա գլխավոր պատճառներից մեկն այն է, որ Ֆրանսիայում և Բելգիայում երեխաները սկսում են տարրական դպրոց հաճախել երկու կամ մեկուկես տարեկա-

¹²⁴ Fransa Raporu, Türkiye Büyük Millet Meclisi İnsan Haklarını İnceleme Komisyonu, s. 4, http://www.tbmm.gov.tr/komisyon/insanhaklari/belge/fransa_raporu.pdf

¹²⁵ La communauté turque compte 611.515 personnes en France, <http://www.zamanfrance.fr/article/communaute-turque-compte-611515-personnes-en-france-7311.html>

նից, իսկ Գերմանիայում՝ վեց տարեկանից¹²⁶: Արդյունքում, Ֆրանսիայի և Բելգիայի թուրք երեխաները ավելի վաղ են սկսում շփվել իրենց տարիքակիցների հետ, ինչն էլ նպաստում է լեզվական հմտությունների զարգացմանը: Միևնույն ժամանակ, տարրական կրթություն ստանալով դպրոցը թողնող թուրք երեխաների թիվը ավելի բարձր է Ֆրանսիայում: Թուրքերի կրթության մասին խոսելիս հարկ ենք համարում անդրադառնալ նաև 2009 թ. Ֆրանսիայում բացված գյուլլենական դպրոցին¹²⁷, որը հավակնում է դառնալ տարածաշրջանի լավագույն դպրոցներից մեկը¹²⁸: Կրթված երիտասարդների համեմատաբար մեծ թվին հակառակ համայնքը ապրում է չինտեգրված, մեկուսի կյանքով: Սրա ապացույցն են ժամանակ առ ժամանակ հասարակությունը ցնցող «պատվի սպանությունները» և «արյան վրեժի արտահայտումները»¹²⁹: Համայնքի մեկուսացվածությունը պարարտ հող է ստեղծում ծայրահեղ իսլամական գաղափարախոսությունների տարածման համար: Դեռևս Ֆրանսուա Միտերանի իշխանության տարիներին կառավարությունը սկսեց աջակցել «ֆրանսիական իսլամին»՝ նպատակ ունենալով թուլացնել արտասահմանից ներմուծվող գաղափարախոսությունների ազդեցությունը Ֆրան-

¹²⁶ **Crul M., Vermeulen H.**, «The second generation in Europe», International Migration Review, vol. 37, no. 4, Winter 2003, p. 969.

¹²⁷ Եվրոպայում գործող գյուլլենական դպրոցների մասին մանրամասն տե՛ս <http://www.turkiyeegitim.com/fethullah-gulenin-hangi-ulkede-kac-okulu-var-15713h.htm>

¹²⁸ Türkler, Fransa'da göçmenlerin eğitim sorununa çözüm sağlıyor, http://www.zaman.com.tr/dunya_turkler-fransada-gocmenlerin-egitim-sorununa-cozum-sagliyor_933864.html

¹²⁹ **Նահապետյան Հ.**, նշվ. աշխ., էջ 83:

սիայի իսլամական կազմակերպությունների վրա¹³⁰: Սակայն այսօր էլ Ֆրանսիայում շարունակում են գործել մի շարք թուրք-իսլամական կրոնական և մշակութային կազմակերպություններ, որոնք պետական ֆինանսավորումը ծախսում են ազգայնամոլական կամ ծայրահեղ իսլամական գաղափարներ քարոզող գրականության տպագրման և բաժանման վրա¹³¹:

Համայնքի չինտեգրված, մեկուսի կյանքի արդյունքում թուրքերի մեծ մասը հետաքրքրված չէ ֆրանսիական քաղաքացիություն ստանալու հարցով: Չնայած ներկայումս մի շարք պայմաններին բավարարելու դեպքում միգրանտների երրորդ սերունդը հեշտությամբ կարող է քաղաքացիություն ստանալ¹³², դիմողների թիվը մեծ չէ: Ավելին, հետազոտությունները ցույց են տալիս, որ թուրքերի գրեթե կեսը Թուրքիայում տեղի ունեցող քաղաքական զարգացումներով հետաքրքրվում է ավելի շատ, քան Ֆրանսիայի քաղաքական կյանքով: Սրա հետ մեկտեղ թուրքերն որոշակի ակտիվություն ցուցաբերում են նաև Ֆրանսիայի հասարակական, քաղաքական դաշտում: Ֆրանսաթուրքերը ավելի հակված են դեպի ձախակողմյան կուսակցություններ.

¹³⁰ **Fellag N.**, The Muslim Label: How French North Africans Have Become “Muslims” and not “Citizens”, Journal on Ethnopolitics and Minority Issues in Europe Vol 13, No 4, 2014, p. 2.

¹³¹ Թուրքական կազմակերպությունների մասին առավել մանրամասն տե՛ս **Abadan-Unat N.**, Turks in Europe: From Guest Worker to Transnational Citizen, New York, 2011 May, p. 171.

¹³² **Kaya A., Kentel F.**, «Euro - Turks: A bridge or a breach between Turkey and the EU?», The Centre for European Policy Studies, Brussels, January 2005, p. 14: Նույնը տե՛ս **Erbaş A.**, «Fransa'da Yaşayan Türkler», <http://www.tarihtarih.com/?Syf=26&Syz=359009>, նաև՝ The Islamization of France in 2012, <http://www.gatestoneinstitute.org/3523/islamization-of-france>

կանաչներ՝ 5%, սոցիալ-դեմոկրատներ՝ 28%¹³³: 2008 թ. տեղական ինքնակառավարման մարմինների ընտրություններում ներկայացված էր թուրքական ծագում ունեցող 198 թեկնածու, որոնցից 91-ը կարողացան ընտրվել¹³⁴: Այս ցուցանիշով թուրքական համայնքը գերազանցում է Ֆրանսիայի մյուս միգրանտներին:

¹³³ **Kaya A., Kentel F.**, «Euro-Turks: A bridge or a breach between Turkey and the EU?», The Centre for European Policy Studies, Brussels, January 2005, p. 32.

¹³⁴ Turkish integration: points of view (e), <http://www.minorities.org/index.php/3-lagence/612-turkish-integration-points-of-view-e.html>

ՆԻԴԵՐԼԱՆԴՆԵՐԻ ԹՈՒՐՔԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԸ

Նիդեռլանդների թագավորությունը միգրանտներ ընդունելու հին ավանդույթներ ու մեծ փորձառություն ունի: Այլազգիների նկատմամբ ավանադաբար հանդուրժողական վերաբերմունք ցուցաբերող այս երկիրը դեռևս միջին դարերից եղել է հուգենոտների, բողոքականների, հարավային և արևելյան Եվրոպայից տեղափոխված հրեաների հանգրվան: Արդյունքում Նիդեռլանդների ներկայիս բնակչության 20%-ը միգրանտներ են կամ վերջիններիս սերունդներ¹³⁵:

Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո Հոլանդիան էլ հարևան երկրների պես տնտեսական բուռն վերելք ապրեց: Աշխատուժի կարիքը ստիպեց երկրի իշխանություններին աշխատողներ հրավիրել իրենց նախկին գաղութներից՝ Ինդոնեզիայից, Հոլանդական Անթիլլայից, Սուրինամից, ինչպես նաև երկկողմանի պայմանագրերի հիման վրա օրինականացրեց աշխատուժի «ներմուծումը» Իտալիայից, Իսպանիայից, Պորտուգալիայից, Հունաստանից, Մարոկկոյից: 1964 թ. օգոստոսի 19-ին նմանատիպ պայմանագիր կնքվեց Թուրքիայի հետ¹³⁶: Թեև 1966 թ.

¹³⁵ Focus Migration: Netherlands, Country Profile No. 11, November 2007, p. 1, http://focus-migration.hwi.de/typo3_upload/groups/3/focus_Migration_Publikationen/Laender-profile/CP11_Netherlands.pdf

¹³⁶ Hollanda Raporu, Türkiye Büyük Millet Meclisi İnsan Haklarını İnceleme Komisyonu, http://www.tbmm.gov.tr/komisyon/insanhaklari/belge/kr_19hollanda.pdf

տնտեսական ճգնաժամը ստիպեց գասթարբայթերների մի մասին հայրենիք վերադառնալ, սակայն ընդհանուր առմամբ միգրանտների հոսքը շարունակվեց մինչև 1974 թ., որից հետո էլ աշխատանքային միգրացիան փոխարինվեց «ընտանիքների վերամիավորման» ծրագրով, որով Հոլանդիա էին տեղափոխվում կանայք և երեխաներ: Իսկ 1980 թ. Թուրքիայում տեղի ունեցած ռազմական հեղաշրջումից հետո Հոլանդիայում ապաստան ստացան մեծ թվով քաղաքական փախստականներ:

2014 թ. տվյալներով Նիդեռլանդներում բնակվում էր 396.414 թուրք¹³⁷: Այս թիվը սակայն էթնիկ թուրքերի հետ մեկտեղ ներառում է նաև Թուրքիայից տեղափոխված այլ ազգությունների պատկանող անձանց՝ քրդերին, լազերին, չերքեզներին և նույնիսկ հայերին: Թուրքերը Հոլանդիայում կենտրոնացած են հիմնականում Ամստերդամում, Ռոտտերդամում, Հաագայում, Ուտրեխտում և այլն:

Հոլանդիայի թուրքական համայնքի, ինչպես եվրոպական երկրների բոլոր թուրքական համայնքների համար, նույնպես առաջնային կարևորություն ունի կրթվածության անբավարար մակարդակը, որի հիմնական պատճառը հոլանդերենի չիմացությունն է: Մի շարք սոցիոլոգիական ուսումնասիրություններ ցույց են տալիս, որ նույնիսկ միգրանտների երրորդ սերունդը հաճախ հոլանդերենին չի տիրապետում: Արդյունքում թուրք երեխաները ստիպված են լինում սովորել միջնակարգ լիցեյներում կամ անգամ սահմանափակ մտավոր ունակություններ

¹³⁷ Netherlands Demographics Profile 2014, <http://www.indexmundi.com/netherlands/demographics/profile.html>

ունեցող երեխաների հատուկ դպրոցներում¹³⁸: Բարձրագույն կրթություն ստանում են թուրք տղաների 25%-ը, իսկ աղջիկների դեպքում ցուցանիշն ավելի ցածր է, քանի որ նրանց մեծ մասը դպրոցն ավարտելուն պես ամուսնանում է¹³⁹: Կրթության բացակայությունը կրկնակի բարդեցնում է աշխատանք գտնելու գործընթացը: Այս պարագայում բնական է, որ թուրքերի շրջանում գործազրկության մակարդակը չորս անգամ բարձր է հոլանդացիների միջին ցուցանիշից, իսկ թուրքերի 30%-ը ստանում է սոցիալական անապահովության նպաստ¹⁴⁰: Արժե նշել, որ թուրքերը որպես կանոն վարձատրվում են նույն որակավորում ունեցող հոլանդացիներից անհամեմատ ավելի ցածր¹⁴¹, ինչը առաջ է բերում դժգոհություններ ու մշտական լարվածություն: Գործազրկությունը նպաստում է նաև երիտասարդների շրջանում հանցավորության մակարդակի աճին և թմրամոլության լայն տարածմանը: Եվրոպաբնակ բոլոր թուրքական համայնքների համար ընդհանուր այս խնդիրների գլխավոր պատճառներից է համարվում ընդունող երկրի իշխանությունների կողմից տասնամյակներով միգրանտներին չնկատելու, ինտեգրման փոխարեն ուժացնելու միտված քաղաքականությունը: Այս պարագայում

¹³⁸ Hollanda'da 3. Nesil Türkler'in Sorunlari Ve Eğitim Seferberliği, <http://sahipkiran.org/2013/04/17/hollandada-3-nesil-turklerin-sorunlari-ve-egitim-seferberligi/>

¹³⁹ **Crul M., Schneider J.**, «Children of Turkish Immigrants in Germany and the Netherlands: The Impact of Differences in Vocational and Academic Tracking Systems», pdf, 2009, p. 4:

¹⁴⁰ Focus Migration: Netherlands, Country Profile No. 11, November 2007, p. 3, http://focus-migration.hwi.de/typo3_upload/groups/3/focus_Migration_Publikationen/Laenderprofile/CP11_Netherlands.pdf

¹⁴¹ **Kee P.**, «Native-Immigrant Wage Differentials In The Netherlands: Discrimination?», Oxford Economic Papers, 1995, pdf, p. 303.

սակայն Հոլանդիայում նման խնդիրներ պետք է չլինեին, քանի որ երկիրը միշտ էլ աչքի է ընկել միգրանտների նկատմամբ հավասարակշռված և հանդուրժողական քաղաքականությամբ: Ի տարբերություն այլ եվրոպական երկրների Նիդեռլանդներում 1970-ականների վերջից թուրքերը ճանաչվել են որպես ազգային փոքրամասնություն, ավելին երկրի իշխանությունները մշտապես միջոցներ են ձեռնարկել հասարակական-քաղաքական կյանքին նրանց լիակատար մասնակցությունը ապահովելու, խտրականության դրսևորումները նվազագույնի հասցնելու, վերջիններիս բնակարանային, կենցաղային պայմանները բարելավելու համար: Ավելին, 1983 թ. երեք տարուց ավելի Հոլանդիայում բնակվող միգրանտները ունեն տեղական ինքնակառավարման մարմինների ընտրություններին մասնակցելու իրավունք¹⁴²: Իսկ 1985 թ. հեշտացվեց քաղաքացիություն ստանալու գործընթացը. միգրանտների՝ Հոլանդիայում ծնված երեխաները 18-28 տարեկանում կարող էին քաղաքացիություն ստանալ, իսկ նրանց երեխաներն ի ծնե լինելու էին Հոլանդիայի քաղաքացի¹⁴³: Նիդեռլանդական իշխանություններն ամեն կերպ խրախուսում էին նաև միգրանտների սեփական մշակույթի, ավանդույթների պահպանումը՝ բազմամշակութայնությունը դիտարկելով որպես սեփական մշակույթը հարստացնելու հնարավորություն: Այս ամենին հակառակ միգրանտների ինտեգրման հարցում լուրջ հաջողություններ չարձանագրվեցին: Ավելին, հոլանդացիների մի

¹⁴² **Abadan-Unat N.**, *Turks in Europe: From Guest Worker to Transnational Citizen*, New York, 2011, p. 166:

¹⁴³ Focus Migration: Netherlands, Country Profile No. 11, November 2007, http://focus-migration.hwi.de/typo3_upload/groups/3/focus_Migration_Publikationen/Laenderprofile/CP11_Netherlands.pdf

ստվար զանգված, հետևելով աջակողմյան ազգայնական ուժերի գաղափարներին, կառավարող շրջանակների այդչափ մեղմ քաղաքական դիրքորոշմանը դեմ դուրս եկան: 1998 թ. սկսած ընդունվեցին մի քանի ինտեգրացիոն և իմիգրացիոն օրենքներ, որոնց արդյունքում խստացվեց գաղթականներին ուղղված քաղաքականությունը: 2003 թ. հռչակվեց Հոլանդական քաղաքացիության մասին նոր օրենքը: Եթե մինչ այս քաղաքացիություն ստանալու համար հարկավոր էր ներկայացնել տեղեկանք, որ տվյալ անհատն որևէ քրեական հանցագործություն չի գործել, ապա հանձնել բանավոր քննություն, ստուգելու վերջինիս հոլանդերենի իմացությունը, նոր օրենքով դրությունը փոխվեց: Ի տարբերություն նա-խորդի, նոր թեստն գրավոր էր, ստուգում էր դիմորդի լեզվական հմտությունները, հոլանդական մշակույթի, ավանդույթների իմացությունը: Նոր թեստն արժենալու էր 350 եվրո և այն պահանջում է 250-350 ժամյա ուսուցում¹⁴⁴:

Մի կողմից հասարակության մեջ ուժեղացող հակամիգրանտական տրամադրվածությունը, մյուս կողմից էլ միգրանտների չընդհատվող անկանոն հոսքը դեկավարելու անհրաժեշտությունը ստիպեցին իշխանություններին 2000-ականների սկզբում օրենսդրորեն խստացնել միգրանտական քաղաքականությունը: Հատկապես սուր էր դրված Թուրքիայից «ներմուծվող» փեսացուների և հարսնացուների խնդիրը: Հարցի կարևորությունն հասկանալու համար նշենք, որ 2000 թ. տվյալներով Հոլանդիայում երկրորդ սերնդի թուրք երիտասարդների 60%-ը ամուսնանում է

¹⁴⁴ Dutch set immigrants culture test,
<http://news.bbc.co.uk/2/hi/europe/4551292.stm>

Թուրքիայից եկող հարսնացուների կամ փեսացուների հետ¹⁴⁵: Դրությունը փոխելու համար 2003 թ. քաղաքացիություն ստանալու օրենքը խստացվեց. Քաղաքացիության համար դիմած անձանցից պահանջվում էր լեզվական հմտությունները և հոլանդական մշակույթի, ավանդույթների իմացությունը ստուգող գրավոր վճարովի թեստ հանձնել¹⁴⁶: Իսկ 2006 թ. մարտից Հոլանդիա մուտք գործելուց առաջ միգրանտները պետք է իրենց երկրում Հոլանդիայի դեսպանատանը կամ հյուպատոսարանում քննություններ հանձնեն: Կատարվեցին այլ նորամուծություններ ևս՝ նվազագույն ամուսնական տարիք սահմանվեց 18-21 տարեկանը, ամուսնանալու համար ընդունող կողմը պետք է ունենա ամենաքիչը մեկ տարվա աշխատանքային պայմանագիր, իսկ երկու ամուսինների եկամուտը պետք է կազմի մինիմալ աշխատավարձի 100–120%-ը¹⁴⁷: 2013 թ. ընդունվեց մեկ այլ կարևոր որոշում, որով իշխանություններին իրավունք էր վերապահվում 55 տարեկանից երիտասարդ գործազուրկ միգրանտներին որոշակի գումար տրամադրելով արտաքսել երկրից¹⁴⁸: Այս քայլով կառավարությունը փորձեց պակասեցնել այն ծանր սոցիալական ծանրաբեռնվածությունը, որ ընկնում է հարկատուների ուսերին, քանի որ շատ միգրանտներ նախընտրում են չաշխատել և ապրել բավական բարձր սոցիալական նպաստների հաշվին: Միգրանտների հետ կապված սոցիալ-տնտեսական ու մշակութային խնդիրները վերջին տարիներին հանգեցնում են երկրում այլատ-

¹⁴⁵ **Diker E.**, «Family-Forming Migration From Turkey To The Netherlands And Germany: An Investigation On The De-terminants Of Turkish Migrant Women's Empowerment», Maastricht University, 2012, p. 18.

¹⁴⁶ Dutch set immigrants culture test,
<http://news.bbc.co.uk/2/hi/europe/4551292.stm>

¹⁴⁷ **Abadan-Unat N.**, նշվ. աշխ., էջ 164.

¹⁴⁸ **Diker E.**, նշվ. աշխ., էջ 18.

յացության աճին: Աջակողմյան որոշ ուժեր նույնիսկ առաջարկում են Հոլանդիայի քաղաքացիների հավասարությունն ամրագրող սահմանադրական հոդվածն անվավեր ճանաչել: Ավելին, «Ազատություն» կուսակցության նախագահ Գերթ Վելդերսը իր ելույթներից մեկում զուգահեռներ է գտել իսլամի և ֆաշիզմի միջև, Ղուրանը համեմատել Ադոլֆ Հիտլերի «Mein Kampf» գրքի հետ: Նույն Վելդերսը Մուհամմեդ մարգարեին անվանել է բարբարոս, իսկ Թուրքիայի նախագահ Ռեջեփ Թայիփ Էրդողանին՝ «ուղղակի աննորմալ»¹⁴⁹: Հատկանշական է, որ այս հայտարարությունները գրեթե քննադատության չարժանացան, 2010 թ. հերթական խորհրդարանական ընտրություններում էլ կուսակցությունը մանդատներ չկորցրեց:

Այսպիսով, Հոլանդիայի օրինակը ցույց է տալիս, որ միգրանտների նկատմամբ բարյացկամ վերաբերմունքն ու նրանց հնարավորինս լայն իրավունքներ շնորհելու ընդունող երկրի իշխանությունների պատրաստակամությունը միշտ չէ, որ բավարար են օտարերկրացիներին ինտեգրելու համար: Իրականում անարդարացի է միգրանտական խնդրի չլուծվածության մեջ մեղադրել կողմերից միայն մեկին: Ինտեգրացիան երկկողմ գործընթաց է, որի հաջողությունը կամ անհաջողությունը հավասարապես կախված են երկու կողմերի դիրքորոշումից ու մոտեցումներից:

¹⁴⁹ "Иммигрантский" провал Голландии,
<http://www.pravda.ru/world/europe/european/18-02-2011/1067053-holland-0/>

ԲԵԼԳԻԱՅԻ ԹՈՒՐՔԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԸ

1964 թ. հուլիսին Թուրքիայի և Բելգիայի կառավարությունների միջև համաձայնագրի ստորագրումով սկսվեց թուրքերի արտագաղթը Բելգիա: Ներկայումս Բելգիայում ապրում է մոտ 220.000 թուրք: Երկրի՝ միգրանտական երկրորդ ամենամեծ համայնքը կազմող թուրքերի խիտ բնակեցման շրջաններն են Բրյուսելը, Լիմբուրգը, Անթվերպենը, Գենթը, Լիեժը: Ուշագրավ է, որ Թուրքիայի կոնկրետ շրջաններից եկած մարդիկ Բելգիայում ևս փորձում են կոմպակտ բնակվել: Օրինակ, Աֆյոնի նահանգի Էմիրդաղ շրջանից եկած թուրքերը հիմնականում բնակվում են Գենթում¹⁵⁰, իսկ Քոնիայի և Աքսարայի բնակիչները՝ Անթվերպենում¹⁵¹: Ուշադրության է արժանի նաև այն փաստը, որ տարբեր շրջաններից եկած թուրքերը հիմնականում միմյանց հետ չեն շփվում: Լեզվական պատկանելության վերաբերյալ անցկացրած ուսումնասիրության ժամանակ պարզվել է, որ մասնակիցների 9 %-ը քրդերեն է խոսում, կան նաև աղբբեջաներեն, հայերեն,

¹⁵⁰ **Kanmaz M**, Does a Turkish Diaspora still exist? Turkish immigrants in Belgium, between Europe and Turkey, <http://www.cie.ugent.be/CIE/kanmaz5.htm>

¹⁵¹ Gökuna Yaylaci F., «Simultaneous lives: Daily life practices of Turks in Belgium as migrant», Zeitschrift für die Welt der Türken, Journal of World of Turks, vol. 6, n. 2, München, 2014, p. 280.

հունարեն խոսողներ, իսկ ըստ կրոնական պատկանելության՝ մեծամասնությունը սունի մուսուլման է, կան նաև ալևիներ¹⁵²:

Նշենք, որ թեն Բելգիայի տարբեր շրջաններում միգրանտների նկատմամբ մոտեցումները տարբեր են (Ֆլամանդիան և Բրյուսելը իրականացնում են ակտիվ ինտեգրացիոն քաղաքականություն, մինչդեռ Վալոնիայում ինտեգրացիայի փոխարեն շեշտը դրվում է ասիմիլացիայի վրա, փոքրամասնություններին ուղղված որևէ կոնկրետ գործունեություն չի ծավալվում), սակայն ընդհանուր առմամբ բելգիական իշխանությունները ի սկզբանե լուրջ ուշադրություն էին դարձնում միգրանտական խնդիրներին: Արդեն 1965 թ. բացվեց նախարարությունների, տարածաշրջանային տնտեսական խորհուրդների ներկայացուցիչներից կազմված «Միգրացիայի խորհրդատվական խորհուրդը», ապա ստեղծվեց աշխատանքային միությունները և միգրանտական կազմակերպությունները միավորող «Միգրանտ աշխատավորների կազմակերպությունների համագործակցության հանձնաժողովը»¹⁵³: Այս կառույցները հետագայում կարևոր դեր ունեցան միգրանտներին քաղաքական կյանքին ներգրավելու հարցում: 1970-ական թթ. հենց այս միություններն առաջինը օրակարգ մտցրին գաղթականներին ընտրելու իրավունք շնորհելու հարցը, սակայն սա խիստ քննադատության արժանացավ քաղաքական էլիտայի կողմից: Բացի նրանից, որ Բելգիայի հասարակության մեջ տիրում էին հակագաղթականային տրամադրություններ,

¹⁵² **Manço A.**, «Belçika'da Türklerin 40 yili (1964-2004): Sorunlar, gelişmeler, değişmeler»,

<http://www.cie.ugent.be/IRFAM/amanco8.htm>

¹⁵³ **Kentel F., Kaya A.**, «Belgian-turks: A bridge or a breach between Turkey and Europe Union», King Baudouin Foundation, Brussels, December 2007, p. 17.

նմանատիպ իրավունքների շնորհման համար հարկավոր էին սահմանադրական փոփոխություններ, ինչին բելգիական կառավարությունը պատրաստ չէր: Դրա փոխարեն նոր օրենք ընդունվեց 1984 թ., որը հեշտացնում էր քաղաքացիություն ստանալու գործընթացը. յոթ տարի անընդմեջ Բելգիայում ապրող գաղթականները ստանում էին քաղաքացիություն, հետևաբար՝ ընտրություններին մասնակցելու իրավունք: Խնդրի լուծման համար շրջադարձային եղան 1990-ական թթ., երբ ստորագրվեց Մասաթիրխտի պայմանագիրը, որի համաձայն ԵՄ քաղաքացիները իրավունք էին ստանում մասնակցելու ՏԻՄ և եվրոպական ընտրություններին. այսինքն՝ ընտրելու կամ ընտրվելու իրավունքը կախված էր ոչ թե ազգությունից, այլ քաղաքացիությունից: 1998 թ. երկրի սահմանադրությունը ևս փոփոխվեց. Քաղաքացիություն ստանալու համար սկսեցին պահանջել հինգ տարվա բնակություն Բելգիայում, ինչպես նաև «ինտեգրվելու ցանկության ցուցաբերում»¹⁵⁴: 2000թ. բնակության վերաբերյալ պահանջը դարձավ երեք տարի: 2004 թ. ընդունվեց օրենք, որով Բելգիայի քաղաքացիություն չունեցող գաղթա-կանները ևս կարող են մասնակցել ՏԻՄ ընտրություններին:

Միգրանտներին աջակցելու համար ստեղծվեցին «Միգրանտական քաղաքականության թագավորական գրասենյակը» (1989 թ.) և «Հավասար հնարավորությունների ու ռասիզմի դեմ պայքարի կենտրոնը» (1990 թ.)¹⁵⁵:

¹⁵⁴ **Wauters B., Eelbode F.**, «Political participation of ethnic minorities in Belgium: From enfranchisement to ethnic vote», <http://heimatkunde.boell.de/2011/09/18/political-participation-ethnic-minorities-belgium-enfranchisement-ethnic-vote>

¹⁵⁵ **Wets J.**, «The Turkish Community in Austria and Belgium: The Challenge of Integration», *Turkish Studies*, vol. 7, n. 1, London, 2010, p. 94.

Ինտեգրացիոն քաղաքականության կարևոր բաղկացուցիչն էր քաղաքացիության ստացման կարգի հարաբերական հեշտացումը: 1984 թ. ընդունվեց քաղաքացիության մասին նոր օրենք, որով յոթ տարի անընդմեջ Բելգիայում ապրող միգրանտները ստանում էին քաղաքացիություն: 1998 թ. երկրի սահմանադրության բարեփոխման արդյունքում քաղաքացիություն ստանալու համար սկսեցին պահանջել հինգ տարվա բնակություն և «ինտեգրվելու ցանկության ցուցաբերում»¹⁵⁶: 2004 թ. Բելգիայի քաղաքացիություն չունեցող միգրանտներն իրավունք ստացան մասնակցել տեղական ինքնակառավարման մարմինների ընտրություններին, վերանայվեց քաղաքացիություն ստանալու համար կիրառվող «արյան իրավունքի» սկզբունքը և երրորդ սերնդի միգրանտներին միանգամից Բելգիայի քաղաքացի դառնալու հնարավորություն ընձեռվեց: Նման բարենպաստ պայմանները խթանեցին աշխարհի տարբեր երկրներից ներգաղթյալների մեծ հոսքին, որը կասեցնելու համար արդեն 2013 թ. Բելգիական իշխանությունները ստիպված էին զգալիորեն խստացնել քաղաքացիություն ստանալու պայմանները. միգրանտները պետք է նախ ստանան Բելգիայում անսահմանափակ ժամկետով բնակվելու իրավունք, սովորեն տեղական լեզուներից գոնե մեկը, ընտանիքի վերամիավորման պարագայում ընդունող կողմը պետք է ունենա նվազագույն աշխատավարձի 120%-ը գերազանցող եկամուտ:

Ինտեգրացիոն քաղաքականության կարևորագույն կետերից կարելի է համարել նաև իսլամի նկատմամբ Բելգիական իշխանությունների մեղմ վերաբերմունքը: 2013 թ. մեծ աղմուկ բարձրացավ Վալոնիայում, որտեղ թուրքերը ծրագրել էին 11.000 մ² տարածության վրա 30 մետրանոց մինարեթով նոր մզկիթ կառու-

¹⁵⁶ Wauters B., Eelbode F., նշվ. հոդ.:

ցել: Տեղի բնակիչների տնական բողոքներից հետո կառուցողները ստիպված զիջումների գնացին՝ մինարեթի բարձրությունը դարձնելով 18 մետր¹⁵⁷:

Առաջին հայացքից հետևողական ինտեգրացիոն քաղաքականությունը հակառակ Բելգիայում գնալով խորանում են այլատյացության դրսևորումները: Թուրքերի մեծամասնությունը խոստովանում է, որ չի հավատում, որ երբևէ կինտեգրվի բելգիական հասարակությանը: Ընդ որում, թուրքերն իրենք շատ քիչ ջանքեր են գործադրում բելգիացիների համակրանքը շահելու համար: Նրանք նախընտրում են ապրել զուտ թուրքական թաղամասերում, երիտասարդների 60%-ը ամուսնանում է Թուրքիայից «ներմուծված» հարսնացուների կամ փեսացուների հետ: Նման կենսակերպի հետևանքով թուրքերի շրջանում ցածր է կրթական մակարդակը: Ծնողները երեխաներին նախակրթարան չեն ուղարկում՝ նախընտրելով նրանց դաստիարակել տանը, ուր բոլորը միայն թուրքերեն են խոսում: Նման երեխաները դպրոցում լուրջ լեզվական բարդություններ են ունենում: Եթե Ֆլամանդիայում 1985 թ. ի վեր իրականացվում են լեզվական խնդիրներ ունեցող աշակերտներին հավասար հնարավորություններ ընձեռելու միտված ծրագրեր¹⁵⁸, այս խնդիրը հաջողվու է որոշ չափով մեղմացնել, ապա Վալոնիայում, ուր ֆրանսիական մշակույթը համարվում է համաշխարհային արժեք, այս ուղղությամբ գրեթե ոչինչ չի արվում, և միգրանտների երեխաներն անխուսափելիորեն հայտնվում են ամենաթույլ աշակերտների

¹⁵⁷ The Islamization of Belgium and the Netherlands in 2013, <http://www.gatestoneinstitute.org/4129/islamization-belgium-netherlands>

¹⁵⁸ **Timrnerman C., Vandenvaeren E., Crul M.**, «The Second Generation in Belgium», *International Migration Review*, vol. 37, n. 4, New York, Winter 2003, p. 107.

շարքում: Արդյունքում Բելգիայի թուրք երիտասարդների 70%-ը ընտրում է տեխնիկական և ցածր միջնակարգ դպրոցներ¹⁵⁹: Տրամաբանական է, որ կրթության ցածր մակարդակը ազդում է թուրք երիտասարդների հետագա կյանքի վրա. 18–50 տարեկան թուրք սոդամարդկանց 27,4 և կանանց 40%-ը գործազուրկ են, իսկ աշխատողների 75%-ը կատարում է որակավորում չպահանջող աշխատանք¹⁶⁰: Համեմատության համար նշենք, որ գործազուրկ է բելգիացիների միայն 5,5%-ը: Գործազրկությունը հանգեցնում է թմրամոլության, ալկոհոլիզմի, մարմնավաճառության, հանցավորության մակարդակի աճին: Բելգիական համալսարաններից մեկում արված հետազոտության տվյալներով 1980–2010 թթ. Բելգիայի բանտարկյալների թիվը ավելացել է չորս անգամ, ընդ որում ազատազրկվածների 40%-ը թուրքերը և Հյուսիսային Աֆրիկայի բնակիչներն են¹⁶¹:

Բելգիական հասարակությանը ինտեգրվածության ցածր մակարդակը նպաստում է Թուրքիայի հետ կապերի պահպանմանը: Բելգիայում բնակվեղ թուրքերի 60%-ը Թուրքիայում անշարժ գույք ունի և տարեկան ամենաքիչը մեկ անգամ այցելում է Թուրքիա¹⁶²: Բելգիայում հրատարակվում են թուրքական Hürriyet, Milliyet և Türkiye թերթերը, հեռարձակվում են թուրքական հեռուստաալիքներ: Սոցիալական հարցումներից պարզ է դառ-

¹⁵⁹ **Manço A.**, «Göçmen Türklerin Belçika eğitim sisteminde yeri», C.Ü. Sosyal Bilimler Dergisi, c. 26,N1, Sivas, 2002, s. 63.

¹⁶⁰ **Manço A.**, «Belçika'da Türk işgücü, iş pazarı ve sorunları», <http://www.turkstudent.net/content/article/3706/belcikada-turk-isgucu-is-pazarı-ve-sorunları.html>

¹⁶¹ В Бельгии 40% заключенных составляют турки и негры, <http://www.rusimperia.info/news/id14030.html>

¹⁶² Belgium's Ay Yıldız becomes Turk Telekom Mobile, <http://www.telecompaper.com/news/belgiums-ay-yildiz-becomes-turk-telekom-mobile--910434>

նում, որ Բելգիայի թուրքերը հետաքրքրված են Թուրքիայի քաղաքականությամբ: Վերջիններիս 34%-ը աջակցում է իշխող ԱԶԿ-ին, 10%՝ ԺՀԿ-ին, իսկ 8%՝ Ազգայնական շարժում կուսակցությանը¹⁶³: Բելգիայի թուրքերը մասնակցել են 2014 թ. նախագահական ընտրություններին, 69,8%-ը քվեարկել է Էրդողանի օգտին¹⁶⁴:

Բելգիայում գործում է 127 թուրքական միություն: Թուրք բնակչության մեծամասնությունը ներգրավված է համայնքային միություններում, որոնց մի մասը, օրինակ, «Ժամանակակից միությունների դաշնությունը», «Բելգիայի թուրք-իսլամական մշակութային միությունների դաշնությունը», «Բելգիայի թուրքական դաշնությունը», «Բելգիայի իսլամական դաշնությունը» և այլն պաշտոնապես ճանաչված է Բելգիայի իշխանությունների կողմից: Այնուամենայնիվ, հայրենիք մշտական բնակչության վերադառնալու մասին խոսք չկա¹⁶⁵: Մի կողմից Թուրքիայում նրանք դժվարությամբ կկարողանան հոգալ իրենց ապրուստը, մյուս կողմից էլ հայրենի բարքերն արդեն միգրանտների մեծ մասի համար օտար են, իսկ երիտասարդներին՝ գրեթե անձանոթ:

Նկատենք, որ թուրքերը ներգրավված են Բելգիայի քաղաքական կյանքում: 2014 թ. դաշնային և տեղական ընտրություննե-

¹⁶³ **Kentel F., Kaya A.**, «Belgian-turks: A bridge or a breach between Turkey and Europe Union», King Baudouin Foundation, Brussels, December 2007, p. 24:

¹⁶⁴ 69.8% of Turks living in Belgium voted for Erdogan, <http://deredactie.be/cm/vrtnieuws.english/News/1.2059106>

¹⁶⁵ **Fokkema T.**, «‘Return’ migration intentions among second-generation Turks in Europe: The effect of integration and transnationalism in a cross-national perspective», Journal of Mediterranean Studies, v. 20, n. 2, Malta, 2011, p. 382.

րում 13 թուրք պատգամավոր է ընտրվել Բելգիայի խորհրդարան (նրանցից յոթը Դաշնային խորհրդարանի պատգամավորներ են, չորսը ներկայացնում են մայրաքաղաք Բրյուսելի խորհրդարանը և մեկական թուրք պատգամավոր կա Ֆլամանդիայի և Վալոնիայի խորհրդարաններում): Ավելին, Բրյուսելի խորհրդարանի փոխխոսնակն է թուրք Էմին Օզքարան, իսկ դաշնային խորհրդարանի անդամ Մերյեմ Ալմաջըն 2014 թ. նոյեմբերին ընտրվել է Կանաչների կուսակցության նախագահ:

ՇՎԵԴԻԱՅԻ ԹՈՒՐՔԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԸ

1950-ականներին սկսված տնտեսական վերելքի համատեքստում աշխատուժի պակասը շվեդական իշխանություններին նույնպես ստիպեց այլ երկրներից հրավիրել ցածր վարձատրվող աշխատողներ: Այսպես սկսվեց թուրքերի ներգաղթը: Սակայն նկատենք, որ ընդհուպ մինչև 1960-ականները Շվեդիայում ոչ միայն թուրքեր, այլ առհասարակ մուսուլմաններ գրեթե չկային: Օրինակ, 1930 թ. տվյալներով երկրում ընդամենը 15 մուսուլման էր ապրում: 1960-ականների թուրք աշխատավորների առաջին ալիքին հետևեց 1970-1976 թթ. ընտանիքների վերամիավորման ծրագրով եկողների հոսքը: Թուրք միգրանտների հաջորդ մեծ ալիքը 1980 թ. սեպտեմբերի 12-ի ռազմական հեղաշրջումից հետո էր: Այդ տարիներին Թուրքիայից Շվեդիա տեղափոխվեցին մեծ թվով քրդեր, ասորիներ, նաև որոշ քանակով իսլամացած հայեր¹⁶⁶:

Աշխատուժի ներմուծման քաղաքականության արդյունքում Շվեդիայում ձևավորվեցին մի շարք մուսուլմանական համայնքներ՝ այդ թվում արաբների, իրանցիների, բոսնիացիների, պակիստանցիների և այլն: Երկրում բնակվող մուսուլմանների ընդհանուր թիվը ներկայումս 425.000 է, որից մոտ 170.000-ը թուրքեր են. նրանց կեսից ավելին բնակվում է Ստոկհոլմում:

¹⁶⁶ Իսլամացած հայերի եվրոպական համայնքների մասին մանրամասն տե՛ս **Մելքոնյան Ռ.**, Կրոնափոխ հայերի սերունդները Եվրոպայում, http://noravank.am/arm/articles/detail.php?ELEMENT_ID=4778&sphrase_id=25730

Ինչպես և ամենուր Եվրոպայում, Շվեդիայում էլ ի սկզբանե միգրանտներին ժամանակավոր երևույթ էին համարում: Միայն 1990-ականների վերջին իշխանությունները սկսեցին լրջորեն զբաղվել միգրանտների ինտեգրման հիմնախնդրով: Էթնիկ ու ռասայական խտրականության, քսենոֆոբիայի դեմ պայքարելու և միգրանտներին աջակցելու համար 1997 թ. ստեղծվեց ինտեգրացիոն կոլլեգիա, որի գործունեությունը կասեցվեց 2007 թ.: Այսօր շվեդական կառավարությունը փորձում է անկախ էթնիկ և մշակութային պատկանելությունից բոլոր բնակիչների համար ստեղծել իրավունքների, պարտականությունների ու հնարավորությունների հավասարություն: Այս նպատակով յուրաքանչյուր միգրանտի համար կազմվում է սոցիալական ադապտացիայի անձնական պլան, գործում են լեզվի իմացությունը կատարելագործելու, մասնագիտական որակավորումը բարձրացնելու հատուկ կուրսեր, պետական ծառայողները օգնում են նրանց կողմնորոշվել աշխատաշուկայում, ավելին, միգրանտին աշխատանք տվող անձի ծախսերի 75%-ը սուբսիդավորվում է պետության կողմից:

Ստոկհոլմում, Մալմոյում, Ուպսալայում, Գյոթեբորգում և մյուս մեծ քաղաքներում գործում են մզկիթներ: Ակտիվ գործունեություն են ծավալում ամենատարբեր իսլամական կազմակերպություններ: Շվեդներն իրենք էլ բավական հետաքրքրված են իրենց կողքին ապրող մուսուլմանների մշակույթով: Օրինակ, 2000 թ. Լունդի համալսարանում 7 հոգի էր իսլամագիտություն սովորում, իսկ 2007՝ 111¹⁶⁷: Շվեդական խորհրդարանում կա 8

¹⁶⁷ Чернышева О., Мусульмане в Швеции, http://www.Kunstkamera.Ru/Lib/Rubrikator/03/03_05/978-5-88431-187-9/, стр. 350.

թուրք պատգամավոր, թուրք պաշտոնյաներ կան նաև գործադիր իշխանությունում:

Չնայած այս ամենին միգրանտների ինտեգրումը չի կարելի ավարտված համարել: Կրթական խնդիրներն ու լեզվի չիմացությունը հանգեցնում են գործազրկության: Թուրքերի կեսից ավելին ապրում է սոցիալական նպաստով¹⁶⁸: Հետևաբար, մեծ քաղաքների արվարձաններում բնակվող միգրանտների և էթնիկ շվեդների կենսամակարդակները համեմատելու մասին խոսք լինել չի կարող: Միգրանտների շրջանում շատ բարձր է հանցավորության մակարդակը: Վիճակագրական տվյալներով, օրինակ, Քուլմա քաղաքի բանտում գտնվող դատապարտյալների 75%-ը միգրանտներ են¹⁶⁹: 2004 թ. արված մի հարցման արդյունքներով շվեդների մոտ 2/3-ը համարում էր, որ իսլամը անհամատեղելի է շվեդական արժեքների հետ, կեսից ավելին գտնում էր, որ մուսուլմանները և շվեդները հավասար չեն: Ազգայնական հայացքների հետևորդները կազմակերպում են հակամիգրանտական ակցիաներ, հարձակվում մզկիթների վրա: Ըստ պաշտոնական տվյալների միայն 2014 թ. Շվեդիայում տասներկու նման հարձակում է եղել: Ավելին, միգրանտներին վռնդելու կողմնակից շվեդական դեմոկրատները վերջին խորհրդարանական ընտրություններում 20 տեղ ստացան: Խտրական վերաբերմունքի խորացման մասին են խոսում նաև իրենք թուրքերը: Միգրանտները բողոքում են, որ ստիպված են լսել որպես վիրավորանք հնչող «օտարերկրացի», «սևագլուխ» բառերը, գլխաշոր կրելու համար ենթարկվել ծաղրածանակի¹⁷⁰: Շվեդիայում ծնված, ծագումով

¹⁶⁸ Նույն տեղում, էջ 327:

¹⁶⁹ Նույն տեղում, էջ 347:

¹⁷⁰ Նույն տեղում, էջ 342-343:

թուրք երիտասարդ ռեստորանատեր Մ. Թոփալը, երկրորդ սերնդի միգրանտի աչքերով ներկայացնելով դրությունը, ասում է. «Երբ քո ծնողները միգրանտ են, դու քեզ երբեք չես կարող շվեդ զգալ, որովհետև մարդիկ քեզ երբեք շվեդ չեն համարում»¹⁷¹: Ընդգծված վատ վերաբերմունքը պարբերաբար դառնում է բողոքների և խռովությունների պատճառ: Օրինակ, 2013 թ. Ստոկհոլմի թուրքական Ռիկեֆայ թաղամասը իսկական ռազմաճակատի էր վերածվել թուրք երիտասարդների և ոստիկանության միջև: Միևնույն ժամանակ Թուրքիա վերադառնալու պարագայում էլ միգրանտներն իրենց օտար են զգում, այլևս չեն ուզում ապրել թուրքական գյուղերում առանց սովորական դարձած հարմարավետ պայմանների, ենթարկվել գյուղական նիստուկացի կանոններին: Արդյունքում Շվեդիայում նրանց ասում են «անիծյալ սևագլուխներ», իսկ հայրենիքում «անիծյալ շվեդներ»¹⁷²: Թե հայրեի, թե ընդունող հասարակությունների կողմից միգրանտների նկատմամբ դրսևորվող այս մերժողական մոտեցումը լուրջ հոգեբանական խնդիրների համար պարարտ հող է ստեղծում: Երկու հասարակության մեջ էլ օտար լինելու գաղափարը սրում է առանց այն էլ երկու մշակույթների խաչմերուկում իրենք ինքնությունը փնտրող միգրանտների դրությունը, դառնում մշտական սթրեսների և դեպրեսիաների պատճառ: Այսպիսով, Շվեդիայում բնակվող թուրքերն էլ առերեսվում են Եվրոպայում բնակվող թուրքերի հիմնական խնդիրների հետ: Քսենոֆոբիայի դրսևորումները չեն շրջանցում նույնիսկ Շվեդիայի նման բարեկեցիկ և ժողովրդավարական երկրում բնակվող միգրանտներին:

¹⁷¹ Նույն տեղում:

¹⁷² Նույն տեղում:

ՄԵԾ ԲՐԻՏԱՆԻԱՅԻ ԹՈՒՐՔԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԸ

Մեծ Բրիտանիան՝ որպես համաշխարհային պատմության ամենամեծ գաղութատերերից մեկը, ունի միգրանտներ ընդունելու հին ավանդույթներ: Հատկապես Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո երկիրը ողողվեց Ասիայի և Աֆրիկայի իր նախկին գաղութներից եկող մարդկանցով: Այս համատեքստում երկրում թուրքական համայնքի ձևավորման գործընթացը փոքր-ինչ տարբերվում է արևմտաեվրոպական այլ պետություններում համայնքների ստեղծման պատմությունից: Թուրքիան Մեծ Բրիտանիայի հետ աշխատանքային պայմանագիր չի կնքել. այնտեղ հայտնված առաջին թուրքերը մինչև 1960 թ. բրիտանական գաղութ համարվող Կիպրոսից էին: Դեռևս 1930-1950-ական թվականներին նրանք ձևավորեցին թուրքական առաջին համայնքը Լոնդոնի Հեքնիի շրջանում: Հետագա տարիներին, մասնավորապես Կիպրոսի հարցի սրացման շրջանում, մեծ թվով թուրք փախստականներ Կիպրոսից տեղափոխվեցին Անգլիա, իսկ 1980-ականներին սկսվեց նաև թուրք և քուրդ միգրանտների հոսքը քաղաքական ու տնտեսական խոր ճգնաժամ ապրող Թուրքիայի Հանրապետությունից: Ներկայումս Մեծ Բրիտանիայում ապրում է մոտ 200.000 թուրք¹⁷³: Մեծմասամբ Լոնդոնում կենտրոնացած բրիտանաբնակ թուրքերը զբաղվում են մասնա-

¹⁷³ **Duvell F.**, Turkish migration to the UK, Centre of migration, Policy and Society, 2010, 1-12, p. 4.

վոր ձեռնարկատիրությամբ, աշխատում տեքստիլի, արդյունաբերության ոլորտներում, ռեստորանային բիզնեսում: Ինչպես և մյուս երկրներում, Անգլիայում էլ գործում են մի շարք թուրքական հասարակական կազմակերպություններ, որոնք փորձում են ապահովել հայրենիք-համայնք կապը, ինչպես նաև կարևորում են մշակույթի պահպանումը: Մեծ Բրիտանիայում հասանելի են թուրքական թերթերի անգլերեն տարբերակները, Լոնդոնի թուրքական ռադիոն:

Հաշվի առնելով համայնքի երեք բաղկացուցիչ տարրերի՝ քրդերի, կիպրական թուրքերի և Թուրքիայի հանրապետությունից ներգաղթած թուրքերի միջև առկա հակասությունները՝ պետք է փաստենք, որ համայնքն առանձնապես միաբանված չէ, ինչի հետևանքով էլ սեփական շահերի լոբբին չի կարողանում արդյունավետ իրագործել: Այնուամենայնիվ, Բրիտանիայում բնակվող թուրքերի խնդիրներն էլ, որոնց շրջանակներում կարևորագույն դեր ունեն կրթության և ահռելի մասշտաբների հասնող գործազրկության հարցերը¹⁷⁴, էականորեն չեն տարբերվում այլ եվրոպական երկրներում թուրքերի ունեցած խնդիրներից:

Հարկ է նշել, որ միգրանտական խնդիրներին լուծում տալու համար դեռևս 1980-ականների սկզբից Մեծ Բրիտանիան սկսեց կյանքի կոչել բազմամշակութայնության կոնցեպտը, սակայն հակառակ սպասելիքներին այն գրեթե անօգուտ եղավ: Միգրանտներ-տեղացիներ անտոնգոնիզմը ցայսօր շարունակվում է: Ընդ որում, 2001 թ. սեպտեմբերի 11-ի դեպքերն ու 2005 թ. Լոնդոնի մետրոյի պայթյունը ավելի սրեցին հակասությունները: 2011 թ. վարչապետ Դևիդ Քեմերոնը տիպված էր խոստովանել, որ բազմամշակութայնությունը Մեծ Բրիտանիայում անհաջողության է

¹⁷⁴ Նույն տեղում:

մատնվել: Այս իրողության ապացույցն են նաև ժամանակ առ ժամանակ տեղի ունեցող միգրանտական խռովությունները, որոնք, օրինակ 2011 թ. օգոստոսին տարածվեցին երկրի ողջ տարածքում: Ներկայումս միգրանտական խնդիրը ներկայումս երկրի համար օրակարգային, կարևոր են համարում սոցիոլոգիական հարցումների մասնակիցների գրեթե կեսը: Ուշագրավ է, որ միգրանտները ևս գիտակցում են իրենց կարևորությունը բրիտանական ներքին կյանքում, քանի որ, ինչպես դեռ 2005 թ. նշել է բրիտանական պառլամենտի վերին պալատում տեղ զբաղեցրած առաջին մուսուլման Լորդ Ահմեդը. «Ներկայումս Բրիտանիայի բոլոր քաղաքական կուսակցությունները արդեն գիտակցում են, որ մուսուլման-ընտրողների ձայները իսկապես կարևոր են ընտրություններում, հատկապես մեծ քաղաքների տեղական ընտրություններում»¹⁷⁵: Փաստորեն, բազմամշակութայնության քաղաքականության ձախողմանը հակառակ միգրանտների դերն ու նշանակությունը բրիտանական հասարակության մեջ շարունակում է աճել: Ավելին, տարբեր քաղաքական ուժեր փորձում են այս խնդիրը շահարկել սեփական քվեները ավելացնելու համար: Միգրանտներն էլ, գիտակցելով սեփական կարևորությունը, փորձում են օգտվել դրությունից, լոբբի անել իրենց շահերը: Թուրքական համայնքը սակայն Մեծ Բրիտանիայում փոքրաթիվ և մասանտված լինելու պատճառով որպես կանոն չի ունենում լուրջ դերակատարում: Այստեղ ավելի լսելի է թուրքերից անհամեմատ ավելի մեծաթիվ պակիստանցիների, հնդիկների ձայնը:

¹⁷⁵ Նույն տեղում

ՇՎԵՅՑԱՐԻԱՅԻ ԹՈՒՐՔԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԸ

1960-ականների «տնտեսական հրաշքն» անդրադարձավ նաև Շվեյցարիայի տնտեսության վրա: Այս երկրում ևս զգացվում էր էժան աշխատուժի կարիք: Սա էր պատճառը, որ չնայած Թուրքիայի և Շվեյցարիայի միջև աշխատուժի ներկրման պայմանագիր չի կնքվել, սակայն այս երկիրը նույնպես դարձել է թուրքերի աշխատանքային միգրացիայի ուղղություններից մեկը: 1980 թ. ռազմական հեղաշրջումից հետո էլ Շվեյցարիան շարունակեց ընդունել Թուրքիայում տիրող քաոսային իրավիճակից և անմարդկային հալածանքներից փախչող քաղաքական փախստականներին, այդ թվում քրդերին: 1981-2000 թթ. Շվեյցարիայում ապաստան են ստացավ մոտ 60.000 քուրդ:

Միգրանտական քաղաքականությունը համակարգելու փորձերին հակառակ 2014 թ. տվյալներով 8 միլիոն բնակչություն ունեցող երկրում մոտ 2 միլիոն միգրանտ է բնակվում: 70.000-ի հասնող թուրքական համայնքն իր թվաքանակով ութերորդն է: Ի տարբերություն այլ եվրոպական երկրների Շվեյցարիայում գրեթե չկան ապօրինի միգրանտներ. համայնքի կեսից ավելին քաղաքացիություն ունի, մնացածն էլ ապրելու, աշխատելու իրավունք: Սա բացատրվում է այն հանգամանքով, որ չնայած քաղաքացիություն ստանալը երկարատև ու բարդ գործընթաց

է¹⁷⁶, բայց ապօրինի աշխատանք, ապրելու միջոցներ գտնելն էլ գրեթե անհնար է: Բացի այդ, 1992 թ. Շվեյցարիայում թույլատրված է երկրադաքացիություն, այսինքն թուրքերը ստիպված չեն հրաժարվել թուրքական անձնագրերից¹⁷⁷: Շվեյցարիայում թուրքերը հիմնականում կենտրոնացած են մեծ քաղաքներում և զբաղվում են առևտրով ու ռեստորանային բիզնեսով:

Առաջին հայացքից թուրքերի ներկայությունը Շվեյցարիայում սովորական է դարձել: Տարբեր տարիների Շվեյցարիայի ֆուտբոլի ազգային հավաքականի կազմում խաղացել են թուրք մարզիկներ Գյոքհան Ինլերը, Էրեն Դերդիյոքը, Հաքան և Սուրադ Յաքընները: Ճանաչված են թուրք գրողներ Յուսուֆ Յեշիլօզը, Ալփասլան Քրքմազը, Աքըն Ալթընթերենը և այլն: Շվեյցարիայի տարածքում գործում է հարյուրից ավելի մզկիթ, իսկ դյոները, նարգիլեն ու պորտապարը վաղուց սովորական երևույթ են դարձել:

Սակայն ամբողջ Եվրոպան ու աշխարհը ալեկոծող խնդիրները չէին կարող շրջանցել Շվեյցարիան: Այստեղ էլ, ինչպես ամենուր, թուրք աշակերտները ցուցաբերում են շատ թույլ առաջադիմություն¹⁷⁸, ինչի հետևանքով էլ անմրցունակ են լինում աշխատաշուկայում: Եթե սրան գումարում ենք աշխատանքի ընդունելիս տեղացիներին նախապատվություն տալու տարածված սովորությունը՝ հասկանում ենք, թե ինչու է թուրքերի շրջա-

¹⁷⁶ **Fibbi R., Wanner Ph., Topgül C., Ugrina D.**, The New Second Generation in Switzerland: Youth of Turkish and Former Yugoslav Descent in Zurich and Basel, Amsterdam, 2015, p. 35.

¹⁷⁷ İsviçre'deki Türk girişimcileri, ed: Roca D. B., İstanbul, 1998, <http://www.ito.org.tr/itoyayin/0011187.pdf>, s.31

¹⁷⁸ **Kayadibi F.**, İsviçre'de türk çocuklarının eğitim problemleri ve çözüm yollari, s. 123-158, www.journals.istanbul.edu.tr/.../102300582, s. 134

նում գործազրկությունը գրեթե 4 անգամ ավել շվեյցարացիների նույն ցուցանիշից:

Բացի այդ թուրքերն իրականում չեն էլ փորձում ինչ-որ կերպ հաճոյանալ շվեյցարացիներին, ավելին ուզում են իրենց խաղի կանոնները թելադրել: Օրինակ, առաջարկվել է փոխել Շվեյցարիայի դրոշմը, քանի որ նրա վրա պատկերված սպիտակ խաչը հիշեցնում է խաչակրաց արշավանքների մասին և վիրավորում մուսուլմանների ինքնասիրությունը: Անհեթեթ այս նախաձեռնությունը չէր կարող չսրել հակամիգրանտական տրամադրությունները: Ավելին, միգրանտների տարբեր խմբավորումների միջև ընթացող բուռն հակամարտությունները խանգարում են շվեյցարացիների անդորրը, վտագավոր դառնում տեղացիների համար: Սրա ամենաթարմ դրսևորումը 2015 թ. սեպտեմբերի 12-ին Բեռն քաղաքում թուրքական իշխող Արդարություն և զարգացում կուսակցության հետևորդների ու քրդական շարժման անդամների միջև ծագած բախումն էր, որի պատճառով վնասվածք էր ստացել չորս շվեյցարացի ոստիկան:

Նման իրավիճակում զարմանալի չի հակամիգրանտական տրամադրությունների ուժեղացումը և ծայրահեղ աջակողմյան ազգայնական հայացքներ դավանող ուժերի հզորացումը: Դեռևս 2011 թ. խորհրդարանական ընտրություններում ֆավորիտ էր համարվում ազգայնական Ժողովրդավարական կուսակցությունը, որ մշտապես հանդես է գալիս հակամիգրանտական ակցիաներով: Այս կուսակցության ջանքերով 2009 թ. հանրաքվեում շվեյցարացիները դեմ դուրս եկան մզկիթների կողքին բարձր մինարեթների կառուցմանը: Կուսակցության նախընտրական պաստառներից մեկը այլաբանորեն ներկայացնելով միգրանտներից ազատվելու անհրաժեշտությունը, պատկերում էր շվեյցարա-

կան դրոշի մոտ կանգնած երեք սպիտակ ոչխարներ, որոնք աքացի էին տալիս սև ոչխարին: Նման ծայրահեղական մոտեցումները կառուցողական չեն: Միգրանտներին երկրից դուրս վճռելն անիրատեսական է, թեկուզ այն պարզ պատճառով, որ հակասում է եվրոպական ժողովրդավարության սկզբունքներին: Երկու կողմերն էլ ստիպված են փնտրել և գտնել ավելի ճիշտ և հնարավորինս անցավ մեթոդները առկա խնդիրները հաղթահարելու համար:

ԲՈՒԼՂԱՐԻԱՅԻ ԹՈՒՐՔԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ

2011 թ. անցկացված մարդահամարի տվյալներով Բուլղարիայում բնակվում է 588 հազար թուրք¹⁷⁹: Ի տարբերություն եվրոպական այլ երկրներում ձևավորված թուրքական համայնքների՝ Բուլղարիայի համայնքն ունի մոտ 150 տարվա պատմություն: 1877–1878 թթ. թուրք-ռուսական պատերազմի արդյունքում օսմանյան Դանուբի վիլայեթի Սոֆիայի, Ռուչուկի, Վառնայի, Վիդինի և Տիրնովոյի սանջակներում Բուլղարիայի իշխանության հաստատմամբ և Էդիրնեի վիլայեթի Պլովդիվի և Սլիվենի սանջակներում ինքնավար Արևելյան Ռումելիայի ձևավորմամբ (1885 թ. միացավ Բուլղարիային) տեղի մեծաթիվ թուրքական բնակչությունը վերածվեց սփյուռքի: Այս համայնքի թիվը ավելի մեծացավ 1912–13 թթ. բալկանյան պատերազմի ավարտին Բուլղարիային անցած Արևմտյան Թրակիայի ինը նոր տարածքների՝ Քրջաալի, Արդինո, Քոշուկավաք, Դերիդերե (Զլատոգրադ), Մեսթանլի (Մոնչիլգրադ), Օրթաքոյ (Իվայլովգրադը), Դյովեն, Փաշմաքլը, Ներոկոփ, ինչպես նաև Ռոդոփյան տարածաշրջանի բնակչության հաշվին: 1920 թ. հունիսին հույն-թուրքական պատերազմի ընթացքում մեծ թվով թուրքեր անցան բուլղարական սահմանը: Բուլղարական իշխանությունները նրանց հյուրընկալեցին և տեղավորեցին Պլինայում, Վառնայում, Վիդինում,

¹⁷⁹ Census 2011, National statistical institute, http://www.nsi.bg/census2011/PDOCS2/Census2011final_en.pdf

Լոմոմ, Ռուշուկ Ռագգրատում, Քագանլիքում և այլն¹⁸⁰: 1940 թ. թուրքական համայնքին ավելացան նախկին ռումինական հարավային Դոբրուժայի թուրք բնակիչները:

Չնայած Բեռլինի կոնգրեսի որոշումների մեջ նշվում էր, որ Բուլղարիայի տիրապետության տակ մնացած փոքրամասնությունները ունենալու են բոլոր հասարակական և քաղաքացիական իրավունքները, բուլղարացիների և նրանց միջև խտրականություն չի դրվելու, սակայն թուրքերը ի սկզբանե արժանացան տարբերակված վերաբերմունքի: Ընդդիմադիր կուսակցությունների և մամուլի ճնշման տակ Թուրքիայի կառավարությունը 1984 թ. փետրվարի 22-ին Բուլղարիային առաջարկեց բնակչության փոխանակման պայմանագիր ստորագրել, սակայն բուլղարական կողմը մերժեց՝ սա համարելով երկրի ներքին գործերին միջամտություն: Թուրքիան ի պատասխան սրա սահմանափակեց երկկողմանի առևտուրը, էլեկտրաէներգիայի՝ Բուլղարիա ներմուծումը և այլն¹⁸¹:

1989 թ. մայիսի 27-ին Բուլղարիայի նախագահ Թ. Ժիվկովը իր երկրի քաղաքացի թուրքերին կոչ արեց վերցնել համաշխարհային վավերացում ունեցող տուրիստական անձնագրեր և վերադառնալ Թուրքիա. սկսվեց թուրքերի զանգվածային արտագաղթը: Ընդամենը 2,5 ամսվա ընթացքում Բուլղարիայից Թուրքիա փոխադրվեց 311.862 թուրք¹⁸²: 1989 թ. ամռան ներգաղթի հե-

¹⁸⁰ Նույն տեղում:

¹⁸¹ **Maeva M.**, «Bulgarian Turks and the European Union.» – In: Rusu, H. and B. Voicu (eds.) EU Integration Process from East to East: Civil Society and Ethnic Minorities in a Changing World. Proceedings from a Round Table for young Social Scientists, Sofia, 2005, p. 1.

¹⁸² **Նահապետյան Հ.**, «Թուրք-աղբբեջանական կառույցների հակահայ գործունեությունը», Երևան, 2010, էջ 95:

տնանքով Թուրքիայում ստեղծվեց սարսափելի վիճակ. երկիրը լի էր աշխատազուրկ բուլղարաթուրքերով և այդ խնդիրը կարգավորելու համար օգոստոսի 21-ին թուրքական կառավարությունը փակեց դռները նրանց առջև: Թուրքիայի ժամանակի վարչապետ Թուրգութ Օզալը հանդես եկավ հայտարարությամբ, որ երկիրը ի վիճակի չէ տարեկան 30 հազարից ավել մարդ ընդունել:

1989 թ. նոյեմբերին Թ. Ժիվկովի հրաժարականից հետո ընդդիմությունը առաջ քաշեց անունների վերականգնման մասին նախագիծը: Այն քվեարկության դրվեց 1990 թ. մարտի 5-ին, իսկ մինչև 1991 թ. մարտի 1-ը ավելի քան 600.000 դիմումներ ներկայացվեցին և հաստատվեցին¹⁸³: Շուտով ընդունվեց նոր սահմանադրություն, որով ապահովվեցին ազգությամբ ոչ բուլղարացիների իրավունքները: 1991 թ. հրաման արձակվեց 3-րդից 8-րդ դասարաններում շաբաթական չորս անգամ մայրենի լեզվի դասընթացներ անցկացնելու վերաբերյալ: Սկսեցին հրատարակվել թուրքական թերթեր, ավելի ուշ՝ 2001 թ. բուլղարական հեռուստատեսությամբ և ազգային ռադիոյով սկսեցին թուրքերեն հեռարձակումներ: Բնական է, որ բուլղարացիները թուրքերի իրավունքների ընդլայնումից բնավ էլ գոհ չեն: Օրինակ, 2010 թ. մարտի 3-ին Վառնայում Բուլղարիայի ազգային հեռուստատեսության մուտքի մոտ, ինքնահրկիզման դիմեց քաղաքական գործիչ Ռոզեն Մարկովը՝ պահանջելով դադարեցնել թուրքերեն լուրերի հեռարձակումները¹⁸⁴:

Թեև բուլղարաթուրքերի մեծամասնությունը ապրում է գյուղերում, սոցիալապես ոչ ապահով պայմաններում, սակայն վեր-

¹⁸³ **Maeva M.**, նշված աշխ., էջ 2:

¹⁸⁴ **Նահապետյան Հ.**, Բուլղարաթուրքեր. վերջին զարգացումները, http://www.noravank.am/arm/arti-cles/detail.php?ELEMENT_ID=4340:

ջին 25 տարվա ընթացքում նրանք կարողացել են լուրջ հաջողություններ արձանագրել Բուլղարիայի հատկապես քաղաքական կյանքում: Կոմունիստական վարչակարգի օրոք անօրինական գործող «Բուլղարաթուրքերի ազգային ազատագրության շարժման» անդամները 1990 թ. հունվարի 4-ին ստեղծեցին «Իրավունքների և ազատությունների շարժում» (ԻԱՇ) կուսակցությունը: Կենտրոնամետ լիբերալ ուղղվածություն ունեցող ԻԱՇ-ը 1990 թ. հունիսի 10-ին և 17-ին տեղի ունեցած խորհրդարանական ընտրություններում ստացավ 23 տեղ՝ դառնալով երրորդ ուժը պառլամենտում: 2003 թ. հոկտեմբերին տեղի ունեցած տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունների արդյունքում քաղաքապետի պաշտոն զբաղեցրին 29 թուրք¹⁸⁵: 2005 թ. հունիսի 25-ին տեղի ունեցած հերթական խորհրդարանական ընտրությունների ժամանակ կուսակցությունը ստացավ քվեների 14,07%-ը՝ պառլամենտում ունենալով 34 անդամ, որոնցից երկուսը՝ բուլղար¹⁸⁶: 2007 թ. Բուլղարիայի՝ Եվրոպական միությանը անդամակցելուց հետո երկիրը պետք է 17 պատգամավոր գործուղեր Եվրոմիության խորհրդարան և դրանցից երեքը՝ Ֆիլիպ Հյուսեինովան, Չեթին Քազաքը, Նեջմի Ալին ԻԱՇ-ից էին: Բացի այդ, ԻԱՇ-ի անդամները կարևոր պաշտոններ են զբաղեցնում ընդհանրապես պետական ապարատում: Պետք է շեշտել, որ բուլղարաթուրքերի քաղաքական առաջընթացում ակնհայտ է Թուրքիայի աջակցությունը, որ առավել բացահայտ երևում է խորհրդարանական ընտրությունների ժամանակ, երբ Թուր-

¹⁸⁵ Նահապետյան Հ., Բուլղարաթուրքեր. Անկարայի 5-րդ շարապյունը, 21-րդ դար, թիվ 1 (15), Երևան, 2007, էջ 87:

¹⁸⁶ Նահապետյան Հ., Թուրք-ադրբեջանական կառույցների հակահայ գործունեությունը, էջ 90:

քիայից ավտոբուսներով Բուլղարիա են տեղափոխվում երկքաղաքացիություն ունեցող թուրքեր, ովքեր մասնակցում են ընտրություններին:

Այսպիսով, Բուլղարիայի թուրքական համայնքը տարբերվում է եվրոպական մնացած համայնքներից իր հնությամբ ու ձևավորման առանձնահատկություններով: Բացի այդ, ի տարբերություն այլ եվրոպական համայնքների, որոնք նոր-նոր են մտնում ընդունող երկրի քաղաքական-հասարակական կյանք, բուլղարաթուրքերը բավական կարևոր դեր են խաղում Բուլղարիայի քաղաքական կյանքում, տիրապետում որոշում ընդունելու լուրջ լծակների: Թեև շատ գիտնականներ հակված են այն մտքին, որ բուլղարաթուրքերը Օսմանյան շրջանում իսլամացված բուլղարացիների սերունդներն են, սակայն փաստ է, որ ներկայումս այս մարդիկ իրենց գրեթե լիովին իդենտիֆիկացնում են թուրքերի հետ, Բուլղարիայում զբաղվում այս երկրի շահերի լուրջինգով:

ԹՈՒՐՔԱԿԱՆ ՍՓՅՈՒՌՔԻ ՀԱԿԱՀԱՅ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՈՐՈՇ ԴՐՄԵՎՈՐՈՒՄՆԵՐ

Թուրքական իշխանությունները մշտապես փորձել են երկրից դուրս բնակվող իրենց քաղաքացիներին կամ ազգակիցներին ներգրավել և օգտագործել արտաքին ու ներքին քաղաքական մի շարք խնդիրների լուծման գործում և այդ համատեքստում հատկապես կարևորվում են Հայոց Ցեղասպանության ժխտումը և միջազգային ճանաչման դեմ պայքարը, Քրդական հարցը, Կիպրոսի խնդիրը: Այս նպատակով Թուրքիայի դիվանագիտական ներկայացչություններն, իսկ ավելի ուշ նաև պաշտոնական Անկարայի կողմից ֆինանսավորվող ամենատարբեր հասարակական կազմակերպությունները բավական ակտիվ գործունեություն են ծավալել: Արտերկրում բնակվող թուրքերի և ազգակից հասարակությունների վարչության ստեղծումից հետո այս գործունեությունը սկսեց ավելի համակարգված, ուղղորդված բնույթ կրել և ներկայումս իրականացվում է ոչ միայն քաղաքական, հասարակական, այլ նաև կրթական ու մշակութային մակարդակով:

Հատկապես վերջին շրջանում թուրք քաղաքական գործիչները ավելի ու ավելի հաճախ են շեշտում արտերկրի թուրքական համայնքների կարևորությունը հակահայկական քաղաքականության իրագործման հարցում: Օրինակ, Հայոց ցեղասպանության 100-ամյակի նախօրեին Թուրքական ասիական ռազմավա-

րական հետազոտությունների կենտրոնի¹⁸⁷ (Türk Asya Stratejik Araştırmalar Merkezi, այսուհետ՝ TASAM) կազմակերպած «Թուրքական սփյուռք և թյուրքական աշխարհ. 2023 թ. տեսլականը» («Türk Diasporası ve Türk Dünyası Vizyon 2023») խորագրով վեհաժողովին մասնակցող DEİK-ից ներկայացուցիչներից, ձեռնարկատերերից, գիտնականներից, նախարարներից, քաղաքական գործիչներից ոմանք ուշագրավ անդրադարձներ կատարեցին հայկական հարցին: Մասնավորապես՝ Հայոց ցեղասպանության 100-ամյակի, հայկական սփյուռքի լոբբիստական գործունեության մասին է խոսել ԱԶԿ պատգամավորներից մեկը՝ Իդրիս Բալը: Վերջինս, անդրադառնալով 2015 թ. ընդառաջ հայկական կողմի իրականացրած գործողություններին՝ առանձնացրել է ՀՀ Սփյուռքի նախարարության ստեղծումը, խոսել է ԱՄՆ-ում և Ֆրանսիայում հայկական համայնքների գործունեության մասին, ինչպես նաև նշել է, որ այս ամենի պատասխանը Թուրքիան տալու է 2023 թ.՝ հանրապետության հռչակման 100-ամյակին: Ըստ պատգամավորի, այդ ժամանակ Թուրքիան լինելու է աշխարհի ամենազարգացած տնտեսությունն ունեցող 20 երկրներից:

¹⁸⁷ TASAM-ը թուրքական ամենահայտնի ուղեղային կենտրոններից մեկն է, որն անցկացնում է տնտեսական, մշակութային, պատմական, քաղաքական, իրավական, սոցիալական, միջուկային հետազոտություններ, իր տասնամյա գործունեության ընթացքում կարողացել է կապեր հաստատել տարբեր երկրների, այդ թվում Ադրբեջանի, Վրաստանի, ՌԴ և միջինասիական հանրապետությունների հեղինակավոր «մտավոր կենտրոնների» հետ, ստեղծել համագործակցության ձևաչափեր: Այս մասին ավելի մանրամասն տե՛ս՝ **Միմավորյան Ա.**, Հայկական խնդիրները Երրորդ համաշխարհային թյուրքական ֆորումի օրակարգում,

http://www.noravank.am/arm/issues/detail.php?ELEMENT_ID=12886

րից մեկը, ինչին հասնելու համար կարևորվում է թուրքական դիասպորայի դերը¹⁸⁸:

Առանձնահատուկ ուշադրության է արժանի մեկ այլ մոլի հայատյաց, «XXI դարի Թուրքիա» ինստիտուտի նախագահ Ումիթ Օզդաղի¹⁸⁹ ելույթը: Օզդաղն առաջնային է համարում թուրքամետ դիրքորոշում ունեցող գիտնականների ֆինանսավորումը ամբողջ աշխարհում: Ըստ նրա այս ուղղությամբ արված բոլոր արժեքավոր աշխատանքները պետք է տպագրվեն աշխարհի տարբեր լեզուներով: Գրագետ և հասկանալի թարգմանության համար գիտնականներին պետք է տրամադրվեն կրթաթոշակներ, հնարավորություններ ստեղծել վերջիններիս համար մի քանի տարի ապրել այս կամ այն երկրում, սովորել տեղի լեզուն և արխիվներից օգտվելով՝ կատարել ուսումնասիրություններ: Հետաքրքիր է, որ թուրք գիտնականը, խոսելով թարգմանվող գրականությունից, նշում է, որ Հայաստանում այս աշխատանքն իրականացվում է բարձր մակարդակով, իսկ թուրքերը զիջում են անգամ PKK-ականներին: Իր ելույթում մի առանձին կետ էլ Օզդաղը նվիրել է ԼՂ հիմնախնդրին և Խոջալուի «ցեղասպանությանը»: Ըստ նրա, թուրք-ադրբեջանական համատեղ ուժերով պետք է հասնել «ցեղասպանության» ճանաչմանը, ինչի համար գիտնականը առաջ է քաշում վերոնշյալ առաջարկությունները

¹⁸⁸ **Bal İ.**, Ermeniler 2015 İçin Hazırlanıyor..., Türk Diasporası ve Türk Dünyası Vizyon 2023, İstanbul, Tasam Yayınları, 2014, s. 270.

¹⁸⁹ Մինչ այդ Օզդաղը ղեկավարել է «Հայկական հետազոտությունների ինստիտուտը», որը գործել է Թուրքիայի Եվրասիական ռազմավարական հետազոտությունների կենտրոնին կից, սակայն 2009թ. ինստիտուտը փակվել է: Տե՛ս, **Միմավորյան Ա., Հովյան Վ., Ղանալանյան Տ.**, Արտերկրի հայագիտական կենտրոնները. ներուժի գնահատում, Նորավանք ԳԿՀ, Երևան 2014, էջ 32:

Շարունակելով Դավութօղլուի առաջ քաշած օսմանյան սփյուռքի թեզը, առաջարկել է հայկական սփյուռքի ներկայացուցիչներին թուրքական քաղաքացիություն տալ, անձնագրեր բաժանել, թուրքական ազգանուններ առաջարկել և հնարավորություն տալ մասնակցել Թուրքիայում անցկացվող ընտրություններին: Ըստ գիտնականի, այս կերպ հայերի և ամբողջ մարդկության աչքերում հանդուժողականության տիպար դառնալով՝ պետք է շարունակել ակտիվ աշխատել, որպեսզի մինչ 2023 թ. Հայոց Ցեղասպանության վերաբերյալ բոլոր քննարկումները դադարեն: Այս նպատակով Օզդադն առաջ է քաշում երեք փուլից բաղկացած գործողությունների պլան՝

1. *մինչև 2016 թ.* դադարեցնել Հայաստանի քաղաքական, հոգեբանական հարձակումները
2. *մինչ 2018 թ.* դադարեցնել հայկական «պնդումների» համաշխարհային տարածումը
3. *մինչև 2023 թ. կատարվելիք քայլեր.* նախատեսվում է Ֆրանսիայում, Լիտվայում, Գերմանիայում Հայոց ցեղասպանությունը ճանաչող օրինագծերը չեղյալ հայտարարել:

Այս պետությունների ընտրությունը պատահական չէ. Ֆրանսիայի դեպքում կարևոր դեր է խաղալու երկրի առաջնորդը, Գերմանիայում նպատակն իրականացվելու է թուրքական ուժեղ լոբբինգի միջոցով, իսկ Լիտվայում էլ դա հնարավոր է դառնում թույլ համակարգի շնորհիվ¹⁹⁰:

Ըստ թուրք գիտնականի, Լիտվայում հնարավոր է հասնել իրենց նպատակին՝ շատ քիչ աշխատանք տանելով: Նախևառաջ պետք է Թուրքիա հրավիրել լիտվական լրատվամիջոցներին,

¹⁹⁰ **Özdağ Ü.**, «2015 Yaklaşınca», Türk Diasporası ve Türk Dünyası Vizyon 2023, İstanbul, Tasam Yayınları, 2014, s. 287.

մամլո ասուլիս անցկացնել, ներկայացնել «իրականությունը»: Լիտվերեն հարուստ գրականություն պետք է թարգմանել, ցույց տալ տնտեսական հարաբերությունների պոտենցիալը, կրթաթոշակներ սահմանել լիտվացի գիտնականների համար:

Օգդադը նշում է, որ պետք է գիտնականների փոքր խումբ գործուղել Ալժիր և Մարոկկո, որտեղ վերջիններս հետազոտություններ կանցկացնեն ու փաստեր կբերեն Ֆրանսիայի իրականացրած ցեղասպանության վերաբերյալ: Այդ հարցը օրակարգ բերելու համար թուրքական կողմը պետք է կրթաթոշակներ սահմանի նաև ալժիրցի և մարոկկացի գիտնականների համար: Հակաֆրանսիական գործողությունների շրջանակներում վերջինս առաջարկում է Ֆրանսիայի հետ դիվանագիտական հարաբերությունները իջեցնել ամենացածր մակարդակի, պայքարել Թուրքիայում ֆրանսիական դպրոցների բացման դեմ, իսկ արդեն գործողների վրա ավելի ուժող վերահսկողությունն սահմանել: Օգդադը խորհուրդ է տալիս նաև դադարեցնել Ֆրանսիայի հետ զինվորական վարժանքները: «Գիտնականի» մտքի թռիչքն այսքանով չի սահմանափակվում այդքանով, այլև ընդգրկում են տրամաբանությունից դուրս այլ հարթություններ ևս: Այսպես, Ֆրանսիայի հայամետ քաղաքականությունը կասեցնելու համար Օգդադն առաջարկում է հակաֆրանսիական քարոզչություն սկսել Իտալիայում, հիշեցնելով նրանց, որ Գարիբալդիի հայրենիքը՝ ներկայումս Ֆրանսիայի կազմում գտնվող Նիցցան պատմական իտալական տարածք է և դրանով Ֆրանսիայի նկատմամբ ատելություն սերմանել իտալացիների մոտ:

Որքան էլ զարմանալի թվա, նման առաջարկ տեսնում ենք նաև 2005–2009 թթ. Գերմանիայի դաշնային խորհրդարանի, ԵՄ խորհրդարանի պատգամավոր, Գերմանիայի թուրք-ադրբեջա-

նական միության ղեկավար, ազգությամբ թուրք Հաքքը Քեսքինի ելույթում: Քեսքինը Օզդադից էլ առաջ անցնելով առաջարկում է մանրակրկտորեն ուսումնասիրել ոչ միայն Ֆրանսիայի, այլ նաև ԱՄՆ-ի, Հոլանդիայի, Բելգիայի, Մեծ Բրիտանիայի, Գերմանիայի պատմության էջերը և փաստեր գտնել տվյալ երկրների իրականացրած ցեղասպանական արարքների վերաբերյալ¹⁹¹, պետք է հատուկ դոկտորական կրթաթոշակ սահմանվի օտարերկրացի այն երիտասարդների համար, ովքեր պաշտպանում են թուրքական պաշտոնական թեզը Բացի այդ, թուրք գիտնականները պետք է շարունակեն ուսումնասիրություններ անցկացնել ԱՄՆ-ի, ՌԴ-ի, Անգլիայի, Ֆրանսիայի, Գերմանիայի, Հայաստանի արխիվներում: Քեսքինի խոսքերով, Թուրքիան պետք է շարունակի հանդես գալ հայ և թուրք գիտնականների համատեղ խմբի ստեղծման առաջարկով, քանի որ սա բարձրացնում է Թուրքիայի վարկանիշն արտասահմանում: Իր ելույթում նախկին պատգամավորը հատուկ կետ է առանձնացվում նաև հայկական սփյուռքի լոբբիստական գործունեության հակադարձմանը, որի հարցում կարևոր համարում թյուրքական աշխարհի դերը¹⁹²: Ըստ Քեսքինի, թյուրքական պետությունները Թուրքիային և Ադրբեյ-

¹⁹¹ **Keskin H.**, «Ermeni Diasporaları Vizyon 2015 ve Türk Diasporaları Vizyon 2023», Türk Diasporası ve Türk Dünyası Vizyon 2023, İstanbul, 2014, s. 275.

¹⁹² Ադրբեյջանը և Թուրքիան թյուրքական աշխարհին ուղղված հակահայկական քարոզչություն են վարում Իսլամական կոնֆերանս կազմակերպության շրջանակներում ևս, կոնֆերանսի յուրաքանչյուր հանդիպման ժամանակ խոսելով «ազդեցող Հայաստանի» և «կեղեքված ադրբեյջանցի գաղթականների» մասին: Այս մասին ավելի մանրամասն տե՛ս **Փաշայան Ա.**, Իսլամական կոնֆերանս կազմակերպություն. Նպատակները, կառուցվածքը, դիրքորոշումը Ղարաբաղյան հարցի նկատմամբ, ՀՀ ԳԱԱ Արևելագիտության ինստիտուտ, Երևան, 2003:

ջանին պետք է աջակցեն նաև ԼՂ հիմնահարցի լուծման հարցում¹⁹³:

Նմանատիպ ձևակերպումներ տեղ գտան նաև 2013 թ. ապրիլին հիսուն երկրների ներկայացուցիչների մասնակցությամբ տեղի ունեցած «Թյուրքական պետությունների երկրորդ համաշխարհային ֆորումում», որի աշխատանքների արդյունքում ձևավորված «Ստամբուլյան հռչակագրի» նախագծում ոչ միայն ողջ աշխարհի թուրքերին, այլ նաև բոլոր թյուրքալեզու ժողովուրդներին կոչ էր արվում միավորվել և մինչ 2023 թ հայերին տալ արժանի պատասխան¹⁹⁴: Ուշագրավ է, որ Հայոց Ցեղասպանությունից ոչ պակաս կարևորություն է տրվում Ղարաբաղի հարցի կարգավորման, ինչպես նաև Խոջալուի դեպքերը որպես ցեղասպանություն ներկայացնելու անհրաժեշտությանը: Ադրբեջանը և Թուրքիան թյուրքական աշխարհին ուղղված հակահայկական քարոզչություն են վարում նաև Իսլամական կոնֆերանս կազմակերպության շրջանակներում¹⁹⁵:

Ելույթների և հայտարարությունների մարտաշունչ ոգուն հակառակ գործնական քայլերը չի կարելի շատ արդյունավետ համարել: Հակահայկական գործողություններն որպես կանոն սահմանափակվում են դեկլարատիվ բնույթի հայտարարություններով կամ դեսպանատների դիմաց կազմակերպվող փոքրա-

¹⁹³ **Keskin H.**, «Ermeni Diasporaları Vizyon 2015 ve Türk Diasporaları Vizyon 2023», Türk Diasporası ve Türk Dünyası Vizyon 2023, İstanbul, Tasam Yayınları, 2014, s. 275:

¹⁹⁴ Türk Diasporası'ndan 2015 atağı, <http://www.aksam.com.tr/siyaset/turk-diasporasindan-2015-atagi/haber-188406>

¹⁹⁵ Այս մասին մանրամասն տե'ս **Փաշայան Ա.**, Իսլամական կոնֆերանս կազմակերպություն. նպատակները, կառուցվածքը, դիրքորոշումը Ղարաբաղյան հարցի նկատմամբ, Երևան, 2003:

մասշտաբ բողոքի ակցիաներով: Թուրքական ակցիաների ոչ մեծ էֆեկտիվությունը պատճառը մի կողմից հայկական համայնքների ավելի կազմակերպված գործելակերպն է, մյուս կողմից՝ թուրքական համայնքների ինտեգրվածության ցածր մակարդակն ու եվրոպական երկրներում նրանց նկատմամբ ի սկզբանե առկա բացասական տրամադրվածությունը: Կարծում ենք, պակաս կարևոր չէ նաև այն հանգամանքը, որ եվրոպական ազատական մթնոլորտը հնարավորություն է ստեղծում թուրք մտավորականության համար առավել մանրամասն ծանոթանալ պատմական իրողություններին և արդյունքում ճշմարտությունը գիտակցելով՝ այլևս չմասնակցել դրա խեղաթյուրմանը: Այս առումով ուշագրավ է, որ մի շարք վերլուծաբանների կարծիքով ադրբեջանական լոբբիի հակահայկական ուղղվածությունը ոչ միայն Ղարաբաղի, այլ նաև Հայոց ցեղասպանության խնդրի շուրջ թուրքականից անհամեմատ ավելի ակտիվ է: Այնուամենայնիվ, դիտարկենք Եվրոպայում գործող թուրքական կառույցների հակահայկական գործունեության մի շարք դրվագներ:

Ակնհայտ է, որ Գերմանիայում որպես թուրքերի ամենամեծ համայնք ունեցող երկրում քարոզչական աշխատանքները պետք է բավականին ակտիվ լինեին: Այս երկրում տարիներ շարունակ իրականացվող հակահայկական գործունեությանն ուշագրավ մանրամասների ենք հանդիպում Գերմանիայում պաշտոնավարած թուրք դիվանագետ Ջան Ունվերի «35 տարվա միգրացիան և իմ բյուրոկրատական վկայությունները» հուշագրության մեջ: Թուրք դիվանագետը գրում է, որ Հայոց ցեղասպանության հարցը տարիներ շարունակ՝ հատկապես արտաքին քաղաքականության համատեքստում, գլխացավանք է եղել Թուրքիայի համար: Նա վրդովմունքով նշում է, որ Գեր-

մանիան, երկար տարիներ այս խնդրի շուրջ լռություն պահպանելուց հետո, 2005 թ. Բունդեսթագում Ցեղասպանությունը դատապարտող բանաձև է ընդունել: Ավելին, դեռևս 1990-ականների կեսերին գերմանական իշխանությունները հրաժարվել են արտոնել «հայ ոճրագործ» Ս. Թեիլերյանի կողմից գնդակահարված Թալեաթ փաշայի սպանության վայրում հիշատակի միջոցառում անցկացնելը¹⁹⁶, միննույն ժամանակ Բրեմեն քաղաքում տեղական իշխանությունների աջակցությամբ կառուցվել է Ցեղասպանության զոհերի հիշատակին նվիրված հուշարձան: Նման քայլերի վերաբերյալ Ջ. Ունվերի բողոքին ի պատասխան գերմանացի պատգամավորներից մեկն ասել է, որ հնարավոր չէ հաշվի չառնել Գերմանիայում բնակվող 3000 հայերի զգացմունքները: Թուրք դիվանագետի անսահման ցասումն առաջացրած այս պատասխանը ստիպել է նրան գալ այն եզրահանգման, որ գերմանացիների վերաբերմունքն «անարդար ու կողմնակալ» է¹⁹⁷: Ջ. Ունվերը գրքում անդրադառնում է նաև ԱՍՄԼԱ-ի կողմից սպանված թուրք դիվանագետների հիշատակին նվիրված երեկոներին, որոնց, սակայն, շարունակական բնույթ տալ չի հաջողվել¹⁹⁸:

Հաշվի առնելով այս ամենը՝ զարմանալի չէ, որ Գերմանիայում թուրքերի կողմից Հայոց ցեղասպանության հարցի ըն-

¹⁹⁶ 2006 թ. մարտի 18-ին «Թալեաթ փաշա» նախաձեռնությունը ևս մեկ անգամ փորձեց հակահայկական երթ կազմակերպել: Բեռլինի անվտանգության քաղաքային վարչությունը արգելեց հանրահավաքը: Ի վերջո տեղի ունեցած հավաքին ըստ ըստ գերմանական աղբյուրների, մասնակցել էր ընդամենը 800 թուրք:

¹⁹⁷ Մանրամասն տես **Ünver C. O.**, Otuzbeş yıllık göç ve bürokrasi tanıklıklarım, Ankara, 2008, ss. 271-273:

¹⁹⁸ Նույն տեղում., էջ 231-232:

կալումը միանշանակ չէ: Թեև եվրոպական ամենատարբեր կառույցներում ներկայացված թուրք պաշտոնյաների մեծ մասն ունի ընդգծված հակահայկական դիրքորոշում, Ջ. Ունվերի որակավորմամբ «վիրավորական և սարսափելի» է այն, որ որոշ թուրք պատգամավորներ ձայներ ստանալու համար ընդունում են Հայոց ցեղասպանության իրագործման փաստը կամ չեզոք դիրք գրավում¹⁹⁹: Այս համատեքստում թուրքերի համար թերևս խիստ ցավալի է, որ գերմանական Կանաչների առաջնորդ Ջ. Օզդեմիրը չի կիսում Հայոց ցեղասպանության հարցի շուրջ թուրքական պաշտոնական տեսակետը: Դեռ 2001 թ. Օզդեմիրը մի առիթով նշել էր, որ Թուրքիան, կորցնելով իր հայ քաղաքացիներին, կորցրեց իր խճանկարի շատ կարևոր մասը, իսկ 2015 թ. մարտին Հայաստան իր այցի ընթացքում նա ծաղկեպսակ դրեց Ծիծեռնակաբերդում և կոչ արեց Թուրքիայի նախագահ Ռ. Թ. Էրդողանին բացել հայ-թուրքական սահմանը: Քաղաքական գործչի այս քայլին ի պատասխան Անկարայից նրան հայկական ծագում վերագրեցին²⁰⁰:

